



COMMISSIONER FOR HUMAN RIGHTS  
COMMISSAIRE AUX DROITS DE L'HOMME



ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ստրասբուրգ, 10-ը մարտի, 2015թ.

Թիվ՝  
CommDH(2015)2

*Հայերեն ոչ պաշտոնական թարգմանություն*

**EMBARGO UNTIL 10 MARCH 2015 AT 11 AM (PARIS TIME)**

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ

**ՆԻԼՍ ՄՈՒՅԺՆԻԵԿՍԻ**

**ԶԵԿՈՒՅՑԸ**

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-9  
ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՀԵՏՈ

|   |           |
|---|-----------|
| ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ.....   | 3         |
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....  | 6         |
| <b>1 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....</b>                            | <b>8</b>  |
| 1.1 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....   | 8         |
| 1.1.1 ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ .....  | 8         |
| 1.1.2 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿՈՂՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ .....   | 10        |
| 1.1.3 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԸ .....  | 16        |
| 1.1.4 ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԸ .....   | 19        |
| 1.2 ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԾԱՆՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.....   | 21        |
| 1.2.1 ԻՐԱԿԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ .....   | 22        |
| 1.2.2 ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ .....  | 28        |
| <b>2 ԿԱՆԱՆՑ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ .....</b>  | <b>32</b> |
| 2.1 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴԱՇՏԸ .....   | 33        |
| 2.1.1 ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹԴԹԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....   | 33        |
| 2.1.2 ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....   | 33        |
| 2.1.3 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐՈՂՆԵՐԸ.....   | 36        |
| 2.2 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ .....  | 39        |
| 2.2.1 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԵԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 40   |           |
| 2.2.2 ԱՐԿԱ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ.....  | 41        |
| 2.3 ՆԱԽԱԾՆՆԴՅԱՆ ՓՈԼՈՒՄ ՍԵՌԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՒՅԹԸ.....   | 48        |
| 2.4 ԻՐԱԿԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻԶՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ.....   | 49        |
| 2.4.1 ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶՔԱԴԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ..... | 49        |
| 2.4.2 ԼՐԱՏՎԱՄԻԶՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ.....   | 51        |

## ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Հանձնակատար Նիլս Մույժնիեկսը և իր թիմը Հայաստան այցելեցին 2014 թվականի հոկտեմբերի 5-9: Այցի շրջանակում Հանձնակատարը քննարկումներ ծավալեց արդարադատության իրականացման և արդարադատության համակարգում մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կանանց իրավունքներին և գենդերային հավասարությանն առնչվող խնդիրների շուրջ:

Սույն զեկույցը վերաբերում է հետևյալ հիմնական խնդիրներին.

### Արդարադատության իրականացումը

Իրավունքի գերակայության անբավարար քաղաքական և գործուն համակարգը, որում լիարժեքորեն ներկառուցված է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքը: Հանձնակատարը խրախուսում է արդարադատության ոլորտի բարեփոխման ուղղությամբ գործադրվող ջանքերը և ընդգծում է, որ ոլորտի անկախությունը, անկողմնակալությունը և արդյունավետությունը եվրոպական ստանդարտներին համապատասխան բարձրացնելու համար անհրաժեշտ է գործադրել բոլոր ջանքերը: Սա հույժ կարևոր է արդար դատաքննության իրավունքների իրագործման և դատական համակարգի նկատմամբ հանրության վստահությունը, ինչպես նաև իրականության մեջ դատական համակարգի բարեփոխումների փաստացի ազդեցությունը երաշխավորելու տեսանկյունից: Հանձնակատարը խորհուրդ է տալիս վերանայել դատավորների ընտրության, նշանակման, առաջխաղացման և ազատման ընթացակարգերը, որպեսզի ավելի լավ ապահովվի դատական իշխանության անկախությունը գործադիրից: Մասնավորապես, այդ հարցերում որոշումներ կայացնելու հիմնական իրավասությունը պետք է առավել որոշակիորեն վերապահել դրանց համար պատասխանատու դատական մարմնին, իսկ Հանրապետության Նախագահի հայեցողական լիազորությունները պետք է սահմանափակել՝ Եվրոպայի խորհրդի հանձնարարականներին համահունչ:

Հանձնակատարին մտահոգում են ստացված տեղեկություններն այն մասին, որ դատական բարձր ատյանները միջամտում են ավելի ցածր ատյանների դատավորների աշխատանքին: Անհատ դատավորներից յուրաքանչյուրի անկախությունը ողջ դատական համակարգի անկախության անհրաժեշտ նախադրյալն է: Առանձին դատավորներին պետք է թույլատրել, որպեսզի նրանք գործերով դատական ակտերը կայացնեն անկախորեն՝ թե՛ արտաքին սուբյեկտների, թե՛ ավելի բարձր դատական ատյանների կողմից գործադրվող ցանկացած անպատշաճ ազդեցությունից ազատ: Պետք է գոյություն ունենան արդարադատության իրականացման շրջանակում դատավորների գործունեության նկատմամբ անհարկի միջամտության դեպքերին արձագանքելու արդյունավետ մեխանիզմներ: Կարգապահական վարույթները չպետք է օգտագործվեն որպես ազդեցության կամ վրեժխնդրության գործիք դատավորների նկատմամբ, և դրանց կամայական օգտագործումը կանխելու համար պետք է ներդրվեն անհրաժեշտ երաշխիքներ: Հանձնակատարը հարկ է համարում նշել, որ բոլոր ատյաններում աճում է դատարանների ծանրաբեռնվածությունը, և ընդգծում է Հայաստանի դատական իշխանությանը բավարար ռեսուրսներ տրամադրելու և վեճերի լուծման նպատակով ոչ դատական մեխանիզմների կիրառությանը նախապատվություն տալու կարևորությունը:

Դատավարության կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները հույժ կարևոր են արդար դատաքննության իրավունքների ապահովման տեսանկյունից: Հայաստանյան իշխանությունները, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգի բոլոր սուբյեկտները պարտավոր են ապահովել նշված սկզբունքների լիարժեք կիրառությունը պրակտիկայում: Նկատելով, որ դատախազությունը շարունակում է գերակա դիրք զբաղեցնել Հայաստանի քրեական արդարադատության համակարգում, Հանձնակատարը լրջագույնս ընդգծում է դատավորի՝ որպես անկողմնակալ «մրցավարի» կարևոր դերակատարումը: Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին երաշխավորել պաշտպանության իրավունքը և անվճար իրավաբանական օգնության իրավունքը ոստիկանության կողմից ազատագրվելու սկզբից եթե, ինչպես նաև քննության և դատական վարույթների ողջ ընթացքում: Անվճար իրավաբանական օգնության համակարգը պետք է կատարելագործել: Դատական, պետական և քաղաքական սուբյեկտները պետք է խղճամտորեն հարգեն անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նախքան իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումը: Հանձնակատարին մտահոգում է այն հանգամանքը, որ մինչդատական կալանքը հաճախակի է կիրառվում Հայաստանում՝ որպես խափանման միջոց: Հանձնակատարը վերահաստատում է, որ մինչդատական կալանքը պետք է լինի ոչ թե նորմ, այլ՝ բացառություն, և կոչ է անում հայաստանյան

իշխանություններին անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնել օրենսդրության մեջ և պրակտիկայում, որպեսզի հնարավոր դառնա ազատագրվում չառաջացնող խափանման միջոցների արդյունավետ կիրառումը: Ավելին, լրացուցիչ միջոցառումներ է պետք իրականացնել իրավական և գործնական հարթություններում ապահովելու համար քրեական արդարադատության համակարգում հարգանքն առ երեխաների իրավունքները:

### **Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքների արդյունավետ քննությունը**

Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին միջազգային չափանիշներին համահունչ փոփոխել խոշտանգման սահմանումը քրեական օրենսգրքում, որպեսզի ապահովվի խոշտանգման գործողությունների ստույգ որակաորումն ու պատիժը: Հանձնակատարին լրջորեն մտահոգում են շարունակաբար ստացվող տեղեկությունները ոստիկանության և իրավապահ այլ մարմինների կողմից խոշտանգման և դաժան վերաբերմունքի մասին, ինչպես նաև դրա հետ կապված անպատժելիության խնդիրը, որոնց նպատակը հաճախ ինքնախոստովանական ցուցմունք ստանալն է: Պաշտոնատար անձանց մասնակցությամբ տեղի ունեցած բռնության քննության համար պատասխանատու քննչական մարմինների անկախության բարձրացման ուղղությամբ գործադրված ջանքերն ի գիտություն ընդունելով հանդերձ, Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ էլ ավելի բարձրացնել Հատուկ քննչական ծառայության անկախությունը և ավելացնել վերջինիս կարողությունները, որպեսզի դաժան վերաբերմունքի հնարավոր գործերով ապացույցների հավաքման հարցում Հատուկ քննչական ծառայությունն ստիպված չլինի դիմել ոստիկանների օգնությանը: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի եվրոպական կոմիտեի («CPT») կողմից 2013 թվականի ապրիլին Հայաստան կատարած այցելության զեկույցը մի շարք կոնկրետ հանձնարարականներ է պարունակում, որոնք ուղղված են հաշվետու գործելակերպի ապահովմանը, մասնավորապես՝ մարմնական վնասվածքների մասին հաղորդելու գործող ընթացակարգի և դաժան վերաբերմունքի հնարավոր դեպքերի կապակցությամբ դատախազների գործողությունների բարելավմանը:

Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ օրենքում և պրակտիկայում բարելավել խոշտանգումից և դաժան վերաբերմունքից պաշտպանող երաշխիքները: Նա ընդգծում է քրեական գործերի քննչական մեթոդների կատարելագործման կարևորությունը, որոնցով հնարավոր կլինի ավելի շատ օգտագործել իրեղեն ապացույցները և ավելի քիչ հենվել ինքնախոստովանական ցուցմունքների և հարցաքննությամբ ստացված տվյալների վրա: Լուրջ մտահոգության տեղիք տվող հաջորդ խնդիրը վերաբերում է այն տեղեկություններին, որոնց համաձայն դատարանները հենվում են ենթադրյալ հարկադրանքի պայմաններում ստացված ապացույցների վրա, հատկապես երբ դա հիմք է ծառայում մեղադրական դատավճռի համար: Հանձնակատարը ողջունում է իրավական այն նորմերի ընդունումը, որոնք հնարավոր են դարձնում արդարադատության ձախողման և իրավապահ մարմինների անօրինական գործողությունների դեպքում պատճառված ոչ նյութական վնասի դիմաց հատուցում պահանջելը: Ինչ վերաբերում է 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան տաս դեպքերի քննությանը, ապա Հանձնակատարը մտահոգությամբ նշել է, որ այն դեռևս արդյունքներ չի տվել:

Հանձնակատարը բարձր է գնահատում հայաստանյան իշխանությունների գործադրած ջանքերը՝ զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման իրավունքի կապակցությամբ վաղուց առկա հիմնախնդիրն արդյունավետորեն լուծելու ուղղությամբ: Այնուհանդերձ, նա ավստանալով է նկատում, որ Հայաստանի բանակում շարունակվել են արձանագրվել ոչ մարտական պայմաններում տեղի ունեցող բռնարարքները, որոնք երբեմն հանգեցրել են մահվան: Նա կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ լրացուցիչ թափ հաղորդել այս խնդիրը լուծելու ուղղությամբ նրանց կողմից գործադրվող ջանքերին, մասնավորապես՝ արդյունավետորեն քննելով մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հնչեցվող բողոքները: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տուժողների ընտանիքների և հանրության վստահության մակարդակի բարձրացմանը: Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ իրագործել Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրով նախատեսված այն միջոցառումները, որոնք ուղղված են բանակում մարդու իրավունքների վիճակի բարելավմանը:

### **Կանանց իրավունքները և գենդերային հավասարությունը**

Գենդերային հավասարությունը մարդու իրավունքների հիմնարար սկզբունք է, իսկ կանանց իրավունքները՝ մարդու համընդհանուր իրավունքների անօտարելի, անքակտելի և անբաժանելի

մասը: Հանձնակատարի այցի շրջանակում արձանագրվեց, որ հասարակությունում կանանց հավասար կարգավիճակի ապահովման և սեռի հիմքով խտրականության և կողմնակալության դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանում դեռևս զգալի անելիքներ կան: Հանձնակատարը հարկ է համարում վերհիշել այդ ոլորտներում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները և ողջունում է գենդերային խնդիրներին վերաբերող գործողությունների որդեգրումը և «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» 2013 թվականի օրենքի ընդունումը՝ որպես քայլեր ճիշտ ուղղությամբ, որոնք անհրաժեշտ է գործնականում իրագործել: Հաջորդ կարևոր քայլը կլինի խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի ընդունումը՝ որպես հիմք ընդունելով այն աշխատանքը, որն արդեն իսկ կատարվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից՝ խորհրդակցելով այլ գործող անձանց հետ, և հաշվի առնելով միջազգային ստանդարտները և հաջողված փորձը: Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ կոնկրետ քայլեր ձեռնարկել հանրային և քաղաքական կյանքում կանանց դերի բարձրացման և նրանց հնարավորությունների ավելացման ուղղությամբ, ինչպես նաև կրթական համակարգում բացառել գենդերային կողմնակալությունը և կարծրատիպերը:

Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը երբևէ չեն կարող ընդունելի լինել, և Հանձնակատարը քաղաքական և համայնքային գործիչներին քաջալերում է՝ աներկբա ուղերձ հղել այդ կապակցությամբ: Նա ընդգծում է ընտանեկան բռնության դեմ պայքարի հատուկ օրենսդրություն ընդունելու և Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու կարևորությունը: Մտահոգությամբ նշելով, որ Հայաստանում արդյունավետորեն չեն հայտնաբերվում, քննվում, քրեական հետապնդման ենթարկվում և պատժվում ընտանեկան բռնության դեպքերը՝ Հանձնակատարն իշխանություններին կոչ է անում շտկել այդ թերությունները և արդյունավետորեն պաշտպանել բռնությունից տուժողներին: Նա նաև հարկ է համարում նշել, որ նախաձեռնության փուլում սեռի ընտրության երևույթը, որի ապացույցը նորածին տղաների և աղջիկների թվերի մեջ արական սեռի նորածինների անհամամասնական գերակշռությունը, նույնպես վկայում է գենդերային կողմնակալության գոյության մասին, և իշխանություններին կոչ է անում միջոցներ ձեռնարկել այս երևույթի դեմ պայքարելու ուղղությամբ:

Ամփոփելով, Հանձնակատարն ընդգծում է քաղաքացիական հասարակության սուբյեկտների, մասնավորապես կանանց իրավունքների բնագավառում գործող իրավապաշտպան կազմակերպությունների և իրավապաշտպանների կողմից իրականացվող աշխատանքի կարևորությունը, և շեշտում է, որ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի նրանք կարողանան իրենց գործունեությունն իրականացնել ահաբեկումից և սպառնալիքներից ազատ միջավայրում: Դիտարկվող այս խնդիրները ներկայումս արդեն ավելի կարևոր տեղ են զբաղեցնում հանրային քննարկումների օրակարգում, և կարելի է լրատվամիջոցներին քաջարելել, որպեսզի նրանք էլ ավելի ակտիվ դեր ստանձնեն կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ հանրության իրազեկության և ընկալման մակարդակի բարձրացման գործում:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուլմիեկսը (հետայսու՝ «Հանձնակատար») 2014 թվականի հոկտեմբերի 5-9 այցելեց Հայաստան: <sup>1</sup> Այցը հիմնականում վերաբերում էր երկու տեսակի հիմնախնդիրների՝ արդարադատության իրականացմանը և արդարադատության համակարգում մարդու իրավունքների պաշտպանությանը (սույն զեկույցի I բաժինը) և կանանց իրավունքներին ու գենդերային հավասարությանը (II բաժինը):
2. Երևանում Հանձնակատարը հանդիպեց Հանրապետության Նախագահ պրն. Սերժ Սարգսյանին և Վարչապետ պրն. Հովիկ Աբրահամյանին: Ազգային ժողովում նա հանդիպեց Նախագահ պրն. Գալուստ Սահակյանին, ինչպես նաև խորհրդարանական տարբեր խմբակցությունների ներկայացուցիչների: Իշխանության գործադիր ճյուղից Հանձնակատարը հանդիպեց նաև Պաշտպանության նախարար պրն. Սեյրան Օհանյանին, Արտաքին գործերի նախարար պրն. Էդվարդ Նալբանդյանին, Արդարադատության նախարար պրն. Հովհաննես Մանուկյանին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պրն. Արտեմ Ասատրյանին և ոստիկանապետ պրն. Վլադիմիր Գասպարյանին: Դատական համակարգի ներկայացուցիչներից նա հանդիպեց Սահմանադրական դատարանի նախագահ պրն. Գագիկ Հարությունյանին, Վճռաբեկ դատարանի նախագահ պրն. Արման Մկրտումյանին, Գլխավոր դատախազ պրն. Գևորգ Կոստանյանին, Հատուկ քննչական ծառայության պետ պրն. Վահրամ Շահինյանին, Զինվորական դատախազ պրն. Արտավազ Հարությունյանին, Դատական դեպարտամենտի ղեկավար պրն. Կարեն Փոլադյանին, ինչպես նաև Դատավորների միության ներկայացուցիչներին և փաստաբանների պալատի անդամներին: Բացի դրանից, Հանձնակատարը քննարկումներ ունեցավ Մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսման) պրն. Կարեն Անդրեասյանի, քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության ներկայացուցիչների հետ:
3. Հանձնակատարն այցելեց հյուսիսային Լոռու մարզում գտնվող Վանաձոր քաղաքը, որտեղ հանդիպեց տարածքային և տեղական իշխանությունների ներկայացուցիչների, Լոռու առաջին ատյանի դատարանի դատավորի և քաղաքացիական հասարակության մի շարք գործիչների հետ:
4. Այցի շրջանակում Հանձնակատարը քննարկեց նաև [Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների 2014-2016թթ.](#) ծրագիրը (հետայսու՝ «ՄԻՊՄԾ»), որը սահմանված որոշակի ժամկետներում կոնկրետ միջոցառումների իրագործում նախատեսող համապարփակ փաստաթուղթ է, որն ընդունվել է Հայաստանի կառավարության կողմից 2014թ. հունիսին՝ 2012 թվականին ընդունված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության հիման վրա: Ողջունելով հանդերձ Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ծրագրի ընդունումը, միջազգային կազմակերպությունները՝ ներառյալ Եվրոպայի խորհուրդը, կոչ են արել Հայաստանի իշխանություններին ընդլայնել դրա շրջանակը և ավելի հուժկու քայլեր ձեռնարկել մի շարք ոլորտներում, օրինակ՝ խտրականության դեմ պայքարի ոլորտում և խոշտանգումների և դաժան վերաբերմունքի արդյունավետ քննության ոլորտում: <sup>2</sup> Հանձնակատարն այն կարծիքի է, որ Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ծրագիրը հարկ է համարել շարունակական աշխատանքային գործընթաց և կոչ է անում իշխանություններին՝ ծրագիրը բարելավելու նպատակով անցկացնել դրա իրագործման ընթացիկ վերանայում՝ քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Այս գործընթացում օգտակար կարող են լինել [Հանձնակատարի նյութերը մարդու իրավունքներին առնչվող համակարգային աշխատանքների վերաբերյալ](#)՝ ներառյալ մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրերի վերաբերյալ: <sup>3</sup>

<sup>1</sup> Հանձնակատարին ուղեկցում էին Հանձնակատարի աշխատակազմի ղեկավարի տեղակալ տկն. Բոյանա Ուրունովան և խորհրդական տկն. Քրիստին Աստղիկ Մարդիրոսյանը:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ծրագրի մեկնարկի կապակցությամբ արված համատեղ [հայտարարությունը](#), հունիս, 2014թ.:

<sup>3</sup> Տե՛ս Ազգային մակարդակում մարդու իրավունքների ներդրման համակարգային աշխատանքների վերաբերյալ [հանձնարարականը](#), Մարդու իրավունքների հանձնակատար, 18-ը փետրվարի, 2009թ., Մարդու

5. Հանձնակատարը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին Ստրասբուրգում և Երևանում, այցի կազմակերպմանը ցուցաբերած օժանդակության համար: Նա նաև երախտապարտ է Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակին ցուցաբերված աջակցության համար: Հանձնակատարը ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլոր գրուցակիցներին՝ իր հետ տեղեկություններ և կարծիքներ փոխանակելու համար:

EMBARGO UNTIL 10 MARCH 2015 AT 11 AM (PARIS TIME)

---

իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրերի մշակման և իրագործման թեմայով աշխատանքային հանդիպման [եզրակացությունները](#), 27-ը մայիսի, 2014թ.:

# 1 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ<sup>4</sup>

## 1.1 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Հայաստանում գործում են առաջին աստիճանի ընդհանուր իրավասության 16 դատարաններ, որոնցից 7-ը՝ Երևանում, 9-ը մարզերում: Գործում է նաև վարչական դատարանը: Վերաքննիչ դատարանները երեքն են (քաղաքացիական, քրեական և վարչական): Բարձրագույն աստիճանի դատարանը՝ Վճռաբեկ դատարանը, Դատական օրենսգրքում ամրագրված չափորոշիչների համաձայն վերանայում է վերաքննիչ դատարանների դատական ակտերը: Սահմանադրական դատարանը, որը բաղկացած է 9 անդամներից, պատասխանատու է սահմանադրական արդարադատության իրականացման, մասնավորապես՝ գործադիրի և օրենսդիրի ակտերի սահմանադրականության որոշման, վավերացումից առաջ միջազգային պայմանագրերի համապատասխանության գնահատման, հանրաքվեներին և նախագահական ու խորհրդարանական ընտրություններին առնչվող վեճերի լուծման և քաղաքական կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումների կայացման համար: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններն ընդլայնեցին Սահմանադրական դատարանին դիմելու իրավունք ունեցողների շրջանակը՝ թույլատրելով ֆիզիկական անձանց և օմբուդսմանին, օրինակ, մարդու իրավունքներին առնչվող գանգատներ ներկայացնել:
7. Արդարադատության խորհուրդն (հետայսու՝ «ԱԽ») այն մարմինն է, որի իրավասությանն են վերապահված դատավորների և դատարանների նախագահների ընտրությանը, ինչպես նաև դատավորների մասնագիտական առաջխաղացմանը և դատավորների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառությանն առնչվող տարաբնույթ խնդիրներ: Դատավորների թեկնածությունների ցուցակը և ծառայողական առաջխաղացման ցուցակը կազմելուց և հաստատման համար Հանրապետության Նախագահին ներկայացնելուց գատ, ԱԽ-ն պատասխանատու է Վճռաբեկ դատարանի նախագահի և պալատների նախագահների պաշտոններում, ինչպես նաև վերաքննիչ դատարանների նախագահների, առաջին աստիճանի և մասնագիտացված դատարանների նախագահների պաշտոններում թեկնածուներ առաջարկելու համար: ԱԽ-ն իրավասու է դատավորներին ենթարկել կարգապահական պատասխանատվության, առաջարկ ներկայացնել Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, նրան քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին (այդ թվում՝ որոշակի դեպքերում դատավորին կալանավորելու մասին): ԱԽ-ն կազմված է քվեարկելու իրավունք ունեցող 13 անդամից՝ ներառյալ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավոր, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնական: Վճռաբեկ դատարանի նախագահն ունի ԱԽ-ի ղեկավարման իրավասություններ և նախագահում է նրա նիստերը, սակայն առանց քվեարկելու իրավունքի:

### 1.1.1 ՂԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ

<sup>4</sup> 2007 թվականին կատարված այցի շրջանակում նախկին Հանձնակատարն անդրադարձել էր, ի թիվս այլոց, դատական համակարգին և իրավապահ մարմինների գործունեությանն առնչվող հիմնախնդիրներին: Նա, մասնավորապես, ընդգծել էր դատական անկախության մակարդակը բարձրացնելու և դատավորների նկատմամբ անպատշաճ ազդեցությունը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը և մտահոգություն էր հայտնել մրցակցային դատավարության և կողմերի հավասարության սկզբունքների նկատմամբ հարգանքի՝ պրակտիկայում անբավարար լինելու առնչությամբ: Նա, մասնավորապես, մտահոգություն էր հայտնել ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի լայն տարածվածության, ինչպես նաև այդ գործելակերպին ներգրավված պաշտոնյաների անպատժելիության հարակից պրոբլեմի կապակցությամբ: Հանձնատության համար տե՛ս Թոմաս Համարբերգի [գեկույցը](#) 2007 թվականի հոկտեմբերի 7-11 Հայաստան կատարած այցից հետո, 21-61-րդ պարբերություններ, ինչպես նաև Հանձնարարականները՝ 6-9-րդ պարբերություններ, էջեր 31-32:



8. 1990-ականների երկրորդ կեսին Հայաստանում 1995 թվականի Սահմանադրությամբ ներդրված դատական բարեփոխումների առաջին փուլի արդյունքում ստեղծվեց եռաստիճան դատական համակարգ, որը ներառում էր առաջին աստիճանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Այդ ժամանակ ստեղծվեց նաև Սահմանադրական դատարանը, որը սկսեց գործել 1996 թվականից: Դատական բարեփոխումների երկրորդ փուլն սկիզբ առավ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներով և ներառեց, մասնավորապես, դատական օրենսգրքի ընդունումը 2007 թվականին:
9. Դատական բարեփոխումների երրորդ փուլը մեկնարկեց [Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի](#) հիման վրա: Հռչակելով արդար և արդյունավետ դատական իշխանության ապահովման նպատակը, Ռազմավարական ծրագրով նախատեսվում է բարելավել դատավորների ընտրության կարգը և ներդնել դատավորների գործունեության գնահատման և առաջխաղացման օբյեկտիվ չափանիշներ և ընթացակարգեր: Նախատեսվում է բարելավել դատավորների ինքնակառավարումը, օրինակ՝ սահմանափակելով դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը: Ռազմավարական ծրագրով նախատեսվում է նաև բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը: Զուգահեռաբար մշակվում են նոր քրեական օրենսգրքը և նոր քրեական դատավարության օրենսգրքը: Նոր քրեական օրենսգրքը միտված է պատիժների համաչափության սկզբունքի ներդրման բարելավմանը և ազատագրված ալլընտրանքների նախատեսմանը: Բարեփոխումների փաթեթի բաղադրիչներից է նաև դատախազության անկախության և հաշվետվողականության բարձրացումը՝ ներառյալ նշանակման և կարգապահական վարույթների իրականացման ընթացակարգերի վերանայման միջոցով: Անվճար իրավաբանական օգնության համակարգի որակը և արդյունավետությունը բարելավելու նպատակով նախատեսվում է նաև բարեփոխել Հանրային պաշտպանի գրասենյակը (տե՛ս ստորև՝ 41-րդ պարբերությունը):
10. Հորիզոնում տեսանելի են նաև դատական համակարգի նոր փոփոխություններ: 2013 թվականին ձևավորվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը, որը 2014 թվականի հոկտեմբերին ընդունել է [Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը՝ Հայեցակարգի նախագծի առաջին տարբերակի վերաբերյալ Վենետիկյան հանձնաժողովի եզրակացությունը](#) ստանալուց հետո: Նոր հայեցակարգում շեշտադրվում է դատական իշխանության «գործառնության, կառուցվածքային, նյութական ու սոցիալական անկախությունը», առաջարկվում է մեծացնել ԱԽ-ի դերը և արդյունավետությունը և առաջադրվում են արդարադատության համակարգի կառուցվածքի հնարավոր փոփոխությունները, մասնավորապես՝ դատական աստիճանների մեկ մակարդակը վերացնելու միջոցով:
11. [Եվրոպայի խորհրդի Հայաստանում իրականացվող միջոցառումների ծրագրով](#) (2012-2014թթ.), որն ընդունվել է 2012 թվականի մարտին, նախատեսվել են դատական իշխանությանն առնչվող մի շարք ծրագրեր, որոնք նպատակ ունեն, մասնավորապես, ամրապնդել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի («ՄԻԵԿ») և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («Դատարան») դատական նախադեպի կիրառությունն ազգային մակարդակում: Վերջերս մեկնարկել է արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդման ծրագիրը, որը ներառել է դատական հաշվետվողականության բարելավման և էթիկայի ու կարգապահության նորմերի և պրակտիկայի բարելավման միջոցով հանրության վստահության մակարդակի բարձրացման բաղադրիչ: Ծրագրի նպատակներից է նաև խորհրդատվական աջակցությունը հայաստանյան իշխանություններին դատավորների ընտրության, նշանակման, առաջխաղացման և կարգապահական տույժերի ենթարկելու ոլորտներում եվրոպական ստանդարտների կիրառության բարելավման գործում:
12. Որոշ հասարակական կազմակերպություններ պնդում են, թե բարեփոխումներն անհրաժեշտ է իրականացնել առավել համապարփակ ձևով: Մասնավորապես, առանձին դատավորների գործունեության գնահատման (որը կատարվում է Դատավորների ընդհանուր ժողովի դատավորների գնահատման հանձնաժողովը) վերջերս ներդրված (դատական օրենսգրքում 2014 թվականի հունիսին կատարված փոփոխությունների հիման վրա) համակարգի փոխարեն ՀԿ-ները ցանկալի են համարել դատարանների գործունեության մշտադիտարկման և գնահատման համապարփակ համակարգի ստեղծումը, որը

կանդիդատուհան, ի թիվս այլ հարցերի, վարույթների տևողությանը, գործերի կուտակումներին, աշխատանքի արտադրողականությանը և ռեսուրսներին՝ այդպիսի առավել ճշգրտորեն «քարտեզագրելով» իրավիճակը և բացահայտելով բարելավման կարիք ունեցող ուղղությունները:

### 1.1.2 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

#### *Դատական համակարգի ինքնակառավարումը*

13. Արդարադատության խորհրդից զատ (տե՛ս վերը՝ 7-րդ պարբերությունը), դատավորների ինքնակառավարման գործառույթը Հայաստանում վերապահված է հետևյալ մարմիններին. Դատավորների ընդհանուր ժողովին և Դատարանների նախագահների խորհրդին (ԴՆԽ): Դատավորների ընդհանուր ժողովը, որն ստեղծվել է 2005 թվականին, կազմված է երկրի բոլոր դատավորներից: Այն դատական համակարգի ինքնակառավարման բարձրագույն մարմինն է, որի ժողովները գումարվում են տարին առնվազն մեկ անգամ: ԴՆԽ-ի (ստեղծվել է 1998 թվականին) կազմում են առաջին ատյանի դատարանների, վարչական դատարանի, վերաքննիչ դատարանների նախագահները և վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահները: ԴՆԽ-ն, որը նախագահում է վճռաբեկ դատարանի նախագահը, նիստեր է գումարում առնվազն եռամսյակը մեկ անգամ և կատարում է մի շարք կարևոր գործառույթներ՝ ներառյալ բյուջեի, մարդկային ռեսուրսների, դատավորների վերապատրաստման և գործերի կառավարման առնչությամբ: ԴՆԽ-ն ղեկավարում է նաև դատական ղեկարգման մեթոդի աշխատանքը, որը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է դատական մարմինների գործառույթների և լիազորությունների իրականացումը: Դատական ղեկարգման կարևոր դեր է կատարում արդարադատության իրականացման առօրյա աշխատանքներում՝ նյութատեխնիկական օժանդակություն ցուցաբերելով դատարանների գործունեությանը:
14. Դատական համակարգի ինքնակառավարման գործառույթի՝ տարբեր մարմինների միջև բաժանվածության փաստը կարող է ազդել դատական համակարգի արդյունավետության և թափանցիկության վրա: Եվրոպայի խորհրդի փորձագետները մտահոգություններ են հայտնել ԱԽ-ի և ԴՆԽ-ի զուգահեռ գործունեության վերաբերյալ՝ առաջարկելով ԴՆԽ-ի գործառույթները ԱԽ-ին փոխանցելու միջոցով երաշխավորել շարքային դատավորների ներգրավումն ինքնակառավարման գործընթացներին:<sup>5</sup> Հանձնակատարի զրուցակիցներից մի քանիսը նույնպես ընդգծեցին դատական համակարգի ինքնակառավարումն ամրապնդելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, փաստարկեցին, որ դատավորների ընտրության, նշանակման, առաջխաղացման և կարգապահական վարույթների իրականացման ոլորտներում ԱԽ-ի որոշումներ կայացնելու իրավասություններն անհրաժեշտ է ավելի լավ երաշխավորել պրակտիկայում՝ այդպիսի ամրապնդելով դատական անկախությունը:

#### *Դատավորների անկախությանը և անկողմնակալությանն առնչվող խնդիրները*

15. Դատավորների անկախությունը և անկողմնակալությունը հույժ կարևոր են արդարադատության համակարգի արդյունավետության և արդար դատաքննության իրավունքի՝ գործնականում արդյունավետ իրականացման համար: Ավելին, դրանք դատական համակարգի նկատմամբ հանրության վստահության ապահովման և դատական բարեփոխումների իրական արդյունքների ապահովման պարտադիր և էական նախադրյալներ են:
16. Հայաստանի Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նախատեսվում է դատավորների անկախությունն արդարադատությունն իրականացնելիս: Այնուամենայնիվ, Հանձնակատարին մտահոգում են շարունակաբար ստացվող տեղեկություններն այն մասին,

<sup>5</sup> Տե՛ս Դատական համակարգի անկախության հարցերով աշխատանքային խմբի [գեկույցը](#), Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն, մարտ, 2013թ., էջեր 19 և 20:

որ դատական համակարգը գործնականում բավարար չափով անկախ չէ ո՛չ արտաքին անձանցից, ինչպիսիք են գործադիր իշխանության կենտրոնական և տեղական օղակները (այդ թվում՝ իրավապահ մարմինները), ո՛չ դատական համակարգի ներքին սուբյեկտներից, հատկապես ավելի բարձր ատյանի դատարանների դատավորներից:

17. Հանձնակատարի տարբեր գրուցակիցները փաստարկեցին, օրինակ, որ դատավորների ընտրության, նշանակման, առաջխաղացման և լիազորությունների դադարեցման ընթացակարգերը չեն նպաստում դատավորի անկախությանը, մասնավորապես՝ պայմանավորված այդ գործընթացներում Հանրապետության Նախագահի գերակա դերակատարմամբ: Ինչպես նշվեց վերևում (7-րդ պարբերություն), Աև-ն կազմում և Նախագահի հաստատմանն է ներկայացնում բոլոր դատարանների դատավորների թեկնածությունների ցուցակը, այսինքն՝ Նախագահը ներգրավված է և՛ թեկնածությունների ցուցակի հաստատմանը, և՛ Աև-ի առաջադրած թեկնածությունների վերջնական նշանակմանը: Աև-ն նաև Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակը: Աև-ն նաև առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին: Ունենալով հանդերձ Աև-ի ցանկացած առաջարկը մերժելու իրավունքը, Նախագահը միաժամանակ օրենքի ուժով պարտավոր չէ բացատրել իր որոշման պատճառները, և գոյություն չունի Նախագահի որոշումները վիճարկելու ընթացակարգ: Եվրոպայի խորհրդի փորձագետները, ովքեր վերլուծել են այս համակարգը, եզրակացրել են, որ դատավորների ընտրության և առաջխաղացման գործընթացում Նախագահի վճռորոշ դերը համահունչ չէ եվրոպական ստանդարտներին: Փորձագետները համարում են, որ այդ ընթացակարգում Նախագահի դերը պետք է սահմանափակել ֆորմալ դերակատարմամբ, իսկ որոշումների կայացման բուն իրավասությունը պետք է պատկանի դատական համակարգի ինքնակառավարման մարմիններին:<sup>6</sup>
18. Աև-ի առաջադրած դատավորին նշանակելու կամ մերժելու՝ Հանրապետության Նախագահի անսահմանափակ հայեցողական լիազորությունը նշվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ դատական օրենսգրքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ 2014 թվականի եզրակացության մեջ: Վենետիկի հանձնաժողովը եզրակացրել է, որ դա կարող է կոնֆլիկտ առաջացնել Նախագահի և Աև-ի միջև՝ այդպես դժվարություններ առաջացնելով դատարանների պատշաճ գործունեության առումով, և վնաս պատճառելով դատական համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությանը: Վերոհիշյալ ռիսկերը և նշանակման և առաջխաղացման գործընթացի քաղաքականացման վտանգը կարելի է նվազեցնել՝ վերանայելով Նախագահի իրավասությունները, օրինակ՝ սահմանելով Աև-ի առաջարկի մերժումը պատճառաբանելու պարտավորությունը կամ նման մերժման հնարավորությունը սահմանափակելով միայն որոշակի հիմքերով:<sup>7</sup>
19. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի համաձայն, արգելվում է օրենքով չնախատեսված միջամտությունը դատավորի գործունեությանը: Այդ միջամտությունն առաջացնում է քրեական պատասխանատվություն,<sup>8</sup> իսկ քաղաքացիական ծառայողների

<sup>6</sup> Տե՛ս Դատական համակարգերի անկախության հարցերով աշխատանքային խմբի [գեկույցը](#), Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն, մարտ, 2013թ., էջեր 38-40:

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ [եզրակացությունը](#)՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 2014թ. հունիսին, 34-րդ և 35-րդ պարբերություններ: Համեմատության համար տե՛ս նաև Վենետիկյան հանձնաժողովի [գեկույցը](#)՝ «Դատավորների նշանակումը» խորագրով, մարտ, 2007թ., 13-րդ և 14-րդ պարբերություններ:

<sup>8</sup> Տե՛ս քրեական օրենսգրքի 332.1 հոդվածը. «Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Հոդված 332.3. «Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

ներգրավման դեպքում կարգապահական պատասխանատվություն: Դատավորը պարտավոր է արդարադատության իրականացման հետ կապված իր գործունեությանը միջամտելու մասին տեղեկացնել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Եթե այդ հանձնաժողովը պարզի, որ տեղի է ունեցել անօրինական միջամտություն դատավորի գործունեությանը, այն պարտավոր է խնդիրը ներկայացնել իրավասու մարմինների ուշադրությանը, որպեսզի մեղավորը պատասխանատվության ենթարկվի: Այնուհանդերձ, Հանձնակատարը տեղեկացվեց, որ դատական օրենսգրքով նախատեսված մեխանիզմը գործնականում չի աշխատում, և ըստ երևույթին, նման դեպքերի համար քրեական հետապնդում տեղի չի ունեցել:

20. Թեպետ կաշառքների և նվերների միջոցով անհարկի ազդեցությունը դատավորների նկատմամբ օրենքով արգելված է, դրա մասին բազմաթիվ տեղեկություններ են ներկայացվել տարբեր գեկույցներում,<sup>9</sup> մասնավորապես՝ օմբուդսմանի կողմից 2013 թվականին հրապարակված [հատուկ գեկույցում](#): Չեկույցում նկարագրվել են կոռուպցիայի մեխանիզմները, և բացահայտվել է, որ կոռուպցիան ազդում է դատական բոլոր ատյանների վրա, ընդ որում՝ դատավորները կաշառքներ են վերցնում տարբեր մակարդակներում: «Թրանսպարենսի ինթերնեշնլ» կազմակերպության կողմից «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի» 2013 թվականի հետազոտության տվյալներով, հարցվածների 69%-ը Հայաստանում դատական համակարգը համարել են կոռումպցված կամ ծայրահեղ կոռումպցված, իսկ հարցվածների 18%-ը նշել են, որ անձամբ իրենք առնվազն մեկ անգամ կաշառել են դատական պաշտոնյաներին:
21. Հանձնակատարին մտահոգում են նաև ավելի բարձր դատական ատյանների, առավելապես՝ վճռաբեկ դատարանի կողմից առանձին դատավորների նկատմամբ գործադրվող ճնշումների մասին ստացված բազմաթիվ տեղեկությունները: Արդար դատաքննության իրավունքի մասին օմբուդսմանի 2013 թվականի [հատուկ գեկույցում](#) առանձնակի քննադատություն էր հնչեցվել այս առումով, և անդրադարձ էր արվել այսպես կոչված «զոնալ դատավորների» ինստիտուտին, որի համաձայն վճռաբեկ դատարանի դատավորները «վերահսկողություն» են իրականացնում մի շարք դատավորների նկատմամբ, ովքեր պետք է նրանց հետ «համաձայնեցնեն» համապատասխան դատական գործերով կայացվող դատական ակտերը: Չեկույցում նշվել էր, թե դատավորները պարտավոր են ցուցումներ ստանալ վճռաբեկ դատարանի «զոնալ դատավորից» նախքան զգայուն գործերով դատական ակտեր կայացնելը: 2014 թվականի մարտին հրապարակված համատեղ եզրակացության մեջ Վենետիկյան հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների տնօրինությունը նույնպես անդրադարձել էին ավելի բարձր ատյանների դատարանների դատավորների կողմից ավելի ցածր ատյանների դատարանների դատավորների նկատմամբ ոչ պատշաճ և արտառոց միջամտության մասին շարունակաբար ստացվող տեղեկություններին:<sup>10</sup>
22. Այս համատեքստում հարկ է նշել, որ Նախարարների կոմիտեի թիվ (2010)12 [հանձնարարականում](#) շեշտադրվել է, որ «հիերարխիկ դատարանակազմությունը չպետք է սասանի դատական անկախությունը», և որ «վերադաս դատարանները չպետք է ցուցումներ տան դատավորներին առանձին գործերով վերջիններիս կողմից կայացվելիք դատական ակտերի մասին, բացառությամբ երբ դա արվում է նախնական վարույթների դատական ակտերի տեսքով, կամ երբ օրենքի համաձայն որոշումներ են կայացվում իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ»:<sup>11</sup> Նմանապես, Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է, որ դատավորների անհատական անկախության սկզբունքն անհամադրելի է դատական ակտերի կայացման գործունեության շրջանակում դատավորների

<sup>9</sup> Տե՛ս [Հայաստանի դատական բարեփոխումների ինդեքսը](#), Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, ղեկտեմբեր, 2012թ., էջ 60:

<sup>10</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների տնօրինության համատեղ [եզրակացությունը](#) Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, մարտ, 2014թ., 13-րդ պարբերություն:

<sup>11</sup> Տե՛ս Նախարարների կոմիտեի [CM/Rec\(2010\)12](#) հանձնարարականն անդամ պետություններին դատավորների վերաբերյալ. անկախությունը, արդյունավետությունը և պարտավորությունները, 22-րդ և 23-րդ պարբերություններ:

սուբորդինացիայի երևույթի հետ:<sup>12</sup> Ավելին, առանձին գործերով ավելի բարձր աստիճանների դատարանների դատավորներից, ովքեր կարող են հետագայում որոշումներ կայացնել նույն գործերի վերաբնության շրջանակում, ցուցումներ ստանալը կողմերին զրկում է իրենց գործերի անկախ վերանայման իրավունքից, որը կարող է հանգեցնել ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի և ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտումների:<sup>13</sup>

23. Դատավորներն անձեռնմխելի են պաշտոնական լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար, և անձեռնմխելիության այդ երաշխիքը տարածվում է նաև թոշակի անցած դատավորների նկատմամբ: Դատավորը չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես ամբաստանյալ կամ վարչական վարույթի ենթարկվել, բացառությամբ երբ դա տեղի է ունենում Հանրապետության Նախագահի համաձայնությամբ՝ Աև-ի ներկայացմամբ: Թեպետ անցյալում մտահոգություններ են հնչեցվել այն առումով, որ դատավորներին կարող են իրենց պաշտոնական լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար պատժելու նպատակով ձերբակալել կամ սպառնալ քրեական հետապնդմամբ, դատավորների անձեռնմխելիությունն ըստ երևույթին ընդհանուր առմամբ հարգվում է:<sup>14</sup> Հատուկ քննչական ծառայության ղեկավարի տեսանկյունն այն է (տե՛ս 68-րդ պարբերությունը), որ դատավորի դեմ քրեական մեղադրանք ներկայացնելը դժվար է, քանի որ դատական անձեռնմխելիության մակարդակը համեմատաբար բարձր է:
24. Հանձնակատարը մի շարք տեղեկություններ ստացավ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների՝ որպես նրանց որոշումների վրա ազդելու նպատակ հետապնդող ճնշման լծակի կամ նրանց պատժելու նպատակ հետապնդող մեխանիզմի անարդար կիրառության մասին: Օրինակ, առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մնացականյանը, ով բավարարել են ամբաստանյալին գրավով ազատ արձակելու մասին միջնորդությունը, վճռաբեկ դատարանի նախագահի միջնորդությամբ Աև-ի կողմից նրա նկատմամբ հարուցված կարգապահական վարույթից հետո 2011 թվականի հուլիսին հեռացվել էր դատավորի պաշտոնից Հանրապետության Նախագահի կողմից: Աև-ն եզրակացրել էր, որ գրավ կիրառելու միջնորդությունը բավարարելու մասին դատավոր Մնացականյանի որոշումը պատճառաբանված չէր եղել, և դա հիմք էր ծառայել նրան դատավորի պաշտոնից հեռացնելու համար. դիտորդները քննադատել էին այդ մոտեցումը՝ այն համարելով կամայական:<sup>15</sup>
25. Վերը նշված դեպքից զատ, օմբուդսմանի [հատուկ զեկույցում](#) արձանագրվել էին Աև-ի կողմից կարգապահական վարույթների կամայական և ոչ միատեսակ կիրառության մի քանի այլ դեպքեր՝ բացառությամբ, որ միևնույն խախտումների կամ միևնույն հանգամանքների պարագայում որոշ դատավորների նկատմամբ հարուցվում են կարգապահական վարույթներ, ուրիշների նկատմամբ՝ ոչ: Օմբուդսմանի զեկույցում մտահոգություն էր հայտնվել կարգապահական վարույթներում վճռաբեկ դատարանի նախագահի ազդեցիկ ներգրավվածության մասին: Օմբուդսմանի զեկույցի համաձայն, դեպքերի մեծամասնության համար (2010-2013 թվականներին Աև-ի կարգապահական հանձնաժողովի նախաձեռնած 51 կարգապահական վարույթներից 31-ում) հիմք էր ծառայել վճռաբեկ դատարանի նախագահի նամակը, և միայն 10 դեպքերում էր վարույթը հարուցվել փաստաբանի, քաղաքացու կամ այլ մարմնի միջնորդության հիման վրա: Չեկույցում նաև արձանագրվել էր, որ Աև-ի կարգապահական հանձնաժողովը, ի հակադրություն Սահմանադրական դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման, բավարար հիմնավորում չէր ներկայացրել անձի միջնորդության հիման վրա կարգապահական վարույթի հարուցումը մերժելու համար:

<sup>12</sup> Տե՛ս Դատական համակարգի անկախության վերաբերյալ [զեկույցը](#), «Մաս I. Դատավորների անկախությունը», Վենետիկի հանձնաժողով, 2010թ., 72-րդ պարբերություն:

<sup>13</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների տնօրինության համատեղ [եզրակացությունը](#) Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, մարտ, 2014թ., 18-րդ պարբերություն:

<sup>14</sup> Տե՛ս [Հայաստանի դատական բարեփոխումների ինդեքսը](#), Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, դեկտեմբեր, 2012թ., էջ 48:

<sup>15</sup> Տե՛ս «[Վրդարդատության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում](#)», Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Նորվեգիայի հելսինկյան կոմիտե, ՖԻԴՀ, դեկտեմբեր, 2012թ., էջ 10:

26. 2014 թվականի հունիսին դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում փոխվել է կարգապահական վարույթների համակարգը: Փոփոխված տարբերակի համաձայն, արդարադատության նախարարը, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, իսկ վճռաբեկ դատարանի դատավորին առնչվող դեպքերում՝ վճռաբեկ դատարանի նախագահն իրավունք ունեն դատական օրենսգրքով նախատեսված հիմքերով կարգապահական վարույթ հարուցել և իրականացնել դատավորների նկատմամբ:<sup>16</sup> Կարգապահական վարույթը հարուցած անձը կամ մարմինը կարող է կամ կարճել վարույթը, կամ կարգապահական տույժ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել ԱԽ-ին: ԱԽ-ն այդ հիմքով կամ կիրառում է կարգապահական տույժ,<sup>17</sup> կամ՝ կասեցնում վարույթը: Կարգապահական տույժ կիրառելու մասին ԱԽ-ի որոշումը վերջնական է և կարող է վերանայվել միայն նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում: Տարբեր գրուցակիցներ՝ ներառյալ Եվրոպայի խորհրդի փորձագետները և ՀԿ-ներ, կարծիք են հայտնել, թե արդարադատության նախարարի մասնակցությունը դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթներին, որոնք պետք է վերաբերեն ինքնակառավարման ոլորտին, համատեղելի չէ դատական անկախության սկզբունքին:<sup>18</sup>

*Արդարադատության համակարգի արդյունավետությանն առնչվող խնդիրները*

27. Դատական դեպարտամենտի տվյալներով, Հայաստանում դատավորների հաստիքների թիվը 230-ն է (2014 թվականի հոկտեմբերի դրությամբ դրանցից զբաղեցված էին 216-ը), և Հայաստանի 100,000 բնակչին բաժին է ընկնում 6-7 դատավոր ցուցանիշ, որը զիջում է եվրոպական պետությունների մեծ մասի ցուցանիշներին («CEPEJ»-ի տվյալներով, եվրոպական միջինը 21 է, դասակարգմամբ միջինացված արժեքը՝ 17.7<sup>19</sup>): Դատական համակարգի տարբեր անձինք ընդգծել են, որ անհրաժեշտ է ավելացնել դատական համակարգի ռեսուրսները՝ ներառյալ դատավորների և դատական ծառայողների թիվը, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել գործերի թվի աճող ծանրաբեռնվածության խնդիրը և ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը:

28. Հանձնակատարը տեղեկացվեց, որ զգալիորեն աճել է բոլոր աստիճանների դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունը (օրինակ՝ առաջին աստիճանի դատարաններ ներկայացված քաղաքացիական գործերի թիվը գրեթե կրկնապատկվել է նախորդ տարվա ընթացքում), մինչդեռ համամասնորեն չի ավելացվել դատավորների թիվը, բացառությամբ վարչական դատարանների դատավորների: Դատավորների միությունը նշեց, որ այդ պայմաններում աճում է դատավորների կողմից սխալներ թույլ տալու հավանականությունը, և որպես հետևանք՝ նաև կարգապահական վարույթների նկատմամբ նրանց խոցելիությունը: Ընդգծվեց նաև դատավորների համար աշխատավարձի և սոցիալական արտոնությունների համարժեք մակարդակը պահպանելու կարևորությունը:

<sup>16</sup> 153-րդ հոդվածով նախատեսված հիմքերն են. (1) արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ, (2) դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը, (3) դատավորի կողմից դատական օրենսգրքով կամ «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր համար սահմանված պարտականությունները չկատարելը, (4) էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը:

<sup>17</sup> Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերն են. (1) նախազգուշացում, (2) նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, (3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, (4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը:

<sup>18</sup> Տե՛ս «Արդարադատության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում», Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Նորվեգիայի հելսինկյան կոմիտե, ՖԻԴՀ, դեկտեմբեր, 2012թ., էջ 10: Տե՛ս Դատական համակարգերի անկախության հարցերով աշխատանքային խմբի [գեկույցը](#), Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն, մարտ, 2013թ., էջեր 98-101:

<sup>19</sup> Արդարադատության արդյունավետության հարցերով եվրոպական հանձնաժողով (անվանման տարածված հապավումը՝ «CEPEJ»):

29. Հանձնակատարը հարկ է համարում հիշեցնել, որ դատական համակարգի արդյունավետության և աշխատանքի օգտակար գործողության գործակցի բարձրացման ուղղությամբ կարևոր քայլ կարող է լինել նաև վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների ներդրումը: Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում վեճերի լուծման համար կիրառվող այլընտրանքային մեխանիզմների տարբեր ձևերից (անդամ պետությունների մեծ մասը կիրառում են առնվազն երեք տարբեր ձևեր), Հայաստանն ըստ երևույթին կիրառում է միայն արբիտրաժը:<sup>20</sup>

*Եզրակացություններ և հանձնարարականներ*

30. Իրավունքի գերակայության անքակտելի բաղադրիչ է ուժեղ և արդյունավետորեն գործող արդարադատության համակարգը, որում լիովին ներդրված է մարդու իրավունքների հարգման սկզբունքը: Հանձնակատարը քաջալերում է արդարադատության ոլորտը բարեփոխելու ուղղությամբ իշխանությունների կողմից ներկայումս գործադրվող ջանքերը և ընդգծում, որ բոլոր ջանքերն անհրաժեշտ է գործադրել՝ եվրոպական ստանդարտներին համահունչ արդարադատության համակարգի անկախությունը, անկողմնակալությունը և արդյունավետությունն ամրապնդելու ուղղությամբ:
31. Հանձնակատարը խորհուրդ է տալիս վերանայել դատավորների ընտրության, նշանակման, առաջխաղացման և ազատման ընթացակարգերը, որպեսզի ավելի լավ ապահովվի դատական իշխանության անկախությունը գործադիրից: Մասնավորապես, այդ հարցերում որոշումներ կայացնելու հիմնական իրավասությունը պետք է առավել որոշակիորեն վերապահել դրանց համար պատասխանատու դատական մարմնին՝ Արդարադատության խորհրդին, իսկ Հանրապետության Նախագահի հայեցողական լիազորությունները պետք է սահմանափակել՝ Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի այլ փորձագետների տված խորհուրդներին համահունչ: Համապատասխան օրենսդրությամբ անհրաժեշտ է, օրինակ, ամրագրել այն հիմքերը, որոնցով Նախագահը կարող է մերժել դատավորների նշանակման, առաջխաղացման և ազատման մասին Արդարադատության խորհրդի առաջարկությունները, ինչպես նաև սահմանել Արդարադատության խորհրդի առաջարկությունը մերժելու մասին Նախագահի ցանկացած որոշումը պատճառաբանելու պարտավորությունը:
32. Հանձնակատարին մտահոգում են ստացված տեղեկություններն այն մասին, որ դատական բարձր ատյանները միջամտում են ավելի ցածր ատյանների դատավորների աշխատանքին: Անհատ դատավորներից յուրաքանչյուրի անկախությունը ողջ դատական համակարգի անկախության անհրաժեշտ նախադրյալն է: Առանձին դատավորներին պետք է թույլատրել, որպեսզի նրանք գործերով դատական ակտերը կայացնեն անկախորեն՝ ազատ լինելով թե՛ արտաքին սուբյեկտների (օրինակ՝ գործադիրի), թե՛ ավելի բարձր դատական ատյանների կողմից գործադրվող ցանկացած անպատշաճ ազդեցությունից: Պետք է գոյություն ունենան արդարադատության իրականացման շրջանակում դատավորների գործունեության նկատմամբ անհարկի միջամտության դեպքերի հայտնաբերման արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև նման միջամտության համար պատասխանատվության պատշաճ գնահատման և համարժեք պատժամիջոցների կիրառման արդյունավետ մեխանիզմներ:
33. Կարգապահական վարույթները չպետք է օգտագործվեն որպես ազդեցության կամ վրեժխնդրության գործիք դատավորների նկատմամբ: Կարգապահական վարույթների կամայական օգտագործումը կանխելու համար պետք է ներդրվեն անհրաժեշտ երաշխիքներ՝ ներառյալ դրանց արդյունքը բողոքարկելու հնարավորությունը դատավորների համար:

<sup>20</sup> Տե՛ս [CEPEJ-ի գեկույզը](#)՝ «Եվրոպայի դատական համակարգերը. արդարադատության արդյունավետությունը և որակը», 2014 թվականի հրատարակությունը (2012 թվականի տվյալների հիման վրա), էջ 149:

34. Հանձնակատարը ցանկանում է ընդգծել Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների տնօրինության առաջարկությունների (տե՛ս 2014 թվականի համատեղ եզրակացությունը դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծի մասին) կարևորությունը՝ կարգապահական վարույթների հիմքերի և դատավորների կողմից գործերով անկախ որոշումներ կայացնելու սկզբունքի հարգման մասով: Մասնավորապես, կարգապահական վարույթները և դատավորների գործունեության գնահատումը չպետք է դիտարկվեն որպես անջատ գործընթացներ և չպետք է օգտագործվեն՝ սասանելու համար դատավորների անկախությունը: Ավելին, հարկ է վերանայել դատավորների նկատմամբ իրականացվող կարգապահական վարույթներում արդարադատության նախարարության դերակատարումը:
35. Անհրաժեշտ է դիտարկել դատավորների ինքնակառավարման համակարգի (որն իրականացվում է Դատավորների ընդհանուր ժողովի, Դատարանների նախագահների խորհրդի և Արդարադատության խորհրդի կողմից) հստակեցման և ամրապնդման նպատակահարմարությունը: Անհրաժեշտ է արդյունավետորեն երաշխավորել շարքային դատավորների ներգրավումն ինքնակառավարման գործընթացին:
36. Հաշվի առնելով, որ բոլոր առյուծկալներում աճում է դատարանների ծանրաբեռնվածությունը, կարևոր է բավարար ռեսուրսներ տրամադրել Հայաստանի դատական իշխանությանը և որպես նախապատվելի տարբերակ դիտարկել վեճերի լուծման նպատակով ոչ դատական մեխանիզմների կիրառությունը:
37. Դատական համակարգի վերաբերյալ զեկույցներում արձանագրված կոռուպցիայի զգալի մակարդակը լուրջ մտահոգության տեղիք է տալիս, մասնավորապես հաշվի առնելով դրա քայքայիչ ազդեցությունն իրավունքի գերակայության նկատմամբ հանրային վստահության վրա: Հանձնակատարը կոչ է անում իշխանություններին՝ լրացուցիչ թափ հաղորդել այն ջանքերին, որոնք կապահովեն դատական համակարգում կոռուպցիայի բոլոր դեպքերի արդյունավետ քննությունը և քրեական հետապնդումը:
38. Հանձնակատարը հուսով է, որ սահմանադրական բարեփոխումների գործընթացը հնարավորություն կընձեռի՝ անդրադառնալու դատական համակարգի և իրավապահ մարմինների աշխատանքի առնչությամբ սույն զեկույցում արժարծված հիմնախնդիրների որոշ մասին:

### 1.1.3 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

39. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ արդար դատաքննության ընդգրկումն հայեցակարգի շրջանակում հիմնարար նշանակություն ունի քրեական վարույթի մրցակցայնությունը և մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև հավասարության սկզբունքը: Քրեական դատաքննության շրջանակում թե՛ մեղադրանքի, թե՛ պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն ընձեռվի տեղեկանալու մյուս կողմի ներկայացրած միջնորդություններին և ապացույցներին և մեկնաբանություններ ներկայացնելու դրանց վերաբերյալ:<sup>21</sup>
40. Հանձնակատարի ստացած տեղեկություններով, վերոհիշյալ սկզբունքները ոչ լիովին են արդյունավետ պրակտիկայում Հայաստանում: Մասնավորապես, դեռևս խնդրահարույց է փաստաբանի հասանելիությունը ոստիկանությունում անազատության մեջ պահելու սկզբնական շրջանում: Կրկնվող պրակտիկան այն է, որ անհատներին պաշտոնապես հրավիրվում են ոստիկանության տարածք՝ որպես վկաներ, ապա՝ նրանց վերաբերվում են որպես կասկածյալների՝ չապահովելով վերջիններիս համար նախատեսված իրավունքները և երաշխիքները, այսինքն՝ չեն կատարում այնպիսի պարտավորություններ, ինչպիսիք են

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ, [Rowe and Davis v. The United Kingdom](#), դիմում թիվ 28901/95, դատավճիռը՝ 16-ը փետրվարի, 2000թ., 60-րդ պարբերություն:



ծերբակալության արձանագրության կազմումը, փաստաբանի ներկայության ապահովումը և անձին դատարանի առաջ ներկայացնելը<sup>22</sup> (տե՛ս նաև 59-րդ պարբերությունը):

41. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Կասկածյալները և մեղադրյալներն իրավունք ունեն վարձելու իրենց ընտրած փաստաբաններին: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի կողմից իրավաբանական օգնության ստացումը, իսկ եթե շահագրգիռ անձի ֆինանսական դրությունը դա է պահանջում, ապա՝ իրավաբանական օգնությունը տրամադրել անվճար: Այդ նպատակով 2006 թվականին Փաստաբանների պալատի կազմում ստեղծվել է Հանրային պաշտպանի գրասենյակը, որի նպատակն անվճար իրավաբանական օգնության տրամադրումն է հասարակության խոցելի խմբերին: Թեպետ այս համակարգի ստեղծումն անկասկած դրական և անհրաժեշտ քայլ էր, մտահոգություններ են արտահայտվել այն առումով, որ աշխատանքային մեծ ծանրաբեռնվածությունը, հանրային պաշտպանների անբավարար թվաքանակը և ցածր աշխատավարձը չեն նպաստում որակյալ իրավաբանական օգնության կազմակերպմանը, հատկապես՝ մարզերում:
42. Անմեղության կանխավարկածի՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքի կարևորագույն նախադրյալն այն է, որ դատարանի անդամները չպետք է սկսեն գործել՝ արդեն իսկ ունենալով կանխավ ձևավորված կարծիք այն մասին, որ մեղադրյալը կատարել է մեղադրանքի մեջ նշված հանցանքը: Արդար դատաքննությունը չպետք է սասանվի կանխակալ հայտարարություններով, հատկապես եթե դրանք արվում են դատական իշխանությունների և հանրային պաշտոնյաների կողմից: Հանձնակատարը տեղեկություններ է ստացել, որոնք պարունակում են անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման մասին պնդումներ: Բազմաթիվ հարցազրույցների հիման վրա ՀԿ-ների անցկացրած մշտադիտարկմամբ բացահայտվել է, որ այս սկզբունքը գործնականում անարդյունավետ է, քանի որ դատավորները «կանխակալ» են և «բացասական տրամադրվածություն» ունեն քրեական գործերով կասկածյալների նկատմամբ: Դատական քննության ընթացքում ամբաստանյալների տված ցուցմունքն ընդհանուր առմամբ հաշվի չի առնվում դատարանների կողմից, և սեփական մեղքը հաստատող և նախաքննության փուլում ստացված ցուցմունքները հերքող հայտարարությունները և/կամ դաժան վերաբերմունքի կամ հարկադրաբար ինքնախոստովանական ցուցմունք կորզելու վերաբերյալ հայտարարությունները դիտարկվում են որպես «պատասխանատվությունից խուսափելու փորձեր»: Ըստ երևույթին, հազվագյուտ երևույթ չէ, երբ դատարանները նախքան գործընթացի ավարտը համոզմունք են հայտնում ամբաստանյալի մեղավորության մասին:<sup>23</sup> Բացի դրանից, ստացվել են տեղեկություններ առ այն, որ համապատասխան դատավճիռների ուժի մեջ մտնելուց առաջ բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարություններ են արել որոշ անձանց մեղավորության վերաբերյալ, որը խիստ խնդրահարույց է ոչ միայն անմեղության կանխավարկածի տեսանկյունից, այլ նաև իշխանությունների տարանջատման առումով:
43. Հանձնակատարը տարբեր գրուցակիցների կողմից տեղեկացվեց, որ դատախազությունը շարունակում է գերիշխող դիրք ունենալ Հայաստանի քրեական արդարադատության համակարգում, այսինքն՝ վերջինս դեռևս կրում է դատախազամետ կողմնակալության ժառանգությունը: Պաշտպանության և մեղադրանքի կողմերի համար հավասարապես հասանելի չեն քրեական գործի նյութերը: Քրեական դատավարության օրենսգրքով իսկ սահմանափակվում են նախաքննության փուլում գործի նյութերին ծանոթանալու՝ պաշտպանության կողմի իրավունքները, քանի որ սահմանվում է, որ մեղադրյալը և պաշտպանը դա կարող են անել միայն նախաքննությունն ավարտելու պահից:

<sup>22</sup> Տե՛ս Կամայական ազատագրկման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի Հայաստան այցելած առաքելության [գեկույցը](#), 2011թ., 59-րդ պարբերություն:

<sup>23</sup> Տե՛ս Հայաստանում դատավարությունների մոնիթորինգի ծրագրի (2008թ. ապրիլ-2009թ. հուլիս) [ավարտական գեկույցը](#), Վարշավա, 8-ը մարտի, 2010թ., էջ 38, և «[Պաշտպանության իրավունքի իրազման որակն ու արդյունավետությունը հանրային պաշտպանության համատեքստում](#)», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Երևան, 2013թ.:

Ամբաստանյալները և նրանց փաստաբանները սահմանափակ հնարավորություններ ունեն վիճարկելու մեղադրանքի կողմի վկաների ցուցմունքները կամ ոստիկանության ներկայացրած ապացույցները, մինչդեռ դատարանները կանոնավոր կերպով հակված են թույլատրելի ճանաչելու այդ նյութերը: Հիմնական միտումն ընդհանուր առմամբ այն է, որ դատավորները քննության և դատական փուլերում բավարարում են դատախազների միջնորդությունները: Ըստ երևույթին, առնվազն ընդհուպ մինչև վերջերս, դատավորների թափուր տեղերի մի զգալի մասը լրացնում էին նախկին դատախազները և իրավապահ մարմինների այլ ներկայացուցիչները:<sup>24</sup>

44. Սահմանադրական դատարանի նախագահը հայտնեց Հանձնակատարին, որ Հայաստանում ջանքեր են գործադրվել քրեական արդարադատության համակարգում դատախազների ազդեցիկ դերը սահմանափակելու և դատավորների կողմից որոշումների առավել անկախ կայացումն ապահովելու ուղղությամբ: Վճռաբեկ դատարանի նախագահը նշեց, որ այլևս նախկինի չափ հավանական չէ, որ դատավորները կհետևեն դատախազների միջնորդություններին, իսկ որոշ դեպքերում՝ նրանք վերադարձնել են ամբաստանյալներին ներկայացված մեղադրանքը: Նա նաև նշեց, որ վերաքննիչ ատյանի դատարաններում բավարարվում են դատախազների բողոքների ընդամենը 16%-ը, իսկ վճռաբեկ դատարանում՝ 34%-ը:
45. Դատական դեպարտամենտը տեղեկացրեց Հանձնակատարին, որ արդարացումների թիվը 2009-2014 թվականներին կայուն տեմպով ավելացել է, և 2014 թվականին (հոկտեմբերի դրությամբ, այսինքն՝ Հանձնակատարի այցի ժամանակ) կազմել է 3.1%: Գլխավոր դատախազը նշեց, որ թույլ գործերը կարճվում կամ դադարեցվում են նախքան դատական քննությունը, և որ հիմնականում դատարան են ուղարկվում լավ պատրաստված և ուժեղ գործերը, որոնց պարագայում բարձր է մեղադրական դատավճիռ կայացնելու հավանականությունը: Այնուհանդերձ, Հանձնակատարի գրուցակիցներից ոմանք նշեցին, որ արդարացումների հարաբերականորեն ցածր ցուցանիշը մասամբ վերագրելի է դատավորների այն մտավախությանը, թե ամբաստանյալին արդարացնելու մասին իրենց որոշումները կարող են ընկալվել որպես կոռուպցիայի նշան:
46. Դատախազության և պաշտպանության կողմի միջև անհավասարակշռությունը հակված է թուլացնելու իրավաբանի մասնագիտության հեղինակությունը: Դատապաշտպանները չեն համարվում դատական գործընթացների վրա լուրջ ազդեցություն ունեցող սուբյեկտներ՝ հաշվի առնելով մեղադրական դատավճիռների բարձր ցուցանիշը: Որոշ դատապաշտպաններ բողոքեցին այն մասին, որ իրենց համար գնալով դժվարանում է փաստարկները դատավորներին և դատախազներին լսելի դարձնելը: Մի շարք գործոնների համադրության հետևանքով, ինչպիսիք են, մասնավորապես, պաշտպան ունենալու օգտակարության նկատմամբ վստահության պակասը, սեփական իրավունքների չիմացությունը և քննիչների կողմից գործադրվող ճնշումը, մի շարք կասկածյալներ և մեղադրյալներ հրաժարվում են պաշտպանի ծառայություններից, հատկապես՝ նախաքննության փուլում: Դատարանների մոնիթորինգ իրականացնող ՀԿ-ները նշեցին, որ բազմաթիվ ամբաստանյալներ վերաքննիչ ատյանում պաշտպան չեն ունենցել: Այնուհանդերձ, ՀԿ-ները պարզել են, որ պաշտպանի ներկայությունը քրեական վարույթի նախաքննության և դատաքննության փուլերում օգտակար է եղել կասկածյալների և ամբաստանյալների իրավունքների և շահերի պաշտպանության տեսակետից:
47. Նախկինում մտահոգություններ են արտահայտվել չափազանց ծանր պատիժների նշանակման առնչությամբ:<sup>25</sup> Հանձնակատարը տեղեկացվել է, որ քրեական օրենսգրքի նախագծով ապաքրեականացվելու են մի շարք քրեական հանցագործություններ, և որ նախատեսվելու են պակաս ծանր պատիժներ:

<sup>24</sup> 2012 թվականի հուլիսի դրությամբ դատավորների մոտ 27%-ը նախկին դատախազներ էին: Տե՛ս [Հայաստանի դատական քարտեզի մասին հոդվածը](#), Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, ղեկավարներ, 2012թ., էջեր 19 և 59:

<sup>25</sup> Տե՛ս Կամայական ազատագրկման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի Հայաստան այցելած առաքելության [գեկույցը](#), 2011թ., 59-րդ պարբերություն:

### 1.1.4 ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԸ

48. Մինչդատական (նախնական) կալանքն ազդում է արդար դատաքննության իրավունքի, պաշտպանության իրավունքի և անմեղության կանխավարկածի սկզբունքի վրա քննության և դատական քննության փուլերում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանին վերաբերող մի քանի դատավճիռներում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում է արձանագրել, մասնավորապես՝ կալանքի անօրինականության մասով:<sup>26</sup> Խախտումները վերաբերել են կալանքի մասին դատական որոշման բացակայությանը, նախնական կալանքի ոչ ողջամիտ տևողությանը, կալանքի և դրա երկարաձգման հարցը քննելիս դատարանների կողմից վերաբերելի և բավարար պատճառաբանման բացակայությանը, ինչպես նաև գրավ կիրառելու մասին միջնորդությունների ինքնաբերաբար մերժմանը: Հայաստանի վերաբերյալ 2011 թվականին հրապարակված զեկույցում Կամայական ազատագրկման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խումբն արձանագրել էր, որ ձերբակալությունները հաճախ նախորդող ոստիկանական քննության հետևանքը չեն, և փոխարենը՝ մարդիկ ազատագրվում են քննության ենթարկվելու համար:<sup>27</sup> Միջազգային ստանդարտներով նախատեսվածի պես՝ հնարավոր միջոցներից վերջինը լինելու փոխարեն, նախնական կալանքը Հայաստանում նորմ է: Այլընտրանքային և նվազ ծանր խափանման միջոցները հաճախ չեն կիրառվում, կամ՝ անգամ քննարկվում:<sup>28</sup> Որոշ դիտորդներ նշեցին, որ նախնական կալանքի չափազանց հաճախակի կիրառությունը կապված է ինքնախոստովանական ցուցմունք և սեփական անձի դեմ ուղղված ցուցմունք ստանալու՝ քննչական մարմինների նպատակի հետ:<sup>29</sup>
49. Քրեական դատավարության գործող օրենսգրքով նախատեսված են խափանման հետևյալ միջոցները՝ կալանավորումը, գրավը, ստորագրություն՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը և զինվորական մասի հրամանատարության հսկողության հանձնելը:<sup>30</sup> Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, դատավորները կարող են միայն բավարարել կամ մերժել նախնական կալանք կիրառելու մասին միջնորդությունները: Դատավորները կարող են նախնական կալանքը դրամական գրավով փոխարինելու հարցը քննարկել միայն նախնական կալանք կիրառելու մասին միջնորդությունը բավարարելուց հետո, քանի որ դրամական գրավը որպես առանձին խափանման միջոց նախատեսված չէ: Դրամական գրավ կիրառելու մասին միջնորդություն կարող է ներկայացնել պաշտպանը, դատախազը կամ քննիչը: Խափանման այլընտրանքային այլ միջոցները կիրառվում են ոչ թե դատավորի, այլ՝ իրավասու քննիչի կամ քննչական մարմնի ղեկավարի կողմից:<sup>31</sup> կալանքից զատ
50. Թեպետ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվում է, որ գրավը կարող է կիրառվել միայն ոչ ծանր կամ միջին ծանրության հանցագործության մեջ մեղադրվող անձի նկատմամբ, վճարել դատարանն իր նախադեպային որոշմամբ սահմանել է, որ գրավը կարող է կիրառվել նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում: Այնուհանդերձ, ավելի ցածր ատյանների դատարաններն ըստ երևույթին այս առումով չեն

<sup>26</sup> Տե՛ս [Asatryan v. Armenia](#), դիմում թիվ 24173/06, դատավճիռը՝ 09/02/2010: [Poghosyan v. Armenia](#), դիմում թիվ 44068/07, դատավճիռը՝ 20/12/2011: [Muradkhanian v. Armenia](#), դիմում թիվ 12895/06, դատավճիռը՝ 05/06/2012: [Piruzyan v. Armenia](#), դիմում թիվ 33376/07, դատավճիռը՝ 26/06/2012: [Malkhasyan v. Armenia](#), դիմում թիվ 6729/07, դատավճիռը՝ 26/06/2012: [Sefilyan v. Armenia](#), դիմում թիվ 22491/08, դատավճիռը՝ 02/10/2012:

<sup>27</sup> Տե՛ս [Կամայական ազատագրկման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի Հայաստան այցելած առաքելության զեկույցը](#), 2011թ., 60-րդ պարբերություն:

<sup>28</sup> Դատական ղեկարտամենտի տրամադրած տվյալների համաձայն, դատարանները բավարարել են նախնական կալանք կիրառելու մասին ընդհանուր թվով 1,155 միջնորդություններից 1,091-ը, իսկ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու մասին ընդհանուր թվով 220 միջնորդություններից՝ 42-ը (2014 թվականի առաջին կես): 2013 թվականին դատարանները բավարարել են նախնական կալանք կիրառելու մասին ընդհանուր թվով 3,172 միջնորդություններից 3,011-ը, իսկ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու մասին ընդհանուր թվով 576 միջնորդություններից՝ 129-ը:

<sup>29</sup> Տե՛ս [Նախնական կալանքը և դրա այլընտրանքները Հայաստանում](#), «Միջազգային բանտային բարեփոխումներ», 2012թ., էջեր 30 և 31:

<sup>30</sup> Քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդված:

<sup>31</sup> Տե՛ս [Նախնական կալանքը և դրա այլընտրանքները Հայաստանում](#), «Միջազգային բանտային բարեփոխումներ», 2012թ., էջեր 24-29:

հետևում վճարել դատարանի դատական նախադեպին: Դատավորների միության ներկայացուցիչները Հանձնակատարին տեղեկացրեցին, որ դատավորները հակված չեն բավարարելու կալանքից զատ խափանման այլ միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները, քանի որ հավանական է, որ նրանց որոշումը կբեկանվի դատախազության ներկայացրած բողոքի հիման վրա:

51. Հաճախակի կիրառությունից զատ, նախկինի պես խնդրահարույց է նաև նախնական կալանքի տևողությունը: Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, նախնական կալանքի ժամկետը չի կարող երկարաձգվել 12 ամսից ավելի: Այնուհանդերձ, ամբաստանյալները երբեմն պահվում են ավելի երկար ժամկետներով՝ հաշվի առնելով, որ երբ սկսվում է դատաքնությունը, նախնական կալանքը կարող է անսահմանափակ շարունակվել, քանի որ քրեական դատավարության օրենսգրքով սահմանափակումներ նախատեսված չեն, և այդ պատճառով դատական քնությունը կարող է շատ երկար տևել:
52. Տարբեր դիտորդներ նշել են, որ ձերբակալման հիմքերի և նախնական կալանքի կիրառության դատական վերանայումը չի համապատասխանում ազգային և միջազգային իրավական ստանդարտներին: Ստացված տեղեկությունների համաձայն, նախնական կալանքի մասին դատական որոշումները չեն անդրադառնում կոնկրետ գործի առանձնահատկություններին՝ փոխարենը պարունակելով ստանդարտ ձևակերպումներ: Կալանքի մասին որոշումները հիմնավորելու համար քննչական մարմինների տրամադրած տեղեկությունների հասանելիությունը պաշտպանության կողմի համար խոչընդոտվում է:<sup>32</sup>
53. *Պողոսյանի* գործին առնչվող գործերի խմբի վերաբերյալ 2014 թվականի միջոցառումների [օրագրում](#) Հայաստանի իշխանությունները նախատեսել էին քրեական դատավարության նոր օրենսգրքում անդրադառնալ համապատասխան խնդիրներին: Ըստ երևույթին, գործող քրեական օրենսդրությամբ չի թույլատրվում խափանման այլընտրանքային միջոցների, մասնավորապես՝ գրավի ավելի լայն կիրառությունը, սակայն քրեական դատավարության նոր օրենսգրքը շտկելու է այս իրավիճակը և նվազեցնելու է նախնական կալանքի վրա հիմնվելու պրակտիկան:

#### *Եզրակացություններ և հանձնարարականներ*

54. Կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքները հույժ կարևոր են արդար դատաքնության իրավունքների ապահովման համար, և հայաստանյան իշխանությունները և քրեական արդարադատության համակարգի բոլոր սուբյեկտները պետք է իրենց դերակատարումն ունենան՝ գործնականում այդ սկզբունքներին լիարժեք արդյունավետությունն ապահովելու համար: Հանձնակատարը միանշանակորեն ընդգծում է, որ կարևոր է դատավորի՝ որպես անկողմնակալ «մրցավարի» դերակատարումը: Նա կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ ուստիկանությունում ազատագրված սկզբից նեթ, ինչպես նաև քննության և դատական վարույթի ողջ ընթացքում ապահովել պաշտպանության իրավունքը և իրավաբանական օգնության հասանելիությունը: Իրավաբանական օգնության համակարգը, մասնավորապես՝ Հանրային պաշտպանի գրասենյակը, անհրաժեշտ է ամրապնդել: Պաշտպանությունը պետք է համոզիչ պաշտպանություն կազմակերպելու հնարավորություն ունենա՝ հավուր պատշաճի ստանալով գործի նյութերը և կարողանալով վիճարկել մեղադրանքի կողմի վկաներին և ուստիկանության ներկայացրած ապացույցները:
55. Հանձնակատարին մտահոգում են դատավորների և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից անմեղության կանխավարկածի սկզբունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ ստացված տեղեկությունները: Դատական, հանրային և քաղաքական գործիչները պետք է նախքան իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումը զգուշավոր կերպով հարգեն անմեղության կանխավարկածի սկզբունքը:
56. Հանձնակատարին մտահոգում է նախնական կալանքի՝ որպես խափանման միջոցի հաճախակի կիրառությունը Հայաստանում: Հանձնակատարը կրկնում է, որ նախնական կալանքը պետք է լինի ոչ թե նորմ, այլ՝ բացառությունը, ինչը և նախատեսված է եվրոպական

<sup>32</sup> Տե՛ս [Կանայական ազատագրված հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի Հայաստան այցելած առաքելության զեկույզը](#), 2011թ., 74-րդ և 75-րդ պարբերություններ:

և միջազգային ստանդարտներով՝ ներառյալ Նախնական կալանքի կիրառության վերաբերյալ Նախարարների կոմիտեի 2006(13) [հանձնարարականով](#): Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով հնարավոր դարձնել ազատագրկմանը չառնչվող խափանման արդյունավետ միջոցների կիրառությունը: Ավելին, պրակտիկայի իրական փոփոխությունը կախված կլինի նաև դատական անկախության մակարդակից և քննության շրջանում իրավապահ մարմինների գործելակերպի փոփոխություններից:

## 1.2 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾԱՆՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

57. Հանձնակատարին մտահոգում են շարունակաբար ստացվող տեղեկությունները Հայաստանում մարդու իրավունքների ծանր խախտումների՝ ներառյալ կյանքի իրավունքի խախտումների և խոշտանգումների և դաժան վերաբերմունքի արգելքի խախտումների վերաբերյալ հայտարարությունների արդյունավետ քննության բացակայության մասին, որի հետևանքն այդ գործողությունների համար պատասխանատու անձանց անպատժելիությունն է: Հանձնակատարը հարկ է համարում հիշեցնել, որ քննության գործընթացն ուղղակիորեն ազդում է արդար դատաքննության իրավունքների հարգման վրա:

EMBARGO UNTIL 10 MARCH 2015 AT 11 AM (PARIS TIME)

## 1.2.1 ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

### *Քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հայտարարությունները*

58. Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի եվրոպական կոմիտեն («CPT») 2010 թվականին Հայաստան կատարած այցելության ընթացքում արժանահավատ և համահունչ բազմաթիվ տեղեկություններ ստացավ դաժան վերաբերմունքի (բռունցքով հարվածների, աքցանների, ռետինե և փայտե մահակներով և այլ առարկաներով հարվածների) մասին, որի նպատակն ինքնախոստովանական ցուցմունքի ապահովումն է և այլ տեղեկությունների ստացումը: Դաժան վերաբերմունքն իր ծանրությամբ երբեմն կարող է համարվել խոշտանգման աստիճանի հասնող վերաբերմունք, մասնավորապես՝ դա ներառում է ուժգին ծեծը, հոսանքահարումը, հակազգով շնչահեղձության նմանակումը և հարվածները ոտնատակին: Բազմաթիվ անձինք ԽԿԿ-ին (անգլ.՝ «CPT») հայտնել էին, որ իրենց նկատմամբ կիրառվել է հոգեբանական ճնշում՝ ֆիզիկական դաժանության (ներառյալ՝ սեռական ակտի) սպառնալիքներ և ընտանիքի անդամների նկատմամբ վրեժխնդիր լինելու սպառնալիքներ:<sup>33</sup> ԽԿԿ-ն մեծածավալ նմանօրինակ տեղեկություններ ստացավ 2013 թվականի այցի ընթացքում և եզրակացրեց,<sup>34</sup> որ դեռևս լայն տարածում ունի ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի երևույթը:<sup>35</sup> Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ներպետական կառույցները նույնպես հայտարարություններ են ներկայացրել ոստիկանության կողմից խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մասին:<sup>35</sup>
59. Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի երևույթը Հայաստանում պետք է դիտարկել քրեական արդարադատության համակարգի գործունեության համատեքստում: Նման բռնություն տեղի ունենալու համար պարարտ հող է ստեղծվում, քանի որ քննչական մարմինները մեղադրական դատավճիռներ ապահովելու համար հենվում են ինքնախոստովանական ցուցմունքի և հարցաքննության ընթացքում ստացված տեղեկությունների վրա, ինչպես նաև քանի որ ազատագրկման սկզբից ևեթ չեն ապահովվում դաժան վերաբերմունքը բացառող դատավարական երաշխիքները՝ ներառյալ ազատագրկված լինելու մասին մերձավոր ազգականին կամ այլ անձի տեղեկացնելու իրավունքը, փաստաբանի հետ հանդիպելու իրավունքը, բժշկի հետ հանդիպելու իրավունքը և անձի իրավունքների մասին տեղեկացվածությունը:<sup>36</sup> Ազատությունից զրկելու սկզբնական փուլն ըստ երևույթին հաճախ օգտագործվում է ինքնախոստովանական ցուցմունք կորզելու և/կամ ապացույցներ հավաքելու համար, որից հետո է միայն բերման ենթարկված անձը պաշտոնապես ճանաչվում որպես քրեական գործով կասկածյալ, և հենց այդ ժամանակ է դաժան վերաբերմունքի ռիսկը հասնում առավելագույնի:
60. Հանձնակատարին նտահոգում են ստացված տեղեկություններն այն մասին, որ ապօրինաբար ստացված տեղեկությունները, մասնավորապես՝ հարկադրանքի ներքո տված ինքնախոստովանական ցուցմունքը, կանոնավոր կերպով օգտագործվում է դատարաններում: Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Դատարանը 6(1) հոդվածի խախտում արձանագրեց՝ վճռելով, որ դիմումատունն զրկվել է արդար դատաքննությունից, քանի որ խոշտանգմամբ ստացված ապացույցներն օգտագործվել են դիմումատուի մեղքն ապացուցելու համար՝ հանգեցնելով նրա նկատմամբ մեղադրական դատավճռի կայացմանը:<sup>37</sup> Ավելին, Հանձնակատարը տեղեկացվեց որոշ դեպքերի մասին, որոնցում

<sup>33</sup> Տե՛ս ԽԿԿ-ի (անգլ.՝ «CPT») կողմից 2010 թվականի մայիսի 10-21-ը Հայաստան կատարած այցի զեկույցը, 12-րդ պարբերությունը:

<sup>34</sup> Տե՛ս ԽԿԿ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 4-10-ը Հայաստան կատարած այցի զեկույցը, 12-րդ և 17-րդ պարբերությունները:

<sup>35</sup> Տե՛ս «Ազատագրկվածների նկատմամբ վերաբերմունքը ոստիկանական բաժանմունքներում» զեկույցը, Հայաստանի հելսինկյան կոմիտե, 2013 թ, էջեր 19-20:

<sup>36</sup> 2013 թվականին կատարած այցի ընթացքում ԽԿԿ-ն դրական տեղաշարժ արձանագրեց բժշկի հասանելիության և իրավաբանական օգնության տրամադրման առումներով: Տե՛ս ԽԿԿ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 4-10-ը Հայաստան կատարած այցի զեկույցը, 56-րդ պարբերությունը:

<sup>37</sup> Տե՛ս [Harutyunyan v. Armenia](#), դիմում թիվ 36549/03, դատավճիռը՝ 28-ը հունիսի, 2007թ., 63-րդ և 66-րդ պարբերությունները:

անձինք, ովքեր դատարան ներկայանալիս բողոքել էին քննության ընթացքում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ենթարկվելու մասին, դատապարտվել էին կեղծ ցուցմունք տալու համար:

61. Հանձնակատարը հայաստանյան իշխանությունների կողմից տեղեկացվեց, որ *Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի*<sup>38</sup> գործով և *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի*<sup>39</sup> գործով Ղատարանի կայացրած դատավճիռների համաձայն փոփոխություններ են կատարվել քաղաքացիական օրենսգրքում դրամական հատուցում նախատեսելով արդարադատության սխալների հետևանքով և իրավապահ մարմինների անօրինական գործողությունների հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի համար: Հաշվի առնելով Հայաստանի օրենսդրության մեջ ոչ նյութական վնասի դիմաց հատուցման բացակայությունը, Ղատարանը եզրակացրեց, որ Հայաստանն առաջին գործով խախտել է ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածը և ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածը, իսկ երկրորդ գործով՝ նաև ՄԻԵԿ-ի 5.1 և 5.5 հոդվածները: Վեներտիկի հանձնաժողովը 2013 թվականի դեկտեմբերին ընդունված [եզրակացության](#) մեջ ողջունեց քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը:

*Ղաժան վերաբերմունքի մասին հայտարարությունների արդյունավետ քննությունը*

62. Հանձնակատարին մտահոգում է իրավապահ մարմինների կատարած խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մասին բողոքների արդյունավետ քննության բացակայությունը, որը հանգեցնում է մեղավորների անպատժելիությանը և նման բռնության կրկնությանը: Այս իրավիճակը պայմանավորված է իրավական և համակարգային տարբեր գործոններով: Ներպետական և միջազգային սուբյեկտները բազմիցս ընդգծել են, որ Հայաստանի քրեական օրենսգրքի խոշտանգումը քրեականացնող դրույթը<sup>40</sup> չի համապատասխանում խոշտանգումների դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով տրված խոշտանգման սահմանմանը: Հայաստանի քրեական օրենսգրքի համաձայն, խոշտանգման սահմանումը չի ներառում հանրային պաշտոնյաների կատարած հանցանքները, և ներառում է միայն մասնավոր կարգավիճակում գործող անձանց կատարած հանցանքները: Հետևանքն այն է, որ Հայաստանում խոշտանգման հանցագործության համար երբևէ չի դատապարտվել իրավապահ մարմնի կամ անվտանգության ծառայությունների որևէ աշխատող: Եթե անգամ ոստիկանության ծառայողները և քննիչները ենթարկվում են պատասխանատվության դաժան վերաբերմունք գործադրելու համար, ապա մեղադրանքը և մեղադրական դատավճիռը նվազ ծանր հանցագործությունների, օրինակ իշխանության չարաշահման կամ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար են: Այդպեսով դատապարտված անձինք մի քանի առիթներով համաներմամբ ազատ են արձակվել: ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն մտահոգություն է հայտնել նաև այն փաստի առթիվ, որ խոշտանգման հանցանքի համար նախատեսված պատժամիջոցները երեք տարով ազատազրկումը, իսկ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում՝ մինչև յոթ տարով ազատազրկումը, համարժեք չեն հանցանքի ծանրությանը:<sup>41</sup>
63. Արդարադատության նախարարությունը Հանձնակատարին տեղեկացրեց, որ Հատուկ քննչական ծառայության հետ համատեղ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ է ներկայացրել, որոնց նպատակն է փոխել խոշտանգման սահմանումը և այն համապատասխանեցնել մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին: Հանձնակատարը լիահույս է, որ հընթացս լրացուցիչ տեղեկություններ կստանա այս մասին:
64. *Վիրաբյանն ընդդ. Հայաստանի* գործով Ղատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական խախտում արձանագրեց. գործը վերաբերում էր հնարավոր քաղաքական

<sup>38</sup> Տե՛ս [Poghosyan and Baghdasaryan v. Armenia](#), դիմում թիվ 22999/06, դատավճիռը՝ 12-ը հունիսի, 2012թ.:

<sup>39</sup> Տե՛ս [Khachatryan and Others v. Armenia](#), դիմում թիվ 23978/06, դատավճիռը՝ 27-ը նոյեմբերի, 2012թ.:

<sup>40</sup> Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսվում է. «խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողությունը, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

<sup>41</sup> Տե՛ս [խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեի ամփոփիչ դիտարկումները](#), 6-ը հուլիսի, 2012թ., 10-րդ պարբերություն:

դրդապատճառով ընդդիմադիր ակտիվիստին ոստիկանությունում պահելու ընթացքում տեղի ունեցած խոշտանգմանը: Դատարանը նաև 3-րդ հոդվածի դատավարական խախտում արձանագրեց՝ եզրակացնելով, որ իշխանությունների կողմից դաժան վերաբերմունքի մասին դիմումատուի պնդումների քննությունը եղել էր անարդյունավետ, անհամարժեք և հիմնավորապես թերի:<sup>42</sup> Ի լրումն, Դատարանն անմեղության կանխավարկածի խախտման հիմքով արձանագրել էր Կոնվենցիայի 6.2 հոդվածի խախտում: Հանձնակատարին մտահոգում են ստացված տեղեկություններն այն մասին, որ պրն. Վիրաբյանի խոշտանգմանը հանցակից անձանցից մեկի պաշտոնը Ոստիկանության համակարգում բարձրացվել է: Վերոհիշյալ դատավճռի իրագործման մասին հայաստանյան իշխանությունների ներկայացրած միջոցառումների 2013 թվականի [օրագիրը](#) տեղեկություններ է պարունակում անհատական և ընդհանուր բնույթի մի շարք միջոցառումների, մասնավորապես՝ քրեական օրենսդրության փոփոխությունների մասին և դաժան վերաբերմունքի կանխարգելմանն առնչվող եվրոպական ստանդարտների կատարումն ապահովելու նպատակով ոստիկանապետի կողմից 2013 թվականին արձակված հրամանի մասին:

65. Հանձնակատարը հարկ է համարում հիշեցնել, որ մարդու իրավունքների խախտումների արդյունավետ քննության Դատարանի սահմանած հիմնական չափորոշիչները ներառում են անկախությունը, համարժեքությունը, անհապաղությունը, հանրային հսկողությունը և տուժողի մասնակցությունը: Հանձնակատարի գրուցակիցներից մի քանիսը նշեցին, որ քննություններն արդյունավետ չեն, քանի որ բավարար չափով անկախ չեն: Այս առումով, նախկին Հանձնակատարն առաջարկել էր ստեղծել բողոքարկման անկախ մեխանիզմ, որն իրավասու կլիներ քննելու մարդու իրավունքների խախտումների այն դեպքերը, որոնցով կասկածներ կլինեին իրավապահ մարմինների՝ ներառյալ ոստիկանության աշխատողների վերաբերյալ:<sup>43</sup>
66. Հայաստանյան իշխանությունների ներկայացուցիչները Հանձնակատարին տեղեկացրեցին, որ քայլեր են ձեռնարկվել քննչական անկախ ծառայություններ ստեղծելու ուղղությամբ, առաջին հերթին՝ գլխավոր դատախազությունից վերցնելով քննչական գործառույթները,<sup>44</sup> ապա նաև՝ ստեղծելով Հատուկ քննչական ծառայությունը, որը քննում է հանրային պաշտոնյաների կողմից կատարված հանցանքները, և երրորդը՝ ստեղծելով նոր Քննչական կոմիտե (տե՛ս ստորև):
67. Դատախազական և դատական մարմինները կարևոր դեր ունեն դաժան վերաբերմունքի կանխարգելման գործում: Այս առումով, Հանձնակատարն ուրախությամբ նկատեց, որ դատախազական մարմինները 2011 և 2012 թվականներին տվել են ցուցումներ, որոնց համաձայն իրավապահ մարմինների պաշտոնյաների կողմից դաժան վերաբերմունքի մասին վկայող բոլոր տեղեկությունները պետք է անհապաղ փոխանցվեն գլխավոր դատախազին, իսկ ազատագրվման վայրեր (ներառյալ՝ ոստիկանության ենթակայությամբ գործող հաստատություններ) ընդունվելու պահին արձանագրված մարմնական վնասվածքների մասին նյութերը պետք է համարվեն հիմքեր քրեական գործ հարուցելու համար: Այնուամենայնիվ, ԽԿԿ-ի 2013 թվականի այցի զեկույցում այս առումով արձանագրվել են մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես, եթե մարմնական վնասվածքներ ունեցող ազատագրված անձինք չեն բողոքել դաժան վերաբերմունքի մասին (օրինակ՝ ասել են, թե վնասվածքն ստացել են վայր ընկնելու պատճառով), ապա հետագա գործողություններ չեն ձեռնարկվել ո՛չ դատախազական, ո՛չ դատական մարմինների կողմից: ԽԿԿ-ն գտնում է, որ վերադաս դատախազները մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկություններ ստանալիս պետք է շատ ավելի նախաձեռնող մոտեցում որդեգրած լինեին:<sup>45</sup>

<sup>42</sup> Տե՛ս [Virabyan v. Armenia](#), դիմում թիվ 40094/05, դատավճիռը՝ 2-ը հոկտեմբերի, 2012թ., 178-րդ պարբերություն:

<sup>43</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի [գեկույցը](#) 2011 թվականի հունվարի 18-21-ը Հայաստան կատարած այցից հետո, CommDH(2011)12, 76-րդ պարբերություն:

<sup>44</sup> Փոփոխությունը տեղի է ունեցել «Դատախազության մասին» օրենքի՝ 2007 թվականին ուժի մեջ մտնելուց հետո:

<sup>45</sup> Տե՛ս ԽԿԿ-ի կողմից 2013 թվականի ապրիլի 4-10-ը Հայաստան կատարած այցի [գեկույցը](#), 32-րդից 43-րդ պարբերություններ:



68. 2007 թվականին ստեղծված Հատուկ քննչական ծառայությունը («ՀԹ») անկախ մարմին է, որն իրականացնում է հանրային պաշտոնյաների կողմից կատարված հնարավոր խախտումներով գործերի նախաքննությունը: Հատուկ քննչական ծառայությունում աշխատում են 23 քննիչներ, իսկ ծառայության ղեկավարը նշանակվում է իշխանության գործադիր ճյուղի կողմից և հաշվետու է վերջինիս: Գլխավոր դատախազությունն իրավասու է գործը լրացուցիչ քննության համար ուղարկել ՀԹ-ին: Գլխավոր դատախազությունը նաև հսկում է ծառայության կողմից իրականացվող քննությունների օրինականությունը և արդյունավետությունը, և որոշումներ է կայացնում մեղադրանք ներկայացնելու վերաբերյալ: ՀԹ-ի տրամադրած տեղեկություններով, 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ստացվել են խոշտանգումներին և դաժան վերաբերմունքին առնչվող 51 գործեր: Հանձնակատարը նաև տեղեկացվեց, որ ծառայությունը հատուկ բաժին է ստեղծել նման գործերը քննելու համար, որում աշխատում են ութ քննիչներ: Ըստ երևույթին, Հատուկ քննչական ծառայությանն ուղարկված գործերի թիվն էականորեն աճել է վերջին տարիների ընթացքում:
69. Մտահոգություններ են հնչեցվել այն մասին, որ Հատուկ քննչական ծառայությունը բավարար կարողություններ չունի իր կողմից ստացվող բոլոր գործերով քննություն իրականացնելու համար: Հետևապես, այդ գործերից շատերի քննությանը ներգրավվում են իրավապահ այլ կառույցներ, մասնավորապես՝ ոստիկանությունը: Դա լուրջ հարցերի տեղիք է տալիս իրավապահ պաշտոնյաների հնարավոր մասնակցությամբ տեղի ունեցած հանցանքների կամ չարաշահումների մասին բողոքների քննության անկախության և անկողմնակալության առնչությամբ, հատկապես՝ երբ խոսք է գնում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի բողոքների մասին: ԽԿԿ-ն մտահոգություն է հայտնել այն մասին, որ դաժան վերաբերմունքի հնարավոր գործերի շրջանակում ոստիկանները հաճախ մասնակցում են ապացույցների հավաքմանը, որը ԽԿԿ-ի կարծիքով հակասում է ՀԹ-ի որպես անկախ մարմնի ստեղծման բուն հայեցակարգին, և ափսոսանք է հայտնել, որ ՀԹ-ն սովորաբար չի մասնակցում դաժան վերաբերմունքի հնարավոր դեպքերի վերաբերյալ հետաքննության շրջանակում ապացույցների հավաքմանը՝ նախքան պաշտոնապես քրեական գործ հարուցելը:<sup>46</sup>
70. 2013 թվականին Նախագահի հրամանագրով ստեղծվել է Քննչական կոմիտե, որից հետո 2014 թվականին ընդունվել է «Քննչական կոմիտեի մասին» օրենքը: Կոմիտեն պատասխանատու է քրեական գործերի նախաքննության իրականացման համար և պետք է անկախ լինի իշխանության այլ ճյուղերից: Քննչական կոմիտեի ենթակայության ներքո են ոստիկանության և պաշտպանության նախարարության քննչական ծառայությունները: Հանրապետության Նախագահի կողմից Քննչական կոմիտեի ղեկավար է նշանակվել Հայաստանի նախկին գլխավոր դատախազ պրն. Աղվան Հովսեփյանը:
71. Քրեական գործերով քննությունների ճնշող մեծամասնությունն իրականացնում է ոստիկանությունը: Ոստիկանության համակարգում ստեղծվել է կարգապահական հանձնաժողով, որի նպատակն է ուսումնասիրել ոստիկանության ծառայողների կողմից կարգապահական խախտումների վերաբերյալ բողոքները: Հանձնաժողովի կազմում կան նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հանձնակատարին մտահոգություններ են հասել առ այն, որ հավուր պատշաճի քննության չեն առնվել հանձնաժողովի կազմում ներկայացված ՀԿ-ների առաջարկները կոնկրետ հարցերի, օրինակ՝ կառավարության քաղաքականությունը քննադատող բողոքի ցույցերի ընթացքում ոստիկանության ենթադրյալ խախտումների դեպքերի քննարկման վերաբերյալ: Որոշ գրուցակիցներ նաև նշել են, որ հանձնաժողովի արդյունավետությունը սահմանափակվում է թե՛ ակտիվ չլինելու պատճառով, քանի որ ըստ երևույթին տևական ժամանակի ընթացքում չեն գումարվել նիստեր, թե՛ այն մարմիններից և անձանցից բավարար չափով անկախ չլինելու պատճառով, որոնց գործողություններն այն պետք է դարձնեն ուսումնասիրության առարկա:

<sup>46</sup> Նույն տեղը, 52-րդ և 53-րդ պարբերություններ:

*Ընտրողական արդարադատության մասին բողոքները*

72. Հանձնակատարը նկատեց, որ հասարակության որոշ մասերում պահպանվում է այն խորը կարծիքը, թե արդարադատությունն ի կատար է ածվում «չափաբաժիններով» և ընտրողաբար, և որ ըստ երևույթին ցցուն հակասություն գոյություն ունի մի կողմից իշխանությունների հետ ենթադրաբար կապված կամ նրանց ներկայացնող անձանց նկատմամբ դրսևորվող ակնհայտ մեղմ վերաբերմունքի (նույնիսկ եթե նրանք մեղադրվել են ծանր խախտումների մեջ), իսկ մյուս կողմից՝ իշխանություններին ընդդիմացողների նկատմամբ կիրառվող խիստ վերաբերմունքի և պատիժների միջև: 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան 10 դեպքերի քննության արդյունքների բացակայությունն էլ ավելի է խորացնում վերոհիշյալ կարծիքը և նպաստում է, որպեսզի հանրության շրջանում ցածր լինի դատական իշխանության նկատմամբ վստահությունը:
73. Հանձնակատարը տարբեր գրուցակիցների հետ քննարկեց 2008 թվականի մարտի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած մահվան 10 դեպքերի քննության խնդիրը: Այդ խնդրին ուշի-ուշով հետևել էր նաև նախկին Հանձնակատարը, ով 2011 թվականի զեկույցում կոչ էր արել հայաստանյան իշխանություններին՝ եռանդագին հետամուտ լինել մահվան դեպքերի քննությանը և ձերբակալության և կալանավորման ընթացքում ոստիկանության չարաշահումների դեպքերին, և առաջ էր քաշել ոստիկանության և անվտանգության ուժերի բարձրաստիճան այն պաշտոնյաների հրամանատարական պատասխանատվության հարցը, ովքեր ղեկավարում են իրականացրել իրադարձությունների ընթացքում: Այդ զեկույցում արված հանձնարարականներից մեկն այն է, որ ապահովվի տուժողների ընտանիքների լիարժեք ներգրավվածությունը քննությանը և տեղեկացվածությունը քննության մասին՝ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին համահունչ: Հանրությունը պետք է տեղեկացված լինի քննության առաջընթացի և արդյունքների մասին, քանի որ արդարադատության իրականացումը պետք է տեսանելի լինի:<sup>47</sup>
74. Վերոհիշյալ դեպքերի քննության պատասխանատվությունը վերապահված է Հատուկ քննչական ծառայությանը, որը Հանձնակատարին տեղեկացրեց, որ դեռևս իրականացվելու են քննչական նոր գործողություններ: Թեպետ տուժողների ընտանիքները և փաստաբանները բողոքել են, որ տեղեկություններ չեն ստացել ընթացող քննության մասին և չեն կարողացել ծանոթանալ գործի նյութերին, ՀԲԾ-ի պետը հավաստիացրեց Հանձնակատարին, որ տուժողների ընտանիքների և իրավահաջորդների տրամադրած ապացույցները հաշվի առնվել են, և որ նրանք ստացել են իրականացված դատական փորձաքննությունների արդյունքները:
75. Հանձնակատարն իր այցի ընթացքում քննարկեց 15-ամյա Շահեն Հարությունյանի գործը, ով հոր հետ միասին մասնակցել էր ընդդիմության բողոքի ցույցին, որի ընթացքում տեղի էր ունեցել բախում ոստիկանության հետ: Դատախազությունն այս անչափահասի նկատմամբ դատարանից պահանջել էր հինգ տարով ազատազրկում, ընդ որում՝ նա տվյալ իրադարձությունների ժամանակ եղել էր 14 տարեկան: Ի վերջո Շահեն Հարությունյանի նկատմամբ 2014 թվականի հոկտեմբերին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով (խուլիգանությունը, որը զուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով) նշանակվել էր պատիժ՝ պայմանական ազատազրկում 4 տարվա փորձաշրջանով: Այս գործի կապակցությամբ առաջ են գալիս անչափահասների արդարադատության ոլորտի ընդհանուր հիմնախնդիրները. տարբեր սուբյեկտներ նշել են, որ անչափահասները հատկապես խոցելի են Հայաստանի քրեական արդարադատության համակարգում, և որ գործնականում նրանք անհրաժեշտ երաշխիքներով պաշտպանված չեն իրենց իրավունքների խախտումներից: ՀԿ-ների մոնիթորինգի արդյունքում զեկույցներում գրվել էր, որ անչափահաս ամբաստանյալների նկատմամբ կիրառվում են ազատազրկման միջոցներ, և որ կալանքի այլընտրանքները հավուր պատշաճի չեն դիտարկվում:

<sup>47</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի [զեկույց](#) 2011 թվականի հունվարի 18-21-ը Հայաստան կատարած այցից հետո, CommDH(2011)12, 38-րդից 55-րդ պարբերություններ:

Տեղեկություններ են ստացվել անչափահասների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքերի մասին, որոնք ըստ երևույթին չեն քննվել:<sup>48</sup>

*Եզրակացություններ և հանձնարարականներ*

76. Հանձնակատարին լուրջ մտահոգություն են պատճառում շարունակաբար ստացվող տեղեկությունները ոստիկանության և իրավապահ այլ մարմինների կողմից խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մասին, որոնց նպատակը հաճախ ինքնախոստովանական ցուցմունք ստանալն է: Հանձնակատարը կոչ է անում քաղաքական բարձրաստիճան ղեկավարությանը և իրավապահ մարմինների ղեկավարներին հստակորեն հասկանալի դարձնել, որ հանրային պաշտոնյաների նման գործողությունների նկատմամբ հանդուրժողությունը զրոյական է: Այս համատեքստում Հանձնակատարը ցանկանում է վերհիշել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2011 թվականի [ուղենիշները մարդու իրավունքների ծանր խախտումների համար անպատժելիության վերացման մասին](#), և ընդգծում է, որ իշխանություններին անհրաժեշտ է բազմապատկել անպատժելիության դեմ պայքարի քաղաքականության և պրակտիկայի ներդրմանն ուղղված ջանքերը:
77. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին միջազգային ստանդարտներին համահունչ փոխել խոշտանգման սահմանումը քրեական օրենսգրքում նպատակ ունենալով ապահովել խոշտանգման արարքների պատշաճ որակումը և պատիժը, քանի որ դրանք չպետք է հետապնդվեն որպես իշխանության կամ դիրքի չարաշահման դեպքեր: Ավելին պետք է անել, որպեսզի դատավորները և դատախազներն իմանան իրենց պարտավորություններն այն դեպքերում, երբ իրենց հասանելի են դառնում հանրային պաշտոնյաների կողմից դաժան վերաբերմունքի մասին վկայող տեղեկություններ:
78. Հանձնակատարն ի գիտություն է ընդունում պետական պաշտոնյաների մասնակցությամբ տեղի ունեցող չարաշահումների քննության համար պատասխանատու քննչական մարմինների անկախության մակարդակի բարձրացմանն ուղղությամբ իշխանությունների կողմից գործադրվող ջանքերը: Նա կոչ է անում հայաստանյան իշխանություններին էլ ավելի ամրապնդել Հատուկ քննչական ծառայության անկախությունը և ավելացնել աշխատանքային բեռը հաղթահարելու ՀԲԾ-ի կարողությունները, մասնավորապես՝ որպեսզի վերացվի ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի հնարավոր գործերի շրջանակում ապացույցների հավաքման գործում ՀԲԾ-ի կախվածությունը ոստիկանության ծառայողներից:
79. ԽԿԿ-ի 2013 թվականի ապրիլին Հայաստան կատարած այցի զեկույցը մի շարք կոնկրետ և շատ օգտակար հանձնարարականներ է պարունակում, որոնց նպատակն է ապահովել հաշվետվողականությունը, ի թիվս այլ միջոցների՝ բարելավելով մարմնական վնասվածքների մասին հաղորդելու գործող ընթացակարգերը և ոստիկանության դաժան վերաբերմունքի հնարավոր դեպքերի առնչությամբ դատախազների կողմից կատարվող գործողությունները: Կարևոր քայլ կլիներ ազատագրկվածների բժշկական զննության գաղտնիության ապահովումը: Մարմնական վնասվածքների մասին այն արձանագրությունները, որոնք համահունչ են դաժան վերաբերմունքի մասին ազատագրկվածի արած հայտարարություններին (կամ, անգամ նման հայտարարության բացակայության դեպքում, կարող են վկայել դաժան վերաբերմունք տեղի ունեցած լինելու մասին), պետք է անհապաղ և կանոնավոր կերպով ուղարկվեն իրավասու դատախազին: ԽԿԿ-ն խորհուրդ էր տվել նաև վերանայել ոստիկանության ծառայողների կողմից դաժան վերաբերմունքի հնարավոր դեպքերին ընթացք տալու համակարգը, մասնավորապես՝ Հատուկ քննչական ծառայության դերը բարձրացնելու միջոցով: Ոստիկանության ծառայողները, ովքեր կապակցված են ոստիկանության այն բաժինների կամ բաժանմունքների հետ, որոնցում տեղի են ունեցել դաժան վերաբերմունքի ենթադրյալ դեպքերը, այլևս չպետք է ներգրավվեն այդ դեպքերով իրականացվող քրեական քննությանը:
80. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ օրենքով և պրակտիկայում ամրապնդել խոշտանգումը և դաժան վերաբերմունքը բացառող

<sup>48</sup> Տե՛ս «[Արդարադատության իրականացումը Հայաստանի Հանրապետությունում](#)», Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Նորվեգիայի հելսինկյան կոմիտե, ՖԻԴՀ, դեկտեմբեր, 2012թ., էջ 10:

երաշխիքները: Մասնավորապես, ազատագրկման մասին ծանուցելու իրավունքները, փաստաբանի և բժշկի հետ տեսակցելու իրավունքները և իրավունքների մասին տեղեկությունների տրամադրումը պետք է արդյունավետորեն երաշխավորված լինեն ազատագրկման սկզբից եթ: Վերոհիշյալ երաշխիքների ընձեռումը չպետք է հետաձգել մինչև ազատագրկման մասին արձանագրության կազմումը: Փաստաբանի օգնությունն ստանալու իրավունքը պետք է լիովին արդյունավետ դարձնել նաև վկայի կարգավիճակով ոստիկանություն հրավիրված անձանց առնչությամբ: Ավելին, Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին՝ ներդնել ոստիկանության կողմից իրականացվող հարցաքննությունների տեսագրությունը, ինչը նախատեսված է Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրով:

81. Հանձնակատարը շեշտում է քրեական գործերի քննության մեթոդների զարգացման կարևորությունը՝ նպատակ հետապնդելով ավելացնել իրեղեն ապացույցների օգտագործումը և նվազեցնել ինքնախոստովանական ցուցմունքի և հարցաքննությամբ ստացված տեղեկությունների վրա հենվելու պրակտիկան: Դրա համար անհրաժեշտ կլինի պատշաճ կերպով վերապատրաստել ոստիկաններին և քննիչներին, ինչպես նաև ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցների և մեթոդների առկայությունը:
82. Լուրջ մտահոգության տեղիք տվող հաջորդ խնդիրը վերաբերում է ստացված այն տեղեկություններին, որոնց համաձայն դատարանները հենվում են ենթադրաբար հարկադրանքի պայմաններում ստացված ապացույցների վրա, հատկապես երբ դա հիմք է ծառայում մեղադրական դատավճռի կայացման համար, քանի որ այդ պրակտիկան հակասում է մարդու իրավունքների եվրոպական և միջազգային ստանդարտներին՝ ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին: Հանձնակատարը ողջունում է իրավական այն նորմերի ընդունումը, որոնք հնարավոր են դարձնում արդարադատության ծախսողման և իրավապահ մարմինների անօրինական գործողությունների դեպքում պատճառված ոչ նյութական վնասի դիմաց հատուցում պահանջելը:
83. Հանձնակատարին մտահոգում է Հայաստանի քրեական արդարադատության համակարգի համատեքստում երեխայանպաստ մոտեցումների բացակայությունը: Իրավունքի և պրակտիկայի մակարդակով ավելին պետք է անել, որպեսզի քրեական արդարադատության համակարգում ապահովվի հարգանք առ երեխաների իրավունքները, և որպեսզի իրավապահ և դատական մարմինների կողմից կայացվող որոշումներում [ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով](#) նախատեսված կարգով հաշվի առնվեն երեխայի լավագույն շահերը: Անկասկած, դաժան վերաբերմունքի արգելքն առավել հիմնավորապես կիրառելի է անչափահասներին առնչվող գործերի շրջանակում:

### 1.2.2 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

84. Նախկին Հանձնակատարը 2011 թվականին Հայաստան կատարած այցի զեկույցում անդրադարձել էր բանակում մարդու իրավունքների վիճակին և խորհուրդ էր տվել, մասնավորապես, իրականացնել ոչ մարտական իրավիճակներում մահվան դեպքերի, զինված ուժերում խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննություն, ապահովել տուժողների մասնակցությունը բռնության գործերին առնչվող քննության և դատական գործընթացներին և բարձրացնել հանրության վստահությունը դրանց նկատմամբ, զինծառայողների համար ապահովել զինվորական հիերարխիայից դուրս գործող բողոքարկման անկախ մեխանիզմների հասանելիությունը, և ուժեղացնել քաղաքացիական հասարակության վերահսկողությունը և մոնիթորինգը:<sup>49</sup>
85. Վերոհիշյալ զեկույցի հրապարակումից հետո Հանձնակատարը շարունակել է ստանալ տեղեկություններ ոչ մարտական իրավիճակներում մահվան դեպքերի, զորակոչիկների նկատմամբ դաժան վերաբերմունքի և արտականոնադրական ճնշումների վերաբերյալ:

<sup>49</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի [զեկույց](#) 2011 թվականի հունվարի 18-21-ը Հայաստան կատարած այցից հետո, CommDH(2011)12, 137-րդից 149-րդ պարբերություններ:

Խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագիրը, որով որոշակի միջոցառումներ են նախատեսվել այս կապակցությամբ: 2014 թվականի հոկտեմբերի այցի ընթացքում պաշտպանության նախարարը տեղեկացրեց Հանձնակատարին, որ վերջին հինգ տարիներին նվազել է զինված ուժերում բռնությանը վերագրվող և ոչ մարտական իրավիճակներում տեղի ունեցած մահվան դեպքերի թիվը: Այնուամենայնիվ, իշխանությունները և ՀԿ-ները տարբերվող տվյալներ են տրամադրում ոչ մարտական իրավիճակներում տեղի ունեցած մահվան դեպքերի վերաբերյալ՝ թե՛ թվաքանակների, թե՛ պատճառների դասակարգման առումներով:<sup>50</sup> Որոշ ՀԿ-ներ իրենց վիճակագրության մեջ ներառում են զինվորական ստորաբաժանումներից դուրս ունեցած մահվան դեպքերը, և դեպքերը դասակարգում են այլ կերպ, քան իշխանությունները. օրինակ, մահվան որոշ դեպքեր, որոնք պաշտոնապես որակվում են որպես ինքնասպանություն կամ մահվան ելքով դժբախտ պատահար, ՀԿ-ների կողմից դասակարգվում են որպես սպանություն: Փյունավոր դատախազը տեղեկացրեց Հանձնակատարին, որ զինծառայողների մահվան առնչությամբ հարուցված քրեական գործերից մի քանիսն ավարտվել են մեղադրական դատավճիռների արձակմամբ, մինչդեռ ուրիշները կարճվել են կամ դադարեցվել, իսկ որոշ դեպքերով քրեական գործի քննությունը դեռևս շարունակվում է: Պարզ չէ, թե արդյոք ուղղակի կատարողներից զատ քննվել կամ պատժվել է նաև հրամանատարական սպայական անձնակազմը: Զինծառայողին ինքնասպանության հասցնելու համար դատապարտվածներից ոմանք համաներման արդյունքում ազատ են արձակվել բանտից:

86. Տեղեկություններ են ստացվել որոշակի թերությունների մասին, որոնք բացասաբար են ազդել բանակում մարդու իրավունքների ծանր խախտումների դեպքերին առնչվող քննությունների և դատավարությունների վրա: Մասնավորապես, Հանձնակատարը մտահոգիչ տեղեկություններ է ստացել ազգականներից զինծառայողների մահվան քննությունների առնչությամբ, որոնք երբեմն չափազանց երկար են տևում:<sup>51</sup> Ստացված տեղեկությունների մեջ նշված հիմնախնդիրներից շատերը բնորոշ են քրեական արդարադատության ողջ համակարգին, և անհարկի ձգձգումներից զատ, վերաբերում են դատական փորձաքննությունների թերություններին, հարկադրված ցուցմունքներին և խոստովանություններին, հանցագործությունների ոչ պատշաճ որակմանը և տուժողների ազգականներին չներգրավելուն: Հանձնակատարին ապշեցնում է տուժողների ընտանիքների և քաղաքացիական հասարակության այդ քննությունների նկատմամբ անվստահության բարձր մակարդակը: Հաճախ հնչեցվող բողոքներից է այն, որ տուժողներին չեն թույլատրում ծանոթանալ գործի նյութերին, իսկ նրանց տրամադրած տեղեկությունները հավուր պատշաճի հաշվի չեն առնվում իշխանությունների կողմից: Անգամ այն գործով, որի արդյունքում կայացվել էին մեղադրական դատավճիռներ (2010 թվականին Արտակ Նազարյանի մահվան դեպքը, որի առնչությամբ հինգ անձանց նկատմամբ ազատազրկման պատիժներ էին նշանակվել՝ 3-10 տարի ժամկետներով), հանգուցյալի ազգականները կարծում են, որ արդարադատություն չի իրականացվել՝ պնդելով, թե նա սպանվել է, այլ ոչ՝ հասցվել ինքնասպանության, ինչպես քննությունն էր եզրակացրել:
87. Զինվորական դատախազը 2013 թվականի հուլիսին աշխատանքային խումբ էր ստեղծել հինգ ՀԿ-ների մասնակցությամբ, որի նպատակն էր ուսումնասիրել ոչ մարտական իրավիճակներում տեղի ունեցած մահվան դեպքերի նախկինում իրականացված քննությունները: Այնուհանդերձ, ՀԿ-ներից երկուսն անվստահություն էին հայտնել գործընթացի նկատմամբ և որոշել էին լքել խումբը՝ առանձնահատուկ ավստասանք հայտնելով այն փաստի առնչությամբ, որ խումբն իրավունք ուներ քննել միայն 2011 թվականից հետո տեղի ունեցած դեպքերը:

<sup>50</sup> Մահվան դեպքերն իշխանությունների կողմից դասակարգվում են որպես սպանություն հակառակորդի կողմից, սպանություն, ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելը, բռնություն, ականի պայթյուն, զենքի օգտագործման կանոնների խախտում, հիվանդություն, անզգուշությամբ մահ պատճառելը, ավտոտրանսպորտային պատահար, դժբախտ պատահար:

<sup>51</sup> Հանձնակատարը կոնկրետ տեղեկություններ է ստացել Տիգրան Օհանջանյանի (մահացել է 2007 թվականին), Արթուր Ղազարյանի (2010թ.), Արայիկ Ավետիսյանի (2001թ.), Արտակ Նազարյանի (2010թ.) և Վալերիկ Մուրադյանի (2010թ.) մահվան դեպքերի մասին:

88. Պաշտպանության նախարարն ընդգծեց, որ խախտումների համար մեղավորներին համարժեքորեն պատժելը հույժ կարևոր է ապագա խախտումները կանխելու տեսանկյունից: Նա Հանձնակատարին տեղեկացրեց կանխարգելման ուղղությամբ գործադրվող ջանքերի մասին, որոնք ներառում են, մասնավորապես, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ժողովրդավարական հսկողության ամրապնդումը, մարդու իրավունքների վերաբերյալ կրթությունը և իրազեկության բարձրացումը դպրոցներում և ռազմական ակադեմիայում, բանակի իրամանատարների պատասխանատվության բարձրացումը, քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ ներգրավումը և զինվորական ծառայության անցնողների ավելի լավ պատրաստումը:
89. Հանձնակատարը դրական համարեց այն փաստը, որ բանակի և պաշտպանության նախարարության առնչությամբ տեղի են ունենում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից մոնիթորինգի և համագործակցության աշխատանքներ: Այնուհանդերձ, իրավապաշտպանները նաև նշել են, որ մարդու իրավունքների խախտումների ենթադրյալ դեպքերին առնչվող տեղեկությունների ստացման առումով իրենք խոչընդոտների են հանդիպել, իսկ որոշ դեպքերում սպառնալիքներ են ստացել իշխանություններին քննադատող տեղեկությունները հրապարակելիս:
90. Հանձնակատարը դրական է գնահատում հայաստանյան իշխանությունների ջանքերը՝ ուղղված զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման իրավունքի վաղուց առկա հիմնախնդրի արդյունավետ լուծմանը:<sup>52</sup> Այլընտրանքային ծառայության մասին օրենքում փոփոխություններ կատարվեցին 2013 թվականի հունիսին՝ խղճի հիմքով առարկողների համար հասանելի դարձնելով իրապես քաղաքացիական ծառայության անցնելու տարբերակը: Հանձնակատարը տեղեկացվեց, որ իրենց խղճի կամ կրոնական համոզմունքների հիմքով զինվորական ծառայության չանցնելու համար կալանավորված, քրեական հետապնդման ենթարկվող կամ դատապարտված բոլոր անձանց հնարավորություն է ընձեռվել դիմելու այլընտրանքային ծառայություն անցնելու համար, ընդ որում՝ նրանց կրած կալանավորման/ազատագրկման ժամկետը պակասեցվել է ծառայության տևողությունից: 2013 թվականից սկսած Այլընտրանքային ծառայության հանրապետական հանձնաժողովն է ստանում և քննարկում այլընտրանքային ծառայության մասին դիմումները, որոնց ճնշող մեծամասնությունը բավարարվում է: Հանձնակատարի բոլոր զրուցակիցները նշեցին, որ խղճի հիման վրա առարկողներն իրենց կրոնական համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու համար այլևս չեն ենթարկվում քրեական հետապնդման, պատժի կամ ազատագրկման:

*Եզրակացություններ և հանձնարարականներ*

91. Հանձնակատարն ակտիվացնել է նկատում, որ Հայաստանի բանակում շարունակվում են ոչ մարտական իրավիճակներում տեղի ունեցող բռնության դեպքերը, որոնք երբեմն հանգեցնում են մահվան: Նա կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ լրացուցիչ թափ հաղորդել այս խնդրի դեմ արդյունավետ պայքարի ջանքերին: Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բոլոր բողոքների արդյունավետ քննությունը հույժ կարևոր է ապագա խախտումները կանխելու համար: Այս համատեքստում պետք է ուշադրության դարձնել տուժողների ընտանիքների և հանրության վստահության ամրապնդմանը: Պատասխանատու մարմինները պետք է տեղեկություններ տրամադրեն հանրությանը մահվան դեպքերի և մարդու իրավունքների այլ խախտումների դեպքերի քննության արդյունքների վերաբերյալ:
92. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ իրագործել Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրով նախատեսված այն միջոցառումները, որոնք ուղղված են բանակում մարդու իրավունքների խախտումների վերացմանը, դրանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը և զինծառայողների համար սեփական բժշկական գործերի հասանելիության ապահովմանը: Միջոցառումների ծրագրով առաջարկվում է նաև, որպեսզի օմբուդսմանն ամենամյա զեկույց

<sup>52</sup> Այս առումով համեմատության համար տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի [զեկույցը](#) 2011 թվականի հունվարի 18-21-ը Հայաստան կատարած այցից հետո, CommDH(2011)12, 153-րդից 158-րդ պարբերություններ:

հրապարակի զինված ուժերում մարդու իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև որպեսզի Հայաստանում ստեղծվի ռազմական օմբուդսմանի ինստիտուտը: Հանձնակատարը նաև կոչ է անում իշխանություններին՝ մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ներին լիովին ներգրավել Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրի իրագործմանը:

EMBARGO UNTIL 10 MARCH 2015 AT 11 AM (PARIS TIME)

## 2 ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՁԵՆՂԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

93. Ձենդերային հավասարությունը մարդու իրավունքների հիմնարար սկզբունք է, և կանանց իրավունքները մարդու համընդհանուր իրավունքների անօտարելի, անքակտելի և անբաժանելի մասն են: Ձենդերային հավասարությունը նաև սոցիալական արդարության երաշխավորման նախադրյալ է, ժողովրդավարության պարտադիր նախապայման և տնտեսական զարգացման նախադրյալ:<sup>53</sup> Հայաստանի բնակչության կեսից ավելին կանայք են,<sup>54</sup> և խիստ կարևոր է, որպեսզի նրանք լիարժեք մասնակցություն և ներդրում ունենան երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքին՝ չհանդիպելով խոչընդոտների և խտրականության:
94. Նախկին Հանձնակատարը 2007 թվականին Հայաստան կատարած այցից հետո կազմած զեկույցում անդրադարձել է կանանց իրավունքներին և ընտանեկան բռնությանն առնչվող հիմնախնդիրներին:<sup>55</sup> Այն ժամանակ, թեպետ որոշակիորեն համաձայնություն կար հասարակությունում կանանց կարգավիճակը և դերը բարելավելու անհրաժեշտության մասին, միևնույն ժամանակ պաշտոնյաների շրջանում առկա էր կանանց նկատմամբ բռնության ներառյալ ընտանեկան բռնության հիմնախնդիրները քննարկելու որոշ կասկածամտություն և դժկամություն: Որոշ գրուցակիցներ հերքում էին այդ երևույթի գոյությունը, մինչդեռ ուրիշներն ընդունում էին դրա գոյությունը, սակայն կարծում էին, որ այն պետք է լուծվի ընտանիքի ներսում: Վերոհիշյալ զեկույցում ընդգծվում էր, որ կանանց նկատմամբ բռնության խնդիրը պետք է լուծել՝ որպես իրավունքների հիմնարար խնդիր, տուժողները պետք է համարժեքորեն պաշտպանվեն՝ ներառյալ բավարար թվով ապաստարանների առկայության ապահովման ճանապարհով, լրացուցիչ ուսումնասիրություններ պետք է իրականացնել և բարձրացնել երևույթի վերաբերյալ հանրության իրազեկությունը, և պետք է ընդունել ընտանեկան բռնության մասին օրենք:
95. 2013 թվականի ընթացքում Հանձնակատար Մույժնիեկսը տեղեկություններ է ստացել բանավոր և ֆիզիկական հարձակումների, ինչպես նաև կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձանց և կազմակերպությունների դեմ ուղղված սպառնալիքների մասին, որոնք տեղի են ունեցել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի առնչությամբ ծագած հակասությունների շրջանակներում (տե՛ս ստորև՝ 2.4.1 բաժինը):
96. Տարբեր գրուցակիցների, այդ թվում՝ պաշտոնական ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում Հանձնակատարը բաց քննարկումներ ծավալեց կանանց իրավունքներին և Ձենդերային հավասարությանն առնչվող իրավիճակի վերաբերյալ, մասնավորապես՝ կենտրոնանալով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդիրների ուղղությամբ: Իշխանություններն ընդհանուր առմամբ ընդունում են այս ոլորտներում մարտահրավերների և հիմնախնդիրների գոյությունը, ինչպես նաև դրանք լուծելու համար ավելին անելու անհրաժեշտությունը: Սա կառուցողական հիմք է հասարակությունում կանանց վիճակի բարելավման և նրանց իրավունքների պաշտպանության մակարդակի բարելավման նպատակ հետապնդող վճռորոշ քայլեր իրականացնելու համար:

<sup>53</sup> Տե՛ս Նախարարների կոմիտեի հանձնարարական անդամ պետություններին Ձենդերային հավասարության ստանդարտների և մեխանիզմների մասին, CM/Rec(2007)(17), 21-ը նոյեմբերի, 2007թ., 1-ին պարբերություն:

<sup>54</sup> Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալներով, 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ երկրի մշտական բնակչության թվում 1,573,582-ը կանայք են, 1,443,497-ը՝ տղամարդիկ:

<sup>55</sup> Տե՛ս Թոմաս Համարբերգի զեկույցը 2007 թվականի հոկտեմբերի 7-11-ը Հայաստան կատարած այցից հետո, CommDH(2008)4, 108-րդից 115-րդ պարբերություններ:



## 2.1 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴԱՇՏԸ

### 2.1.1 ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

97. Հայաստանը միացել է կանանց իրավունքների պաշտպանությանը և կանանց նկատմամբ խտրականության վերացմանն առնչվող միջազգային մի շարք փաստաթղթերի: ՄԱԿ-ի համակարգում Հայաստանը 1993 թվականին միացել է [Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին](#) («ՏՍՄԻՄԴ») և [Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին](#) («ՔՔԻՄԴ»), որոնք մասնակից պետություններից պահանջում են տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելիս ապահովել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները (երկու դաշնագրերի 3-րդ հոդվածը): Հայաստանը նաև միացել է [Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիային](#) (անգլ. կրճատ անվանումը՝ «CEDAW»), իսկ 2006 թվականից՝ նաև անհատական զանգատների մեխանիզմի ստեղծման մասին [կամրոստի արձանագրությանը](#): Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Հայաստանի վերաբերյալ [ամփոփիչ դիտարկումներ](#) վերջին անգամ հրապարակել է 2009 թվականի փետրվարին:
98. Հայաստանի նկատմամբ կիրառելի են կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի բազմաթիվ իրավական ստանդարտներ և այլ փաստաթղթեր: ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածով նախատեսվում է, որ Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների իրականացումը պետք է ապահովել՝ բացառելով սեռի հիմքով խտրականությունը:<sup>56</sup> Հայաստանը վավերացրել է նաև Եվրոպական կոնվենցիայի [թիվ 12 արձանագրությունը](#), որով խտրականությունից պաշտպանության շրջանակն ընդլայնվում է՝ տարածվելով օրենքով նախատեսված բոլոր իրավունքների վրա: Ավելին, [Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան](#), որին Հայաստանը միացել է 2004 թվականին, ճանաչում է աշխատանքի և զբաղվածության ոլորտներում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը՝ բացառելով սեռի հիմքով պայմանավորված խտրականությունը (20-րդ հոդված): Խարտիայի «Ե» հոդվածը պարունակում է նաև խտրականությունն արգելող դրույթ: Բացի դրանից, [Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիան](#) Կոնվենցիայով նախատեսված միջոցառումների իրականացմանն անդրադառնալիս նախատեսում է գենդերային հավասարությունը և գենդերային բաղադրիչի հաշվառումը:<sup>57</sup>
99. Եվրոպայի խորհրդի ստանդարտները կանանց իրավունքների և գենդերային հավասարության ոլորտում լրացվել են Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականներով, մասնավորապես՝ Գենդերային հավասարության ստանդարտների և մեխանիզմների վերաբերյալ հանձնարարականում:<sup>58</sup> Ընդունվել է նաև [Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության 2014-2017թթ. ռազմավարությունը](#), որը կենտրոնանում է ռազմավարական հինգ նպատակների շուրջ. (1) պայքարը գենդերային կարծրատիպերի և սեքսիզմի դեմ, (2) կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը և պայքարը դրա դեմ, (3) կանանց համար արդարադատության հավասար հասանելիության երաշխավորումը, (4) քաղաքական և հանրային որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցության ապահովումը, և (5) գենդերային բաղադրիչի ներառումը քաղաքականության բոլոր ուղղություններում և միջոցառումներում:

### 2.1.2 ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

100. Հայաստանի հանրային քաղաքականություն իրագործող, իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը ներառում են կանանց նկատմամբ խտրականությունն արգելող դրույթներ:

<sup>56</sup> [Emel Boyraz v. Turkey](#) գործով (դիմում թիվ 61960/08, դատավճիռը՝ 2-ը դեկտեմբերի, 2014թ.), Եվրոպական դատարանը վճռեց, որ տեղի է ունեցել սեռի հիմքով խտրականություն, և տեղի է ունեցել 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի համադրությամբ խախտում:

<sup>57</sup> Հայաստանի կոնվենցիան վավերացրել է 2008 թվականին:

<sup>58</sup> Տե՛ս [CM/Rec\(2007\)17](#), 21-ը նոյեմբերի, 2007թ.:

Հայաստանի Սահմանադրության 14.1 հոդվածով նախատեսվում է, որ բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առջև, և որ արգելվում է խտրականությունը՝ կախված սեռից: Քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով քրեականացվում է քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը՝ ներառյալ սեռի հիմքով:<sup>59</sup> Հայաստանի աշխատանքային օրենսգրքում աշխատանքային օրենսդրության սկզբունքների թվարկումը ներառում է գենդերային հավասարությունը, և նախատեսվում է, որ տղամարդիկ և կանայք պետք է հավասար աշխատավարձ ստանան միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց: Օրենսգրքով նաև նախատեսվում է, որ աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումներ են տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների խախտումները և սեռական հետապնդումները գործընկերների նկատմամբ:<sup>60</sup>

101. 2013 թվականին ընդունվեց և ուժի մեջ մտավ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը:<sup>61</sup> Օրենքի նպատակն է սահմանել գենդերային հավասարությանն առնչվող հասկացությունները և եզրույթները՝ ներառյալ ուղղակի և անուղղակի խտրականության, ինչպես նաև սեռական ոտնձգության կոնկրետ ձևերը: Նշված են նաև գենդերային հավասարության պետական քաղաքականության և ծրագրերի մշակումը և իրագործումը, ինչպես նաև դրանց գնահատումը և մոնիթորինգը՝ ներառյալ վիճակագրական տվյալների հավաքման ճանապարհով: Օրենքն անդրադառնում է ինստիտուցիոնալ մեխանիզմին՝ «պետական լիազոր մարմնին», ինչպես նաև կենտրոնական և տեղական մակարդակներում գենդերային հավասարության ապահովման համար պատասխանատու մարմիններին: Ճանաչվում է գենդերային հավասարության ապահովման գործում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օժանդակող դերակատարումը, մասնավորապես, օրինակ, քաղաքականության, օրենքների և ծրագրերի իրագործմանը մասնակցելու և իրագործման մոնիթորինգի, ինչպես նաև հանրության իրազեկման աշխատանքներ իրականացնելու ճանապարհով: Օրենքում ընդհանուր գծերով նշվում է գենդերային հավասարության սկզբունքի խախտումների հետևանքով իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների հարցերով համապատասխան մարմիններին դիմելու անհատների հնարավորությունը: Ի վերջո, նշվում է, որ գենդերային հավասարության քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների իրագործումը ֆինանսավորվելու է պետական բյուջեից, ինչպես նաև այլ ներառյալ միջազգային աղբյուրներից:
102. Հանձնակատարի գրուցակիցներից մի քանիսն ընդգծեցին, որ անհրաժեշտ է ներդնել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի իրագործման արդյունավետ ընթացակարգեր և գործիքներ՝ ներառյալ մոնիթորինգի և վերահսկողության ընթացակարգեր, խտրականությունը բացառող իրավական մեխանիզմներ, և ապահովել, որպեսզի պարտականություններ կրող համապատասխան սուբյեկտներն ունենան իրենց գործառույթները կատարելու համար պահանջվող կարողությունները: Խիստ կարևոր է նաև բարձրացնել նոր ընդունված օրենքի վերաբերյալ իրազեկությունը, որպեսզի այն հավուր պատշաճի ընկալվի և կիրառվի հանրության կողմից: Հանձնակատարի այցի ընթացքում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը նշեց, որ որպես օրենքի իրագործման գործիք՝ մշակվել է կառավարության որոշման նախագիծ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներին

<sup>59</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածը. «(1) Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, (2) Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

<sup>60</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության [աշխատանքային օրենսգրքը](#), 2004թ., հոդվածներ 3, 178.2 և 221.4:

<sup>61</sup> Տե՛ս «Կանանց եվ տղամարդկանց հավասար իրավունքների եվ հավասար հնարավորությունների ապահովման մասին» [թիվ 57 օրենքը](#), 2013թ.:

առնչվող մոնիթորինգի և տեղեկությունների փոխանակման մասին. Հանձնակատարը կողջուներ այս թեմայի վերաբերյալ ցանկացած լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը: Բացի դրանից, քաղաքացիական ծառայողների համար իրականացվել են դասընթացներ գենդերային հավասարության թեմայով, և գենդերային հավասարության քաղաքականության, օրենքների և ենթօրենսդրական ակտերի կիրառության գործում նրանց օգնելու համար մշակվել են ուղեմիջներ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար:

103. Հայաստանը ներկայումս չունի խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենք: Հանձնակատարը տեղեկացվեց, որ 2012 թվականին մշակվել է նախագիծ օմբուդսմանի գրասենյակի կողմից խորհրդակցելով ազգային և միջազգային փորձագետների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Օրենքի նախագծում սահմանվում են խտրականությունը և դրա ձևերը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով զբաղվածության ոլորտում խտրականությանը: Սահմանված են պարտականություններ կրող պատասխանատու մարմինների և այլ սուբյեկտների, մասնավորապես՝ Ազգային ժողովի, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի (օմբուդսմանի), կառավարության, աշխատանքի պետական տեսչության, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ անձանց և կազմակերպությունների լիազորությունները: Օմբուդսմանը նախագծով ձևաչափում է որպես խտրականության դեմ պայքարի մարմին, որն իրավասու է ստանալ և քննել ենթադրյալ խտրականությանն առնչվող բողոքները: Այնուհանդերձ, օրենքի նախագիծը քննարկման և ընդունման համար չի ներկայացվել Ազգային ժողովին, որի պատճառն ըստ երևույթին եղել են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի ընդունման առնչությամբ 2013 թվականին բռնկված հակասությունները: Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրով նախատեսվում են Հայաստանում խտրականության դեմ պայքարի առանձին օրենք ընդունելու նպատակահարմարության որոշմանն ուղղված լրացուցիչ քննարկումներ:
104. Հայաստանի կառավարությունը հաստատել է [գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը](#) և «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը»: Գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիրը պարունակում է մի շարք նպատակներ և միջոցառումներ, որոնց նպատակը տղամարդկանց և կանանց միջև հավասարության բարելավումն է, սեռով պայմանավորված խտրականության վերացումը և գենդերային կարծրատիպերի նվազեցումը: Ինչ վերաբերում է քաղաքական ներկայացվածությանը և որոշումների կայացմանը, ապա ծրագրով նպատակ է դրվում, օրինակ, ապահովել կանանց 30% ներկայացվածությունը որոշումների ընդունման մակարդակներում, շարունակական վերապատրաստումների միջոցով ավելի գենդերազգային դարձնել քաղաքացիական ծառայողներին, և զարգացնել կանանց առաջնորդական հմտությունները: Սոցիալ-տնտեսական ոլորտում նախատեսվում է գենդերային բաղադրիչը ներառել բյուջետավորման և ծրագրման գործընթացներին, ձևաչափել և իրագործել հավասար արժեք ունեցող աշխատանքի դիմաց հավասար վճարում ստանալու իրավունքը, միջոցներ ձեռնարկել խրախուսելու ընտանեկան պարտականություններ ունեցող տղամարդկանց և կանանց զբաղվածությունը, օժանդակել կանանց զբաղվածությանը և գործարար գործունեության մեջ ներգրավմանը, և կրճատել կանանց գործազրկությունը և աղքատությունը, մասնավորապես՝ օժանդակության ծրագրեր իրականացնելով բնակչության առավել խոցելի խմբերի համար: Ինչ վերաբերում է կրթությանը, ապա հիմնական կետերը վերաբերում են կրթական համակարգում գենդերային մոդուլի ներդրմանը, որը ներառելու է դասավանդման համապատասխան մեթոդաբանությունը և օժանդակ նյութերը: Առողջապահական ոլորտում, ի լրումն առողջապահական ծառայությունների բարելավման միջոցառումների, ծրագրով նախատեսվում է նաև սեռով պայմանավորված ընտրովի աբորտների կանխարգելումը (տե՛ս ստորև՝ համապատասխան բաժինը): Մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտում հատուկ ուշադրություն է դարձվում լրատվամիջոցներն ավելի գենդերազգային դարձնելուն, լրատվամիջոցների կողմից գենդերային հավասարության խնդիրների լուսաբանումը խրախուսելուն և սեռով պայմանավորված կարծրատիպերը և խտրականությունը վերացնելուն:
105. Թեպետ միջազգային և ներպետական վերոհիշյալ ստանդարտները, իրավական պարտավորությունները, քաղաքականությունները և ծրագրերը տեսական լավ հիմք են ձևավորում գենդերային հավասարության համար, դա ինքնին ըստ երևույթին բավարար չէ:

մտածելակերպի և գործելակերպի հիմնարար փոփոխությունների հասնելու համար: Հանձնակատարի գրուցակիցները կանանց ստորադասելու տարածված պրակտիկան և ընտանիքում և հասարակությունում երկու սեռերի նկատմամբ կիրառվող կարծրատիպային դերերը նկարագրելիս հիշատակեցին ավանդական արժեքները և հայրիշխանական դիրքորոշումները: Կանանց դերը հիմնականում ասոցացվում է ընտանիքին օժանդակելու և երեխաներին դաստիարակելու հետ (սրանք հիմնականում չվճարվող աշխատանքի ոլորտներ են), և կասկածի տակ է դրվում հանրային ոլորտում կանանց առաջնորդությունը: Դրանով կարելի է բացատրել ղեկավար պաշտոններում և որոշումների կայացման պաշտոններում կանանց թվային ցածր մասնաբաժինը, անգամ այն ոլորտներում, որոնցում աշխատողների մեծամասնությունը կանայք են, օրինակ՝ կրթության և առողջապահական համակարգերում:<sup>62</sup> Դրանով կարելի է բացատրել նաև հավասար արժեք ունեցող աշխատանքի դիմաց վճարվող աշխատավարձերի անհավասարության մասին ստացված տեղեկությունները. ՀԿ-ների տվյալներով, կանանց միջին աշխատավարձը հավասար է տղամարդկանց միջին աշխատավարձի 64.4%-ին:<sup>63</sup>

106. Ցածր է մնում պետական կառույցներում կանանց քաղաքական մասնակցության և ներկայացվածության մակարդակը: 131 պատգամավորներից ընդամենը 14-ն են կանայք, իսկ կառավարության 18 նախարարներից՝ միայն երկուսը (մշակույթի և սփյուռքի պորտֆելները): 10 մարզերի մարզպետների թվում չկան կին մարզպետներ: 21 քաղաքապետներից ոչ մեկը կին չէ:<sup>64</sup> Հանձնակատարի այցի ընթացքում Վարչապետը Հանձնակատարին տեղեկացրեց, որ որոշվել է մարզպետների 10 կին տեղակալների նշանակել. Հանձնակատարը կողջունեք այս առումով լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը: Ըստ երևույթին, տեղական մակարդակով մի փոքր առաջընթաց է արձանագրվել, քանի որ ավելացել է կին համայնքապետների թիվը:
107. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն 2009 թվականի ամփոփիչ դիտարկումներում խնդրեց, որպեսզի Հայաստանը շարունակի վերանայել դպրոցական բոլոր դասագրքերը՝ գենդերային կարծրատիպերը վերացնելու նպատակով:<sup>65</sup> ՀԿ-ները տեղեկացրեցին Հանձնակատարին, որ Հայաստանի դպրոցներում փորձարկված գենդերային հավասարության մոդուլն ակնկալվում է առավել լայնորեն ներդնել կրթական համակարգում: Մշակվել են նաև հայեցակարգ, դասագիրք և մեթոդաբանական ձեռնարկ ուսուցիչների համար:

### 2.1.3 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐՈՂՆԵՐԸ

108. Հանձնակատարն այցի շրջանակում տեղեկություններ ստացավ կանանց իրավունքների և գենդերային հավասարության առնչությամբ պատասխանատվություն և պարտականություններ կրողների մասին: Կանանց իրավունքների և գենդերային հավասարության հարցերով պատասխանատու հիմնական մարմինը, ըստ երևույթին, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, մասնավորապես՝ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը, որն ստեղծվել է 2002 թվականին: Վարչության կազմում կա կանանց հիմնահարցերի բաժին, որը պատասխանատու է գենդերային հարցերի, թրաֆիքինգի դեմ պայքարի և հասարակությունում կանանց դերի բարձրացման ոլորտներում հետազոտությունների և ծրագրերի իրականացման համար: Ստացված տեղեկությունների համաձայն, բոլոր 10 մարզերի մարզպետարաններում ստեղծվել են մայրության և երեխաների պաշտպանության բաժիններ, ինչպես նաև գենդերային աշխատանքային խմբեր, որոնք գործում են վերոհիշյալ նախարարության ենթակայությամբ:

<sup>62</sup> Տե՛ս «Լռության մեջ հպարտություն չկա. ընտանիքում բռնության դեմ պայքարը Հայաստանում», «Ամենօրի ինթերնեշնլ», 2008թ., էջ 9:

<sup>63</sup> Տե՛ս Համընդհանուր պարբերական գնահատման համար շահագրգիռ անձանց տրամադրած [տեղեկությունների ամփոփագիրը](#), Մարդու իրավունքների խորհուրդ, 7-ը նոյեմբերի, 2014թ., 34-րդ պարբերություն:

<sup>64</sup> Տե՛ս Գենդերային հիմնախնդիրներով ԵԱՀԿ-ի գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Ջուն Ցայլինի [գեկույցը](#), 2013թ.:

<sup>65</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի [ամփոփիչ դիտարկումները](#), 2009թ., 31-րդ պարբերություն:

109. Վարչապետին կից կանանց հարցերով խորհուրդն ստեղծվել է 2000 թվականին՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում, ինչպես նաև պետական և հանրային կառավարման բոլոր մակարդակներում կանանց կարգավիճակի բարձրացմանն ու կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը նպաստելու նպատակով: Խորհուրդն իր կարգավիճակով հանդիսանում է գենդերային հավասարությանն առնչվող քաղաքականության, ռազմավարությունների և օրենքների իրականացման ազգային մեխանիզմը: Խորհրդի հիմնական գործառույթներն առնչվում են փորձագիտական եզրակացությունների և խորհուրդների տրամադրմանը, քաղաքականության և աշխատանքների մոնիթորինգին և գնահատմանը, և հանրության իրազեկության բարձրացմանը: Խորհրդի նիստերը գործնականում գումարվում են տարին երկու կամ երեք անգամ: Խորհրդի անդամների թվում ներկայացված են տարբեր նախարարություններ, ՀԿ-ներ և միջազգային կազմակերպություններ:
110. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն 2009 թվականի ամփոփիչ դիտարկումներում հիշեցրեց հայաստանյան իշխանություններին, որ նրանք պարտավոր են ապահովել գենդերային հավասարության համար կառավարության հաշվետվողականությունը և Կոնվենցիայով նախատեսված մարդու իրավունքների իրականացումը կանանց կողմից:<sup>66</sup> Կոմիտեն կոչ արեց Հայաստանին ընդունել գենդերային հավասարության մասին օրենք, որով կստեղծվեր կանանց դերի բարձրացման ազգային մեխանիզմ, որն ապահովված կլիներ գենդերային հավասարության ոլորտում միջազգային պարտավորությունների, ազգային քաղաքականությունների, օրենքների և ծրագրերի իրագործումը համակարգելու և մոնիթորինգի ենթարկելու համար անհրաժեշտ կադրային և ֆինանսական ռեսուրսներով: Վերոհիշյալ մարմիններն ըստ երևույթին ոչ լիարժեքորեն են պատրաստ կատարել նշված գործառույթները, և «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» 2013 թվականի օրենքում հստակորեն նշված չէ, թե ով է պատասխանատու՝ «պետական լիազոր մարմինը» (տե՛ս վերը՝ 101-րդ պարբերությունը):
111. Հանձնակատարը նաև հարկ է համարում նշել, որ Ազգային ժողովում գենդերային հարցերը վերապահված են մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին: Առողջապահության, մայրության և մանկության հարցերով պատասխանատու է մեկ այլ հանձնաժողով:

*Եզրակացություններ և հանձնարարականներ*

112. Գենդերային հավասարությունը ժողովրդավարության և մարդու իրավունքների պարտադիր նախադրյալ է: Այն ազդում է ողջ հասարակության վրա և չպետք է համարել բացառապես կանանց հիմնախնդիրը: Թեպետ գենդերային հավասարության սկզբունքը պետությունների մեծ մասում լայնորեն ընդունվել է, և գոյություն ունեն համապատասխան քաղաքականություններ, սկզբունքների և պրակտիկայի միջև դեռևս ձեղքվածք գոյություն ունի:
113. Հանձնակատարը ողջունում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի ընդունումը՝ որպես դրական քայլ գենդերային հավասարությունն ապահովելու հանձնառությունն ազգային օրենսդրությամբ ամրագրելու և կյանքի տարբեր ոլորտներում սեռի հիմքով խտրականությունն արգելելու ուղղությամբ: Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին գործնականում ի կատար ածել օրենքը՝ լրամշակելով դրա որոշ դրույթները (օրինակ՝ պատասխանատվություն և պարտականություններ կրողների և գենդերային հավասարության մեխանիզմի մասով) և մշակելով գործառույթային իրագործման մեխանիզմներ: Պարտականություններ կրողներին պետք է տրամադրել իրենց գործառույթներն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսները: Ի վերջո, հանրությունը պետք է բավականաչափ տեղեկացված լինի օրենքի մասին, որպեսզի կարողանա օգուտ քաղել դրանից:

<sup>66</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի [ամփոփիչ դիտարկումները](#), 2009թ., 18-րդ և 19-րդ պարբերություններ:

114. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենք ընդունել այն աշխատանքի հիման վրա, որն արդեն իսկ իրականացվել է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից խորհրդակցելով այլ սուբյեկտների՝ ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Այս գործընթացի կարևոր բաղադրիչ կարող է լինել հավասարությունն ապահովող և բազմաբնույթ հիմքերով խտրականությունն արգելող ազգային անկախ և արդյունավետ կառույցի լիազորումը: Այս առումով օգտակար ուղենիշներ կարող է պարունակել [Հավասարության ապահովման ազգային կառույցների մասին Հանձնակատարի եզրակացությունը](#) (2011թ.):
115. Հանձնակատարը գտնում է, որ կյանքի չեն կոչվել գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրում և «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրում» զետեղված բազմաթիվ լավ միջոցառումները և գաղափարները: Հանձնակատարը շեշտում է, որ անհրաժեշտ է իրականացնել 2015 թվականի վերջին ավարտվող գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրի իրագործման պատշաճ և անկախ գնահատում՝ խորհրդակցելով համապատասխան ոլորտներում աշխատող ՀԿ-ների հետ: Այս գործընթացը կարող է հիմք ծառայել հետագա քայլերի, օրինակ՝ կանանց իրավունքների և գենդերային հավասարության ամրապնդմանն ուղղված կառավարական քաղաքականության նոր փաստաթղթերի մշակման համար: Նշված փաստաթղթերը պետք է կոնկրետ միջոցառումներ և դրանց իրագործման ժամանակացույց պարունակեն, որոնք պետք է կանոնավոր կերպով մշտադիտարկվեն:
116. Հանձնակատարը խորապես համոզված է, որ կրթական համակարգը պետք է գերծ լինի գենդերային կողմնակալությունից և կարծրատիպերից: Նա կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ նոր թափ հաղորդել այդ ուղղությամբ գործադրվող ջանքերին և ներդնել կրթական այնպիսի գործիքներ, որոնք կընդգծեն աղջիկների և տղաների, տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը՝ հիմնվելով ՀԿ-ների կողմից արդեն իսկ կատարված աշխատանքի վրա:
117. Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին՝ կոնկրետ քայլեր իրականացնել կանանց իրավազորելու և հանրային ու քաղաքական կյանքում նրանց մասնակցությունն ավելացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ ընդունելով համապատասխան օրենսդրություն և իրականացնելով կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցության թեմայով հանրության իրազեկության բարձրացման քարոզարշավներ:
118. Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին՝ ապահովել կանանց իրավունքների և գենդերային հավասարության առնչությամբ պետության վավերացրած միջազգային փաստաթղթերի, ստանձնած պարտավորությունների և միջազգային տարբեր մարմինների հանձնարարականների լայն հրապարակումը և քննարկումը ողջ հասարակությունում: Հատկապես կարևորվում է բողոքարկման առկա մեխանիզմների մասին մարդկանց իրազեկելը: Հանձնակատարն ընդգծում է նաև քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև իրավապահ մարմիններում, դատական համակարգում և համապատասխան այլ ոլորտներում աշխատող անձանց վերապատրաստման ուսումնական ծրագրերում այդ ստանդարտները և հանձնարարականները ներառելու կարևորությունը:

## 2.2 ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

119. Հանձնակատարը հարկ է համարում հիշեցնել, որ կանանց նկատմամբ բռնությունը՝ ներառյալ ընտանեկան բռնությունը, լուրջ մտահոգության տեղիք է տալիս Եվրոպայում, և մարդու իրավունքների խախտում է, որն առկա է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում՝ ներառյալ Հայաստանում: Այս երևույթի պահպանմանը նպաստում է այն հանգամանքը, որ պետական կառույցները չեն արձագանքում բռնության դեպքերի մասին կանանց հաղորդումներին, մասնավորապես՝ ոստիկանությունում ապահովված չէ զգայուն վերաբերմունքը և պատշաճ աշխատանքներ չեն տարվում բռնությունից տուժած կանանց հետ, ինչպես նաև համարժեք չէ տուժողներին ցուցաբերվող օժանդակությունը:<sup>67</sup>
120. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի<sup>68</sup> («Կանանց նկատմամբ բռնության մասին կոնվենցիա») համաձայն, «կանանց նկատմամբ բռնությունը» համարվում է մարդու իրավունքների խախտում և կանանց դեմ ուղղված խտրականության ձև, և ներառում է սեռով պայմանավորված բռնության բոլոր գործողությունները, որոնք կանանց պատճառում են, կամ հավանական է, որ կպատճառեն ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս կամ տառապանք, այդ թվում՝ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ կամայական ազատագրվումը, ընդ որում՝ թե՛ հանրային, թե՛ մասնավոր կյանքում: Թեպետ ընտանեկան բռնությունը կատարողները և դրանից տուժողները կարող են լինել թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, դեպքերի ճնշող մեծամասնությունում կանայք են բռնության ենթարկվում տղամարդկանց կողմից, այդ երևույթը դարձնելով սեռով պայմանավորված, որից անհամաչափորեն ավելի շատ տուժում են կանայք: Բացի դրանից, կանայք և աղջիկներն են սեռական բռնությունից հիմնական տուժողները: Հետևապես, կանանց նկատմամբ բռնությունը համարվում է խտրականության ձև և գենդերային անհավասարությունների, կանանց ստորադաս դիրքի և հայրիշխանական կարծրատիպերի և դիրքորոշումների արտահայտություն: Կանանց նկատմամբ բռնության մասին կոնվենցիայի նախաբանում ձևակերպվում է այն փաստը, որ «կանանց նկատմամբ բռնությունը կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար իշխանական այն հարաբերությունների դրսևորումն է, որոնք հանգեցրել են տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ գերիշխող դիրքի հաստատմանը, խտրականությանը և կանանց լիարժեք առաջխաղացման արգելակմանը»:
121. Կոնվենցիայով նաև նախատեսվում է, որ «ընտանեկան բռնություն» նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության ցանկացած գործողություն, որը կատարվում է ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում: «Կանանց նկատմամբ սեռով պայմանավորված բռնություն» նշանակում է բռնություն, որը կնոջ նկատմամբ դրսևորվում է նրա կին լինելու պատճառով, կամ որը կանանց վրա ազդում է անհամաչափորեն:
122. Կոնվենցիան անդրադառնում է նաև հետամտելուն (անգլ.՝ «stalking»), սեռական բռնությանը՝ ներառյալ բռնաբարությանը, հարկադիր ամուսնությանը, կնոջ սեռական օրգանները խեղելուն, հարկադիր աբորտին և հարկադիր ամլացմանը, ինչպես նաև սեռական ոտնձգություններին:<sup>69</sup>
123. Հայաստան կատարած այցի շրջանակում Հանձնակատարը քննարկեց, մասնավորապես, ընտանիքում կանանց նկատմամբ տեղի ունեցող բռնությունը:

<sup>67</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնությունը պետք է կարևոր առաջնահերթություն դառնա», Մարդու իրավունքների հանձնակատարի մեկնաբանությունները մարդու իրավունքների վերաբերյալ, 29-ը հուլիսի, 2014թ.:

<sup>68</sup> Տե՛ս [Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին](#), 2011թ., հոդվածներ 3ա, 3բ, 3դ:

<sup>69</sup> Տե՛ս Կոնվենցիայի 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածները:

## 2.2.1 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

124. Թեպետ Հանձնակատարի գրուցակիցներից շատերն ընդունեցին, որ Հայաստանում առկա է ընտանեկան բռնության հիմնախնդիրը, երկրում երևույթի տարածվածության և լրջության հարցում, ըստ երևույթին, միասնական կարծիք ձևավորված չէ: Դա մասամբ պայմանավորված է ընտանիքում տեղի ունեցող բռնության միջադեպերի մասին հաղորդումների ներկայացման ցածր, թեպետ՝ ավելացող մակարդակով: Ընտանեկան բռնությունը համարվում է մասնավոր խնդիր, և ընտանեկան տիրույթից դուրս այն առաջ քաշելը համարվում է ամոթալի: Բողոքը բարձրաձայնող կամ բռնության իրավիճակից փախչելու փորձ կատարող կանայք ընդհանուր առմամբ համարվում են ընտանեկան միավորը և կայունությունը վտանգողներ: Ընտանիքը պահպանելու շղարշի ներքո չլուծված են մնում բռնարարքները, որոնցից հիմնականում տուժում են կանայք և երեխաները: Հանձնակատարը ցանկանում է շեշտել, որ ինչպես և մարդու իրավունքների ցանկացած այլ խախտման դեպքում, կարևոր է, որպեսզի պետությունը և հասարակությունը պաշտպանեն ընտանիքում բռնության ենթարկվող անդամներին և պատասխանատվության ենթարկեն մեղավորներին:
125. Հանձնակատարին մտահոգում են սոցիալական այն դիրքորոշումները, որոնց համաձայն որոշ դեպքերում ընդունելի և արդարացված է համարվում բռնությունը կանանց նկատմամբ՝ այդպիսի նպաստելով, որպեսզի մեղավորները խուսափեն պատասխանատվությունից: Հանձնակատարը տեղեկացվեց, որ քաղաքական մի շարք առաջնորդներ՝ ներառյալ պատգամավորներ, հերքել են ընտանեկան բռնության հիմնախնդրի գոյությունը Հայաստանում, իսկ որոշ դեպքերում՝ անգամ արդարացված են համարել այն: Հանձնակատարն ազգային մակարդակով ունեցած հանդիպումներում գրուցակիցների հետ համակարգված կերպով առաջ է քաշել այս խնդիրը՝ խրախուսելով նրանց «գրոյական հանդուրժողականության» միանշանակ ուղերձ հաղորդել կանանց նկատմամբ բռնության հարցում:
126. Ընտանեկան բռնության մի շարք հետազոտություններ են անցկացվել Հայաստանում: Հայաստանում ընտանեկան բռնության վերաբերյալ 2008 թվականի զեկույցում «Ամենաթիվ հինթերնեշնլ» կազմակերպությունը գրել է, որ Հայաստանում բնակվող կանանց ավելի քան մեկ քառորդը կյանքի ընթացքում կարող է ֆիզիկական բռնության ենթարկվել ամուսինների կամ ընտանիքի այլ անդամների կողմից, ընդ որում՝ բռնության հոգեբանական ձևերի վերաբերյալ ստացված ցուցանիշները շատ ավելի բարձր են:<sup>70</sup> Չեկույցում արձանագրված բռնության հիմնական ձևերն էին հոգեբանական բռնությունը, մեկուսացումը և վերահսկողությունը, ֆիզիկական բռնությունը, սեռական բռնությունը՝ ներառյալ բռնաբարությունը, և սեռական ոտնձգությունները, որոնք շատ տարածված են համարվում աշխատավայրում:
127. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի 2011 թվականի հետազոտության<sup>71</sup> տվյալներով, հետազոտությանը մասնակցած կանանց 8.9%-ը մերձավոր զուգընկերոջ կողմից ենթարկվել է ֆիզիկական բռնության առնվազն մեկ ձևի:<sup>72</sup> Հետազոտությամբ բացահայտվել էր, որ կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերի մեծամասնությունը կատարվում են ընտանիքում:<sup>73</sup> Նշվել էր նաև, որ կանանց 25%-ը հաղորդել է հոգեբանական բռնության

<sup>70</sup> Տե՛ս «Լռության մեջ հպարտություն չկա. ընտանիքում բռնության դեմ պայքարը Հայաստանում», «Ամենաթիվ հինթերնեշնլ», 2008թ., էջ 3:

<sup>71</sup> Հետազոտությունն իրականացվել է 4,720 տնային տնտեսությունների շրջանում 2008 թվականին:

<sup>72</sup> Ֆիզիկական բռնության ձևերից նշվել են ապտակելը կամ որևէ բան շպրտելը, որը կարող էր ցավ պատճառել, հրելը կամ հարվածելը կամ մազերից քաշելը, բռունցքով կամ ինչ-որ այլ բանով խփելը, որը կարող էր վնասել, ոտքով հարվածելը, քարշ տալը կամ ծեծելը, դիտավորյալ խեղդելը կամ այրելը, կնոջ նկատմամբ հրազեն, դանակ կամ զենք օգտագործելը կամ օգտագործելու սպառնալիքը:

<sup>73</sup> Տե՛ս «Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր, Երևան, 2011թ., էջեր 41-45:



առնվազն մեկ ձևի ենթարկված լինելու մասին,<sup>74</sup> իսկ 3.3%-ը խոստովանել են, որ ենթարկվել են սեռական բռնության առնվազն մեկ ձևի իրենց մերձավոր զուգընկերոջ կողմից:<sup>75</sup> Ավելին, հետազոտված կանանց 61.7%-ը հայտնել են, որ կրել են մերձավոր զուգընկերոջ կողմից վերահսկող վարքի այնպիսի ձևերի հետևանքները, ինչպիսիք են ընտանիքի և ընկերների հետ շփումների սահմանափակումը, տեղաշարժի վերահսկումը կամ տնից դուրս կատարվող ցանկացած գործողության վերահսկումը, կամ առողջապահական ծառայությունների դիմելուց առաջ կնոջը թույլտվություն ստանալուն հարկադրելը:<sup>76</sup> Հետազոտությունն անդրադարձել է նաև կանանց նկատմամբ տնտեսական բռնության այնպիսի ձևերին, ինչպիսիք են տնտեսական իրավազրկումը՝ ներառյալ տնտեսական զրկանքը (օրինակ՝ ֆինանսական միջոցները վերցնելը, վաստակը և խնայողությունները բռնագրավելը, կնոջ աշխատանքն արգելելը):

128. «Պրոակտիվ հասարակություն» ՀԿ-ի կողմից Երևանում ԵԱՀԿ-ի գրասենյակի օժանդակությամբ 2011 թվականին հրապարակված ընտանեկան բռնության թեմայով մեկ այլ հետազոտությամբ պարզվել է, որ հարցվածների 59.6%-ը կյանքի ընթացքում ենթարկվել են ընտանեկան բռնությանը:<sup>77</sup>
129. Հայաստանի Հանրապետության ոստիկանության տրամադրած տվյալներով, 2013 թվականին արձանագրվել են կանանց նկատմամբ բռնության 2,054 դեպքեր՝ ներառյալ ընտանեկան բռնության 580 դեպքեր: 2014 թվականի առաջին 9 ամիսների համար ոստիկանության տրամադրած ցուցանիշն է կանանց նկատմամբ բռնության 1,759 դեպք՝ ներառյալ ընտանեկան բռնության 428 դեպք: ՀԿ-ներն ընտանեկան բռնությամբ պայմանավորված մահվան յոթ դեպքեր են արձանագրել 2013 թվականին և 12-ը՝ 2014 թվականին:

## 2.2.2 ԱՌԿԱ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

130. Վերոհիշյալ փաստաթղթերից (տե՛ս 98-րդ և 99-րդ պարբերությունները) գատ, գոյություն ունեն Եվրոպայի խորհրդի՝ կանանց նկատմամբ բռնությանը՝ ներառյալ ընտանեկան բռնությանը վերաբերող կոնկրետ ստանդարտներ և փաստաթղթեր, ինչպիսիք են Նախարարների կոմիտեի հանձնարարականները,<sup>78</sup> Եվրոպական դատարանի նախադեպային որոշումները<sup>79</sup> և Կանանց նկատմամբ բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:
131. Հանձնակատարը ցանկանում է մատնացույց անել կանանց նկատմամբ բռնության առնչությամբ Եվրոպական դատարանի ծավալուն և ընդլայնվող դատական նախադեպը: Նախադեպային որոշումները վերաբերում են, օրինակ, ազատագրված ընթացքում դաժան

<sup>74</sup> Հոգեբանական բռնության ձևերից նշվել են վիրավորանքը, ուրիշների առջև նսեմացնելը կամ նվաստացնելը, վախեցնելու կամ ահաբեկելու փորձերը, կնոջը կամ նրա սիրելի մեկին ներառյալ երեխաներին վնասելու սպառնալիքը: Տե՛ս «[Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ](#)», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր, Երևան, 2011թ., էջեր 32-37:

<sup>75</sup> Սեռական բռնության ձևերից հիմնականում նշվել են կնոջը սեռական հարաբերություն ունենալուն ֆիզիկական հարկադրելը, սեռական հարաբերություն ունենալով վախենալով, թե ինչ կանի զուգընկերը, կնոջն ստիպելը անելու որևէ սեռական բնույթի բան, որը նրա կարծիքով ստորացնող կամ նսեմացնող է: Տե՛ս «[Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ](#)», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր, Երևան, 2011թ., էջեր 45-50:

<sup>76</sup> Տե՛ս «[Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ](#)», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր, Երևան, 2011թ., էջեր 37-41:

<sup>77</sup> Տե՛ս «[Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ](#)», «Պրոակտիվ հասարակություն» ՀԿ, Երևան, 2011թ., էջ 34:

<sup>78</sup> Տե՛ս, օրինակ, [Նախարարների կոմիտեի Rec\(2002\)5 հանձնարարականն](#) անդամ պետություններին կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ, 2002թ.:

<sup>79</sup> Տե՛ս ՄԻԵԴ-ի [փաստական տեղեկանքը](#) կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ և ՄԻԵԴ-ի [փաստական տեղեկանքն ընտանեկան բռնության վերաբերյալ](#):

վերաբերմունքին,<sup>80</sup> ոստիկանության բռնությանը,<sup>81</sup> բռնաբարությանը և սեռական բռնությանը,<sup>82</sup> սոցիալական բացառմանը,<sup>83</sup> մարդկանց թրաֆիքինգին<sup>84</sup> և մասնավոր անձանց կողմից կատարվող բռնությանը:<sup>85</sup> Ղատարանը խախտումներն արձանագրել է հիմնականում ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի (խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքը), 8-րդ հոդվածի (մասնավոր կյանքի հարգման իրավունքը) և 13-րդ հոդվածի (արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունքը) ներքո:

132. Ղատարանը ձևավորել է նաև ընտանեկան բռնությանը վերաբերող որոշակի նախադեպային որոշումներ, և արձանագրված խախտումները հիմնականում վերաբերել են կյանքի իրավունքին (Կոնվենցիայի 2-րդ հոդված),<sup>86</sup> խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքին (Կոնվենցիայի 3-րդ հոդված), երբ իշխանություններն անձանց համարժեքորեն չեն պաշտպանել ընտանեկան բռնությունից,<sup>87</sup> ընտանեկան բռնության մասին բողոքների անբավարար քննությանը<sup>88</sup> և արտահանձնման դեպքում ընտանեկան բռնության ենթարկվելու ռիսկին,<sup>89</sup> մասնավոր և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին (Կոնվենցիայի 8-րդ հոդված)<sup>90</sup> և խտրականության արգելքին (Կոնվենցիայի 14-րդ հոդված):<sup>91</sup> Դեպքերի մեծ մասում ընտանեկան բռնության գործողություններն ազդել են նաև երեխաների՝ որպես տուժողների կամ ականատեսների վրա:
133. Կանանց նկատմամբ բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին և 2015 թվականի փետրվարի դրությամբ վավերացվել է Եվրոպայի խորհրդի անդամ 16 պետությունների կողմից: Հանձնակատարը քանիցս կոչ է արել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին՝ վավերացնել Կանանց նկատմամբ բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան,<sup>92</sup> որում շատ է կարևորվում կանխարգելումը՝ նախատեսելով, որ մասնակից պետությունները պարտավոր են կանոնավոր կերպով իրականացնել իրազեկության բարձրացման քարոզարշավներ, քայլեր ձեռնարկել գենդերային հավասարության և վեճերի ոչ բռնի լուծման մասին կրթական նյութերը կրթական համակարգում ներդնելու ուղղությամբ, վերապատրաստել Կոնվենցիայով նախատեսված բռնության գործողությունները կատարողների կամ տուժողների հետ աշխատող մասնագետներին, իրավախախտողների և սեռական հանցագործների համար կազմակերպել վերականգնողական ծրագրեր և բռնության

<sup>80</sup> Տե՛ս, օրինակ, [Juhnke v. Turkey](#), դիմում թիվ 52515/99, դատավճիռը՝ 13-ը մայիսի, 2008թ.:

<sup>81</sup> Տե՛ս, օրինակ, [Yazgülü Yılmaz v. Turkey](#), դիմում թիվ 36369/06, դատավճիռը՝ 1-ը փետրվարի, 2011թ.: [B.S. v. Spain](#), դիմում թիվ 47159/08, դատավճիռը՝ 24-ը հուլիսի, 2012թ.:

<sup>82</sup> Տե՛ս, օրինակ, [X and Y v. the Netherlands](#), դիմում թիվ 8978/80, դատավճիռը՝ 26-ը մարտի, 1985թ.: [Aydın v. Turkey](#), դիմում թիվ 23178/94, դատավճիռը՝ 25-ը սեպտեմբերի, 1997թ.: [Maslova and Nalbandov v. Russia](#), դիմում թիվ 839/02, դատավճիռը՝ 24-ը հունվարի, 2008թ.: [P.M. v. Bulgaria](#), դիմում թիվ 49669/07, դատավճիռը՝ 24-ը հունվարի, 2012թ.:

<sup>83</sup> Տե՛ս, օրինակ, [N. v. Sweden](#), դիմում թիվ 23505/09, դատավճիռը՝ 20-ը հուլիսի, 2010թ.:

<sup>84</sup> Տե՛ս, օրինակ, [Rantsev v. Cyprus and Russia](#), դիմում թիվ 25965/04, դատավճիռը՝ 7-ը հունվարի, 2010թ.:

<sup>85</sup> Տե՛ս, օրինակ, [Ebcin v. Turkey](#), դիմում թիվ 19506/05, դատավճիռը՝ 1-ը փետրվարի, 2011թ.:

<sup>86</sup> Տե՛ս, օրինակ, [Kontrova v. Slovakia](#), դիմում թիվ 7510/04, դատավճիռը՝ 31-ը մայիսի, 2007թ.: [Branko Tomašić and Others v. Croatia](#), դիմում թիվ 46598/06, դատավճիռը՝ 15-ը հունվարի, 2009թ.:

<sup>87</sup> Տե՛ս, օրինակ, [E.S. and Others v. Slovakia](#), դիմում թիվ 8227/04, դատավճիռը՝ 15-ը սեպտեմբերի, 2009թ.:

<sup>88</sup> Տե՛ս, օրինակ, [E.M. v. Romania](#), դիմում թիվ 43994/05, դատավճիռը՝ 30-ը հոկտեմբերի, 2012թ.: [Valiulienė v. Lithuania](#), դիմում թիվ 33234/07, դատավճիռը՝ 26-ը մարտի, 2013թ.:

<sup>89</sup> Տե՛ս [Khachatryan v. Belgium](#) գործով ընթացքի մեջ գտնվող դիմումը, դիմում թիվ 72597/10, որով դիմողը, ով Հայաստանի քաղաքացի է, բողոքում է իր ամուսնու կողմից առևանգվելու, ամուսնանալուն հարկադրվելու և ընտանեկան բռնության մասին:

<sup>90</sup> Տե՛ս, օրինակ, [Bevacqua and S. v. Bulgaria](#), դիմում թիվ 71127/01, դատավճիռը՝ 12-ը հունիսի, 2008թ.: [A. v. Croatia](#), դիմում թիվ 55164/08, դատավճիռը՝ 14-ը հոկտեմբերի, 2010թ.:

<sup>91</sup> Տե՛ս, օրինակ, [Opuz v. Turkey](#), դիմում թիվ 33401/02, դատավճիռը՝ 9-ը հունիսի, 2009թ.: [Eremia v. Moldova](#), դիմում թիվ 3564/11, դատավճիռը՝ 28-ը մայիսի, 2013թ.:

<sup>92</sup> Տե՛ս «[Կանանց նկատմամբ բռնությունը պետք է կարևոր առաջնահերթություն դառնա](#)», Մարդու իրավունքների հանձնակատարի մեկնաբանությունները մարդու իրավունքների վերաբերյալ, 29-ը հուլիսի, 2014թ.:

կանխարգելման և փոխադարձ հարգանքի ամրապնդման ուղղությամբ աշխատել լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ.<sup>93</sup>

134. Կոնվենցիայով նախատեսվում է, որ տուժողների և վկաների պաշտպանությունը և օժանդակությունը ներառում են համարժեք տեղեկությունների տրամադրումը, օժանդակության ընդհանուր ծառայությունները (օրինակ՝ հոգեբանական խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն, կացարան, աջակցություն աշխատանք գտնելու հարցում) և օժանդակության մասնագիտացված ծառայություններ (օրինակ՝ ապաստարաններ, հեռախոսային թեժ գծեր, սեռական բռնությունից տուժողների ուղղորդման կենտրոններ): Կանանց նկատմամբ բռնության մասին հայտարարությունների արդյունավետ քննության և քրեական հետապնդման անհրաժեշտ է քրեականացնել համապատասխան իրավախախտումները և ապահովել իրավապահ մարմինների համարժեք արձագանքն օգնության դիմողների կանչերին, բողոքների ընդունումը և քննությունը, և պաշտպանական միջոցառումների իրականացումը (օրինակ՝ արտակարգ իրադրությանը վերաբերող, արգելքի կամ պաշտպանության սանկցիաները): Կոնվենցիայով նախատեսվում է, որ որոշ հանցագործությունների քննությունը և քրեական հետապնդումը չպետք է ամբողջովին կախված լինեն տուժողի ներկայացրած հաղորդումից կամ բողոքից, և որ վարույթը պետք է հնարավոր լինի շարունակել՝ անգամ տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու դեպքում: Քննության և դատական վարույթների շրջանակում առաջին հերթին պետք է ապահովել տուժողների իրավունքների հարգումը և բացառել կրկնակի վիկտիմիզացիան:
135. Հայաստանը դեռևս չի վավերացրել Կանանց նկատմամբ բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա: Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել և քննարկել Հայաստանի կողմից Կոնվենցիայի վավերացման հնարավորությունը: Հանձնակատարը քննարկել է այս խնդիրն իր գրուցակիցների մեծ մասի հետ՝ ընդգծելով, որ Կոնվենցիայի վավերացումը լավ հիմք կլինի ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ազգային համակարգի հետագա զարգացման, ինչպես նաև այդ բռնության հետևանքները հաղթահարելու համար: Հայաստանյան իշխանությունների ներկայացուցիչների մեծ մասն ընդգծեցին, որ լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ այս խնդիրն ուսումնասիրելու և Հայաստանի իրավական դաշտի՝ Կոնվենցիային համապատասխանությունը գնահատելու, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաշվարկելու համար:
136. Ընտանեկան բռնության դեմ պայքարի համապարփակ իրավական դաշտի պայմաններում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում Հայաստանում, ի լրումն միջազգային պարտավորություններին, կարող են օգտագործվել նաև երկրի առանձին միջոցառումների ծրագրերը և իրավական նորմերը: 2011-2015 թվականների «[Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրով](#)» նախատեսվում է, օրինակ, «գենդերահեն բռնության» և «ընտանեկան բռնության» հասկացությունները ներառել ազգային իրավական ակտերում, բարելավել տվյալների հավաքագրումը և գենդերահեն բռնության մոնիթորինգը, ներդնել առողջապահական հաստատություններում մարմնական վնասվածքների հայտնաբերման, արձանագրման և հաղորդման համակարգ, իրականացնել գենդերահեն բռնության և դրա հետևանքների վերաբերյալ հանրության իրազեկման և կրթման ծրագրեր, մշակել ընտանեկան բռնության մասին օրենք, ստեղծել ապաստարաններ և այլ ծառայություններ ընտանեկան բռնությունից տուժողների համար, կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ առողջապահական, սոցիալական և կրթական ոլորտների մասնագետների, ինչպես նաև իրավապահ մարմիններում աշխատողների և դատավորների համար, մասնավորապես՝ տուժողների հայտնաբերման, արձանագրման, ուղղորդման և պաշտպանության թեմաներով, ինչպես նաև ապահովել մեղավորների համարժեք քրեական հետապնդումը և վերականգնումը:
137. Նախարարների կոմիտեի 2002(5) հանձնարարականով նախատեսվում է, որ անդամ պետությունները պետք է ընտանիքում տեղի ունեցող բռնության բոլոր ձևերը դասակարգեն

<sup>93</sup> Տե՛ս «[Համառոտ տեղեկություններ Կոնվենցիայի մասին](#)», Եվրոպայի խորհրդի կայքէջը:

որպես քրեական հանցագործություններ: <sup>94</sup> Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն 2009 թվականին դիմեց Հայաստանին, որպեսզի վերջինս անհապաղ ընդունի կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը կարգավորող օրենսդրություն: Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն նաև նշեց, որ այդ օրենսդրությունը պետք է որպես քրեական հանցագործություն և քաղաքացիական իրավունքի խախտում ամրագրվի կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը, պետք է ապահովվի մեղավորների քրեական հետապնդումը և համարժեք պատիժը, պետք է բռնությունից տուժած կանանց և աղջիկների համար ապահովվի հատուցման և պաշտպանության միջոցների՝ ներառյալ պաշտպանության սանկցիաների անհապաղ հասանելիությունը, և պետք է բավարար թվով համարժեք ապաստարաններ գոյություն ունենան, որոնք, մասնավորապես, կիզակալ գյուղաբնակ կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, փախստականների և փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց կարիքները: <sup>95</sup>

138. Հայաստանի քրեական օրենսդրությամբ որպես առանցին հանցատեսակ նախատեսված չէ գենդերահեն բռնությունը՝ ներառյալ ընտանեկան բռնությունը: Քրեական օրենսդրությունը նաև չի անդրադարձնում դրանց կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման խնդիրներին: Ընտանեկան բռնության հանցագործությունների քրեական հետապնդումը կարող է իրականացվել Հայաստանի քրեական օրենսգրքի առավել ընդհանուր դրույթների հիման վրա, ինչպիսիք են առողջությանը վնաս պատճառելը, ծեծը, մարմնական վնասվածք պատճառելը և սպանությունը: <sup>96</sup> Այնուհանդերձ, որպես այդպիսին քրեականացված չեն կանանց նկատմամբ բռնության որոշ ձևեր, օրինակ՝ ամուսնու կամ մերձավոր զուգընկերոջ կողմից բռնաբարությունը կամ հարկադիր աբուսը: Քրեական օրենսդրությամբ չեն տարբերակվում բռնությամբ զուգորդված հանցագործություններ կատարող անծանոթները և ընտանիքի անդամները: <sup>97</sup>
139. Հանձնակատարի գրուցակիցներից մի քանիսը նշեցին, որ առանձին օրենքը կնպաստեր ընտանեկան բռնությամբ պայմանավորված մահվան և ծանր մարմնական վնասվածքի դեպքերի կանխարգելմանը: Հանձնակատարը տեղեկացվեց, որ վերջին տարիներին կառավարական և ոչ կառավարական սուբյեկտների աշխատանքային խմբի կողմից մշակվել է ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենքի նախագիծ: Օրենքի նախագիծը հիմնականում վերաբերում է ընտանեկան բռնության կանխարգելմանը, ինչպես նաև տուժողների պաշտպանությանը և աջակցությանը: Նախատեսվում են ընտանեկան բռնության կոնկրետ ձևերը, պատասխանատվություն կրող պաշտոնական մարմինների պարտականությունները և խորհրդատվական կենտրոնի և ապաստարանի ստեղծումը: Օրենքի նախագիծով ընտանեկան բռնությունը կանխելու համար նախատեսվում են հատուկ միջոցառումներ, մասնավորապես՝ պաշտոնական նախազգուշացումը, արտակարգ իրավիճակում միջամտությունը և պաշտպանության մասին որոշումը, ինչպես նաև դրանց կիրառության հիմքերը: Օրենքի նախագծի համաձայն, ընտանեկան բռնությունից տուժող

<sup>94</sup> Տե՛ս [Նախարարների կոմիտեի Rec\(2002\)5 հանձնարարական](#) անդամ պետություններին կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ, 2002թ., 55-րդ պարբերություն:

<sup>95</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի [ամփոփիչ զիտարկումները](#), 2009թ., 23-րդ պարբերություն:

<sup>96</sup> Տե՛ս, օրինակ, սպանությունը (հոդված 104), ինքնասպանության հասցնելը (հոդված 110), ինքնասպանության հակելը (հոդված 111), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (հոդված 112), դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը (հոդված 113), ծեծը (հոդված 118), խոշտանգումը (հոդված 119), անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (հոդված 120), անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, առևանգելը (հոդված 131), թրաֆիքինգը (հոդված 132), ազատությունից ապօրինի զրկելը (հոդված 133), սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը (հոդված 137), բռնաբարությունը (հոդված 138), սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (հոդված 139), սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը (հոդված 140), սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ (հոդված 141):

<sup>97</sup> Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 63.8 հոդվածի համաձայն, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է հանցանքը հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ, ինչպես նաև մանկահասակի, այլ անպաշտպան կամ անօգնական կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը: Որոշ հանցատեսակների համար որպես ծանրացուցիչ հանգամանքներ նշված են բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները:

օգտվում է սոցիալական աջակցությունից, կացարանից և աշխատանքի տեղավորման հարցում օգնությունից, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստումից:

140. Չնայած ընտանեկան բռնության մասին առանձին օրենք ընդունելու վերաբերյալ Հայաստանին ուղղված ազգային և միջազգային սուբյեկտների բազմաթիվ կոչերին, Հայաստանի կառավարությունը 2013 թվականին հետ վերադարձրեց օրենքի նախագիծը լրամշակման և լրացուցիչ քննարկումների համար: Իշխանությունները Հանձնակատարին տեղեկացրեցին, որ այդ օրենքի ընդունումն անհամատեղելի է գործող քրեական օրենսդրությանը, և որ ընտանեկան բռնության հիմնախնդիրն կարգավորվելու է առանձին օրենսդրական ակտերով: Ըստ երևույթին, առարկությունների տեղիք տվող հաջորդ խնդիրն այն հանգամանքն է, որ պաշտպանության միջոցի հիման վրա հնարավոր է ընտանեկան բռնություն կատարող բռնարարին հեռացնել ընտանիքի անդամների բնակության վայր հանդիսացող բնակարանից, անգամ եթե իրավախախտողն է այդ գույքի սեփականատերը: Այնուհանդերձ, օրենքի նախագիծն ըստ երևույթին վերանայվել է կառավարության մեկնաբանությունների հիման վրա, որպեսզի կրկին ներկայացվի կառավարության քննարկմանը:
141. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը Հանձնակատարին տեղեկացրեց, որ սոցիալական աջակցության մասին օրենքի նախագիծը, որը ներկայացվելու է Ազգային ժողովին, պարունակելու է ընտանեկան բռնության սահմանումը և կարգավորելու է սոցիալական աջակցության և օժանդակության տրամադրումն ընտանեկան բռնությունից տուժող անձանց: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նաև ընթացակարգեր է մշակում ընտանեկան բռնությունից տուժողների հայտնաբերման համար և դիտարկում է նրանց համար ուղղորդման մեխանիզմ ներդնելու հնարավորությունը: Ներկայումս Վարչապետին կից գործում է ընտանեկան բռնության կանխարգելման միջգերատեսչական խումբ, որը ղեկավարում է աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարը, իսկ կազմում ներկայացված են կառավարական և ոչ կառավարական սուբյեկտներ:
142. Ոստիկանությունը կարևոր դեր ունի ընտանեկան բռնության կանխարգելման, քննության և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործում: Հանձնակատարը տեղեկություններ է ստացել այս ոլորտում ոստիկանության ձեռնարկած քայլերի ներառյալ վիճակագրության հավաքման, ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու թեմայով ոստիկանների վերապատրաստման և երկրի ողջ տարածքում ներառյալ դպրոցներում հանրության իրազեկման աշխատանքների իրականացման մասին: Քրեական գործերը քննող հիմնական վարչությունում գործող անչափահասների բաժնի կարգավիճակը 2013 թվականի փետրվարին ոստիկանապետի իրամանով բարձրացվեց վերածվելով անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության: Ոստիկանության ներկայացուցիչները մասնակցել են ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի մշակմանը և Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին, որը զբաղվել է Եվրոպայի խորհրդի համապատասխան կոնվենցիայի մշակմամբ: Ոստիկանապետը Հանձնակատարին տեղեկացրեց, որ ավելանում է ոստիկանությունում ծառայող կանանց թիվը, և որ ընտանեկան բռնության և անչափահասների հարցերով զբաղվող վարչության ծառայողների կեսից ավելին կանայք են:
143. Չնայած այդ քաջալերող քայլերին, Հանձնակատարը մտահոգիչ տեղեկություններ է ստացել այն մասին, որ ընտանեկան բռնության դեպքերն արդյունավետորեն չեն հայտնաբերվում, քննվում, հետապնդվում և պատժվում: Ոստիկաններն ըստ երևույթին համարժեքորեն չեն արձագանքում և զբաղվում ընտանեկան բռնության մասին բողոքներով, երբեմն կանանց խորհուրդ տալով բողոք չներկայացնել, և կոչ անելով նրանց հաշտվել ենթադրաբար նրանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց հետ: Հանձնակատարի հետ քննարկված դեպքերից մեկում կինը, ով ենթադրաբար տուժել էր սեռական բռնությունից և, ստացված տեղեկությունների համաձայն, ուներ տեսանելի մարմնական վնասվածքներ, ստիպված էր եղել իր բողոքը ներկայացնել արական սեռի բազմաթիվ ոստիկանների ներկայությամբ: Ըստ երևույթին, կնոջը չէր ցուցաբերվել բուժօգնություն: Երբ Հանձնակատարն առաջ քաշեց այս գործը, ոստիկանապետն ընդունեց, որ նման վարքը հարիր չէ ոստիկաններին, և խոսեց ընտանեկան բռնության գործերի առնչությամբ ոստիկանների մտածելակերպը և գործելակերպը փոխելու անհրաժեշտության մասին:

144. Ընտանեկան բռնության մասին բողոքների նկատմամբ ոստիկանության այս առերևույթ սխալ վերաբերմունքը նպաստում է, որպեսզի ցածր լինի կանանց կողմից ներկայացվող հաղորդումների ցուցանիշը, ընդ որում հասարակական և ընտանեկան ճնշումների պատճառով կանանց համար առանց այն էլ դժվար է բողոքել: Բողոքելու դժվարությունն էլ ավելի մեծ է ամուսնու կամ մերձավոր զուգընկերոջ կողմից սեռական բռնության ենթարկված կանանց համար: Կանայք երբեմն հետ են վերցնում իրենց բողոքները: Այս գործերի որոշ մասի քննությունը և քրեական հետապնդումը Հայաստանում հնարավոր է միայն տուժողի կողմից բողոք ներկայացնելու դեպքում: Ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաղորդումների և բողոքների ցածր ցուցանիշը նպաստում է խնդրի պահպանմանը:
145. Հանձնակատարը մտահոգված է առ այն, որ ընտանեկան բռնությունից տուժող կանայք դատական քննության փուլում երբեմն կրկնակի վիկտիմիզացիայի են ենթարկվում, անգամ անհարգալից վերաբերմունքի արժանանում դատական ատյանների կողմից: Ըստ երևույթին, քրեական հետապնդում իրականացվում է միայն ծանրագույն դեպքերում (օրինակ սպանություն, ծանր և միջին մարմնական վնասվածք, խոշտանգում և ծեծ), մինչդեռ բռնության նվազ ծանր դեպքերին գրեթե երբևէ չեն արձագանքում:
146. Հանձնակատարը տեղեկություններ ստացավ 20-ամյա Մարո Գուլոյանի դեպքի վերաբերյալ. այս հղի կինը, ով նաև մանկահասակ աղջկա մայր էր, մահացել էր 2012 թվականի հուլիսին Առինջ գյուղում (Կոտայքի մարզ): Քննությունը եզրակացրել էր, որ տեղի է ունեցել ինքնասպանություն կախվելու եղանակով, մինչդեռ տկն. Գուլոյանի ազգականները և ՀԿ-ները վիճարկում են այս եզրակացությունը՝ պնդելով, թե նա սպանվել է ամուսնու կողմից կանոնավոր կերպով ընտանեկան բռնության ենթարկվելուց հետո:
147. Ժամանակավոր ապաստարանները կարող են կենսական կարևորություն ունենալ բռնությունից տուժող կանանց և նրանց երեխաների համար: Ապաստարաններում տրամադրվում է նաև բժշկական, հոգեբանական, սոցիալական և իրավաբանական օժանդակություն: Հանձնակատարն այցելեց երկրում գործող միակ ապաստարանը, որն ընդունում է հենց ընտանեկան բռնությունից տուժողներին և գործում է ՀԿ-ի օժանդակության շնորհիվ: Պետության կողմից կազմակերպվող ապաստարաններ երկրում չկան: Ընտանեկան բռնությունից տուժողներին սպասարկելու՝ ապաստարանների կարողությունը խիստ սահմանափակ է, և նրանք կարող են հոգալ միայն լրջագույն կարիքները, այսինքն՝ երբ իրավիճակն արդեն վտանգավոր է համապատասխան անձանց կյանքի համար: Հանձնակատարը խիստ մտահոգվեց՝ տեղեկանալով, որ իր այցելած ապաստարանը միջոցների և տարածքի անբավարարության պատճառով պարբերաբար ստիպված է լինում մերժել կացարանի համար դիմողներին: Մի քանի առիթներով հայտարարվել է, որ իշխանությունները մտադիր են մատուցել նման ծառայություններ և/կամ ֆինանսավորել դրանց մատուցումը:

*Եզրակացություններ և հանձնարարականներ*

148. Կանանց նկատմամբ բռնությունը՝ ներառյալ ընտանեկան բռնությունը, խախտում է մարդու իրավունքները, և խտրականության ձևերից մեկն է: Հանձնակատարը կոչ է անում Հայաստանի քաղաքական և համայնական առաջնորդներին՝ հստակ ուղերձ հղելու այն մասին, որ կանանց նկատմամբ բռնությունը՝ ներառյալ ընտանեկան բռնությունը, անընդունելի է և որևէ պարագայում չի կարող արդարացվել: Ընտանեկան բռնության և դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին հանրության իրազեկության բարձրացման եռանդուն ջանքեր պետք է գործադրել, այդ թվում՝ դպրոցներում: Ընտանեկան բռնությունից տուժողները, ովքեր առավել հաճախ կանայք են և երեխաները, պետք է պաշտպանվեն, այլ ոչ՝ մեղադրվեն ընտանիքը կազմալուծելու մեջ:
149. Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին՝ մանրակրկիտ տվյալներ հավաքել գենդերահեն բռնության՝ ներառյալ ընտանեկան բռնության մասին, նպատակ հետապնդելով պարզել այս երևույթի խորքային պատճառները և դրա դեմ պայքարելու համար մշակել ավելի լավ ռազմավարություններ և կոնկրետ միջոցառումներ:
150. Հանձնակատարը միանշանակորեն կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ ստորագրել և վավերացնել Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, ինչպես նաև

համագործակցել Եվրոպայի խորհրդի հետ Կոնվենցիայի և Հայաստանի վրա դրա ազդեցության մասին իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Վերհիշելով, որ ընտանեկան բռնությունը ծանր, երբեմն՝ անուղղելի վնաս է պատճառում, ինչպես նաև ծախսեր է առաջացնում պետության համար սոցիալական, տնտեսական, բժշկական և դատական ոլորտներում, Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին լրացուցիչ թափ հաղորդել այն կանխելու ուղղությամբ գործադրվող ջանքերին:

151. Հայաստանում անհրաժեշտ է ընդունել և արդյունավետորեն իրագործել ընտանեկան բռնության մասին հատուկ օրենք, որը կկարգավորի բռնության բոլոր ձևերը և այս հիմնախնդրի հետ կապված տարբեր հարցերը՝ կանխարգելումը, քրեականացումը, քրեական հետապնդումը և տուժողների պաշտպանությունը և աջակցությունը: Այդ օրենքի իրագործումը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել գործող օրենսդրության մեջ: Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին այս առումով տեղեկություններ և ուղեցույցներ ստանալու Եվրոպայի խորհրդից:
152. Ընտանեկան բռնության մասին բողոք ներկայացնող յուրաքանչյուր ոք պետք է արժանանա հարգալից և հոգատար վերաբերմունքի: Ոստիկանները պետք է առավելագույն լրջությամբ վերաբերվեն նման բողոքներին և պատշաճ կերպով վերապատրաստվեն, որպեսզի կարողանան արձագանքել ընտանեկան բռնության դեպքերին: Պետք է ավելացնել այս ոլորտին ներգրավված կին ոստիկանների թիվը: Բողոքները ներկայացնողների ընդունման տարածքները և պայմանները չպետք է ահաբեկող լինեն և պետք է նրանց քաջալերեն, որպեսզի նրանք իրենց վստահ զգան:
153. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության արարքները պետք է հավուր պատշաճի քննվեն և քրեական հետապնդման ենթարկվեն: Ընտանեկան բռնություն կատարողները նույնպես պետք է համապատասխան վերականգնողական ծառայություններ ստանան: Հանձնակատարը քաջալերում է հայաստանյան իշխանություններին ինտենսիվորեն հետամուտ լինելու ընտանեկան բռնության գործերը վարելու թեմայով քննիչների, դատախազների և դատավորների շարունակական վերապատրաստմանը: Կանանց իրավունքների ոլորտում գիտելիքներ և փորձ ունեցող և ընտանեկան բռնության հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ները պետք է ներգրավվեն վերապատրաստման գործընթացին:
154. Հաշվի առնելով ոստիկանությունում բողոք ներկայացնելու դժվարություններն ընտանեկան բռնությունից տուժողների համար՝ ներառյալ ծանր խախտումների մասին բողոքներ ունենալու դեպքում, Հանձնակատարը խորհուրդ է տալիս փոփոխել օրենսդրությունը, որպեսզի իրավապահ մարմինները կարողանան գործը քննել և քրեական հետապնդման ենթարկել՝ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելու հանգամանքից, ինչպես նաև անկախ տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու հանգամանքից:<sup>98</sup>
155. Հանձնակատարը ողջունում է ընտանեկան բռնությունից տուժողներին օժանդակություն և աջակցություն ցուցաբերելու առումով ՀԿ-ների կողմից կատարվող կարևոր աշխատանքը: ՀԿ-ները նույնպես արժեքավոր դերակատարում ունեն կանանց իրավունքների մասին հանրության իրազեկությունը բարձրացնելու և համակարգային փոփոխությունների ջատագովություն իրականացնելու գործում: Այնուամենայնիվ, պետությունն է կրում ընտանեկան բռնությունից պաշտպանություն կազմակերպելու պարտավորությունները, և ՀԿ-ներից պետք է ակնկալել, որ նրանք այս հարցում փոխարինեն պետությանը: Հանձնակատարն այս առումով կոչ է անում հայաստանյան իշխանություններին օժանդակություն ցուցաբերել ընտանեկան բռնությունից տուժողների ապաստարաններին և կյանքի կոչել «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումները:

<sup>98</sup> Տե՛ս [Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին](#), 2011թ., հոդված 55.1:

### 2.3 ՆԱԽԱԾՆՆԴՅԱՆ ՓՈՒՈՒՄ ՍԵՌԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ

156. Հանձնակատարը քննարկեց նախաձեռնության փուլում սեռի ընտրության խնդիրը Հայաստանում հաշվի առնելով նորածին տղաների և աղջիկների թվաքանակների անհամաչափությունը, որը փաստացի արձանագրված է: Նորածինների թվային հարաբերակցության նորմը 102-106 տղաների հաշվով 100 աղջիկների ծնունդն է, մինչդեռ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2011 թվականին պարզեց, որ Հայաստանում այդ հարաբերակցությունը կազմում է 112 տղա-100 աղջիկ:<sup>99</sup> Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի 2013 թվականի զեկույցում Հայաստանի մասով արձանագրվել է 100 աղջկա հաշվով 114-115 տղայի ցուցանիշը:<sup>100</sup> Գեղարքունիքի մարզում, ըստ երևույթին, թվային հարաբերակցության շեղումն ամենամեծն է (100 աղջկա հաշվով մինչև 124 տղա): Նախաձեռնության շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականությունը, ավելի կոնկրետ՝ իգական սեռի պտուղներն ընտրողաբար աբորտի ենթարկելու պրակտիկան, հատկապես հավանական է այն ընտանիքներում, որոնք արդեն իսկ ունեն երեք կամ չորս աղջիկներ: Տարածված կարծիքի համաձայն, այս պրակտիկան կապված է այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են արու զավակներ ունենալու խորապես արմատացած նախընտրությունը, ընտանիքի միջին չափի փոքրացումը և վերարտադրողական ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիության բարելավումը: Արու զավակները կարևոր են համարվում ընտանեկան գիծը շարունակելու և ծերության օրոք ծնողներին խնամելու համար: Հանձնակատարի գրուցակիցներից շատերը նշեցին, որ այս իրավիճակն ակնհայտորեն վկայում է հայ հասարակությունում կանանց նվազ շահեկան վիճակի և գենդերային անհավասարության մասին:
157. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կոչ է արել անդամ պետություններին՝ արգելել նախաձեռնաբերական շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականությունը,<sup>101</sup> իսկ Մարդու իրավունքների և կենսաբաժնի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով արգելվում է բժշկական օգնությամբ իրականացվող բեղմնավորման այնպիսի մեթոդների օգտագործումը, որոնց «նպատակն ապագա երեխայի սեռն ընտրելն է, բացառությամբ երբ անհրաժեշտ է խուսափել կոնկրետ սեռի հետ կապված ժառանգական ծանր հիվանդություններից»:<sup>102</sup> Այնուհանդերձ, Հայաստանը չի վավերացրել նշված կոնվենցիան:
158. Կանանց նկատմամբ բռնության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով պահանջվում է, որպեսզի մասնակից պետությունները քրեականացնեն հարկադիր աբորտը և հոգեբանական բռնությունը:<sup>103</sup> Կոնվենցիան օգտակար երաշխիքներ է նախատեսում այն դեպքերի համար, երբ կանայք նախաձեռնության շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականություն կատարելու ճնշման ներքո են: Նախաձեռնության շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականության մասին 2011 թվականի բանաձևում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդգծեց, որ «պտղի/սաղմի սեռի պատճառով հղիությունը չշարունակելու սոցիալական և ընտանեկան ճնշումը կնոջ վրա պետք է համարել հոգեբանական բռնություն, իսկ [...] հարկադիր աբորտների պրակտիկան պետք է քրեականացնել»:<sup>104</sup>
159. Հայաստանյան իշխանություններն սկսել են ավելի շատ ուշադրություն դարձնել այս երևույթին, և Մարդու իրավունքների պաշտպանության միջոցառումների ազգային ծրագրով նախատեսվում են նախաձեռնության շրջանում պտղի սեռով պայմանավորված

<sup>99</sup> Տե՛ս ԵՆԽԿ-ի 1829(2011) [բանաձևը](#) նախքան ծնունդը պտղի սեռով պայմանավորված ընտրություն կատարելու մասին, 3-րդ պարբերություն:

<sup>100</sup> Տե՛ս «[Նորածինների սեռերի անհամաձայնությունը Հայաստանում](#)», ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2013թ.:

<sup>101</sup> Տե՛ս [Նախարարների կոմիտեի Rec\(2002\)5 հանձնարարական](#) անդամ պետություններին կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ, 2002թ., 79-րդ պարբերություն:

<sup>102</sup> Տե՛ս [Եվրոպայի խորհրդի կոնվենցիան մարդու իրավունքների և կենսաբաժնի մասին](#), 1997թ., հոդված 14:

<sup>103</sup> [Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին](#), 2011թ., հոդվածներ 39 և 33:

<sup>104</sup> Տե՛ս ԵՆԽԿ-ի 1829(2011) [բանաձևը](#) նախքան ծնունդը պտղի սեռով պայմանավորված ընտրություն կատարելու մասին, 5-րդ պարբերություն:



ընտրողականության դեմ պայքարի իրավական մեխանիզմներ, ինչպես նաև այս խնդրի վերաբերյալ հանրության իրազեկման կազմակերպում: Հանձնակատարն այցի ընթացքում տեղեկացավ, որ առողջապահության նախարարությունն աշխատում է իրավական նախաձեռնության վրա, որի նպատակն է սահմանափակել պտղի սեռի մասին տեղեկությունների տրամադրումը նախքան ծնունդը:

160. ՀԿ-ները զգուշավոր դիրքորոշում հայտնեցին այն կապի վերաբերյալ, որը ոմանք տեսնում են նախաձեռնաբերական շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականության և Հայաստանի ժողովրդագրական խնդիրների միջև, և ընդգծեցին, որ այս խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները չպետք է սահմանափակեն կանանց վերարտադրողական իրավունքները: Նախաձեռնության շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականությունը պետք է ձևակերպել որպես գենդերային հավասարության խնդիր, և ավելին պետք է անել առկա մտածելակերպը և գործելակերպը փոխելու համար իրազեկությունը բարձրացնելու և կրթության ոլորտներում:
161. Հանձնակատարը կոչ է անում հայաստանյան իշխանություններին՝ վավերացնել Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և աջակցել նախաձեռնության շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականությունն անօրինական դարձնելու ջանքերին: Հանձնակատարը նաև ցանկանում է ընդգծել Եվրոպայի խորհրդի և միջազգային այլ մարմինների ներկայացրած հետևյալ հանձնարարականների կարևորությունը. նորածին տղաների և աղջիկների թվաքանակների հարաբերակցության մասին արժանահավատ տվյալների հավաքում և դրանց միտումների կանոնավոր մոնիթորինգ, համապատասխան տեխնոլոգիաների էթիկական օգտագործման մասին ուղենիշների մշակում և խթանում, սեռով պայմանավորված ընտրողականությունը պայմանավորող անհավասարությունների խորքային պատճառների հետազոտում և հաղթահարում՝ ներառյալ հասարակությունում կանանց կարգավիճակի բարձրացում և հավասարության և խտրականության բացառման քաղաքականությունների արդյունավետ իրագործում, և օժանդակություն տղաներին և աղջիկներին հավասար չափով արժևորելուն:<sup>105</sup>

## 2.4 ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ

162. Իրավապաշտպան կազմակերպությունները և իրավապաշտպանները կարևոր դեր են կատարում մարդու իրավունքների ստանդարտների և պարտավորությունների պետության կողմից կատարման մակարդակը բարելավելու հարցում՝ ներառյալ կանանց իրավունքների և գենդերային հավասարության ոլորտում: Համակարգային մակարդակով իրականացվող գործողություններից գատ, նրանք նաև կոնկրետ և խիստ անհրաժեշտ աջակցություն են ցուցաբերում անհատների իրավունքների պաշտպանությանը: Նրանց գործունեությունը ներառում է կանանց իրավունքների վրա ազդող հիմնական խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկման շարունակական աշխատանքների մեջ մասնակցությունը, բռնությունից տուժած կանանց և նրանց երեխաներին հոգեբանական, բժշկական, կացարանային, աշխատանքի տեղավորման և իրավաբանական աջակցության տրամադրումը, կանանց իրավունքների պաշտպանության բարելավմանն ուղղված իրավական և քաղաքական փաստաթղթերի ընդունման ջատագովությունը և պետական քաղաքականությունների և միջոցառումների իրագործման և ազդեցության մոնիթորինգը:

### 2.4.1 ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

<sup>105</sup> Տե՛ս «Սեռով պայմանավորված ընտրական աբորտը խտրական է և պետք է արգելվի», Մարդու իրավունքների հանձնակատարի մեկնաբանությունները մարդու իրավունքների վերաբերյալ, 15-ը հունվարի, 2015թ.:

163. Իրավապաշտպանները և իրավապաշտպան կազմակերպությունները Հայաստանում սովորաբար կարողանում են ծավալել իրենց աշխատանքը՝ չհանդիպելով առանձնակի խոչընդոտների: Այնուհանդերձ, տարածված տեսակետներին հակադրվող՝ զգայուն կամ ժողովրդականություն չվայելող հարցերի հետ աշխատելիս նրանք իրենց աշխատանքում երբեմն հանդիպում են խոչընդոտների՝ ներառյալ սպառնալիքները և հարձակումները պետական և ոչ պետական սուբյեկտների կողմից:
164. Հանձնակատարը մտահոգիչ տեղեկություններ է ստացել կանանց իրավունքների և գենդերային հավասարության ոլորտներում ակտիվ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների դեմ ուղղված սպառնալիքների և հարձակումների ալիքի վերաբերյալ, որը տեղի է ունեցել 2013 թվականին՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի քննարկման և ընդունման առնչությամբ: Այս գործընթացը կատաղի ընդդիմություն էր առաջացրել գենդերային հավասարության նկատմամբ թշնամաբար տրամադրված որոշ խմբերի շրջանում, որոնք այն հավասարեցնում են «նույնասեռականություն քարոզելուն»: 2013 թվականի ամռանը ոստիկանության կայքում կարճ ժամանակով տեղադրվել էր անգամ նույնասեռականության քարոզն արգելող օրենսդրական առաջարկը, որը սակայն արագորեն հանվել էր այնտեղից: ՀԿ-ները հայտնեցին, որ այդ հակասությունից հետո պաշտոնյաները խուսափում էին «գենդեր» բառն օգտագործելուց, թեպետ այն գետեղված է Հայաստանի նկատմամբ կիրառելի միջազգային և ներպետական բազմաթիվ փաստաթղթերում:
165. Ստացված տեղեկությունների համաձայն, պահպանողական և ծայրահեղական խմբերն ապակողմնորոշող և հերյուրական տեղեկություններ էին տարածում իրավապաշտպան այն կազմակերպությունների և այն իրավապաշտպանների վերաբերյալ, որոնք սատարում էին օրենքի ընդունմանը՝ նրանց նկարագրելով որպես «ազգի դավաճաններ», «ընտանիք քայքայողներ» և «սպառնալիք հայկական արժեքների»: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն առջանց ունեցողությունների էր ենթարկվել, մասնավորապես՝ սպառնացել էին գենդերային հարցերի մասին բարձրաձայնելու համար պայթեցնել կենտրոնը և այրել կանանց իրավունքները պաշտպանողներին: Այդ սպառնալիքների հեղինակներին որևէ մեղադրանք չէր ներկայացվել: Ստացված որոշ տեղեկությունների համաձայն, պատգամավորներից մեկն անգամ ՀԿ-ի դեմ ուղղված բողոք էր ներկայացրել գլխավոր դատախազություն՝ պահանջելով քննության առարկա դարձնել կազմակերպությունը և նրա գործունեությունը:<sup>106</sup>
166. Վարչապետին կից կանանց հարցերով խորհուրդը 2013 թվականի նոյեմբերի 22-ին հայտարարություն հրապարակեց, որում մտահոգություն հայտնեց «գենդեր», «գենդերային հավասարություն» և «գենդերային ինքնություն» եզրույթների թյուրմեկնաբանության, ինչպես նաև կանանց իրավունքներով զբաղվող ՀԿ-ների դեմ ծավալված տեղեկատվական քարոզարշավի, սպառնալիքների և ունեցողությունների առնչությամբ: Խորհուրդը կոչ արեց իրավապահ մարմիններին առավել աջալուրջ լինել և կանխել նման դեպքերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ խստագույնս պատժել մեղավորներին: Խորհրդի հայտարարության մեջ նաև պարզաբանվում էին վերոհիշյալ եզրույթները՝ հստակեցնելով, որ Հայաստանը պարտավորություն ունի՝ վերացնելու գենդերահեն խտրականությունը: Խորհուրդը վերահաստատեց կառավարության հավատարմությունը՝ կանանց իրավունքները պաշտպանելու և ապահովելու առումով միջազգային և ներպետական իրավունքի նորմերով ստանձնած իր պարտավորություններին, մասնավորապես՝ հղում կատարելով Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության ռազմավարության իրագործմանը:<sup>107</sup> Հանձնակատարը դրական է գնահատում Կանանց հարցերով խորհրդի այս հայտարարությունը և քաջալերում է վերջինիս ավելի ակտիվ մասնակցությունը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի վերաբերյալ իրազեկության բարձրացման աշխատանքներին:

<sup>106</sup> Տե՛ս ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերի [համատեղ հաղորդագրությունը](#) Հայաստանի վերաբերյալ, 10-րդ սեպտեմբերի, 2013թ.:

<sup>107</sup> Տե՛ս Գենդերային հիմնախնդիրներով ԵԱՀԿ-ի գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Ջուն Ցայթլինի [գեկույցը](#), 2013թ.:

167. Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները և իրավապաշտպաններն այցի ընթացքում Հանձնակատարին տեղեկացրեցին, որ իրենք դեռևս հանդիպում են որոշակի խոչընդոտների և թշնամանքի, թեպետ 2013 թվականի համեմատ դրանց մակարդակը նվազել է: Հանձնակատարին տեղեկացրեցին, օրինակ, որ գենդերային կրթությունը միջնակարգ դպրոցի ուսումնական ծրագրում ներառելու թեմայով «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից 2014 թվականի ապրիլին կազմակերպած միջոցառումն ընդհատվել էր պահպանողական և ազգայնական խմբերի կողմից, որոնք փորձել էին հարձակվել ՀԿ-ի անդամների վրա: Ոստիկանությունն արդյունավետ քայլեր էր ձեռնարկել ընդհատումը բացառելու և հետագա սրացումը կանխելու ուղղությամբ:

#### 2.4.2 ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ

168. Լրատվամիջոցները կարևոր դեր են խաղում հանրային կարծիքի ձևավորման հարցում: Հանձնակատարը նկատեց, որ հայաստանյան լրատվամիջոցներում ավելացել է ընտանեկան բռնությանը և նախաձեռնյալ շրջանում պտղի սեռով պայմանավորված ընտրողականության խնդիրների լուսաբանումը: Այնուհանդերձ, նա գտնում է, որ լրատվամիջոցները Հայաստանում ավելին կարող են անել կանանց իրավունքների և գենդերային հավասարության, մասնավորապես՝ առկա իրավիճակի և օրենսդրության վերաբերյալ հանրային իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Որոշ լրատվամիջոցներ որոշ դեպքերում թշնամանք են դրսևորել մարդու իրավունքների և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների նկատմամբ:

169. Հանձնակատարն ուղղակիորեն անդրադարձավ կանանց նկատմամբ ատելության խոսքի դեպքերին. այս երևույթը դեռևս բավարար չափով լուսաբանված չէ Եվրոպայում: Կանանց նկատմամբ ատելության խոսքը և բռնության սերմանումը կանխելու, սահմանափակելու և նման երևույթների դեմ պայքարելու հարցում լրատվամիջոցների դերն ընդգծված է միջազգային փաստաթղթերում և ստանդարտներում՝ ներառյալ Կանանց նկատմամբ բռնության մասին կոնվենցիայում: Հնարավոր քայլերից կարող է լինել կանանց իրավունքները և գենդերային հավասարությունն առաջ մղող իրավապաշտպան կազմակերպություններին և իրավապաշտպաններին լրատվամիջոցներում տրամադրվող տարածքի ավելացումը:<sup>108</sup>

#### *Եզրակացություններ և հանձնարարականներ*

170. Հանձնակատարն ընդգծում է, որ իրավապաշտպան կազմակերպությունների և իրավապաշտպանների նկատմամբ սպառնալիքները և հարձակումները պետք է արդյունավետորեն քննել և համարժեքորեն պատժել՝ նպատակ հետապնդելով բացառել դրանց կրկնությունը: Հանձնակատարը քաջալերում է իշխանություններին՝ համերաշխություն հայտնել իրավապաշտպան կազմակերպություններին և իրավապաշտպաններին՝ այնպես, ինչպես արդեն վարվել է Վարչապետին կից կանանց հարցերով խորհուրդը: Ընդհանուր առմամբ, Հանձնակատարը քաջալերում է իրավապաշտպան ՀԿ-ների և պետական կառույցների, ինչպես նաև քաղաքական կառույցների միջև աշխատանքային ավելի ամուր կապերի ձևավորումը:

171. Հանձնակատարը շեշտում է կանանց իրավունքների և գենդերային հավասարության հետ կապված խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկումը և պատկերացումները բարելավելու գործում լրատվամիջոցների կարևոր դերը:

172. Եվ վերջում՝ ևս մեկ կարևոր հանգամանք. Հանձնակատարը ցանկանում է ընդգծել, որ կանանց իրավունքներին և կարգավիճակին առնչվող խնդիրները վերաբերում են ողջ հասարակությանը: Նա խորապես այն հանդգնում է, որ տղամարդիկ պետք է ավելի մեծ

<sup>108</sup> Տե՛ս «[Կոնկրետ պայքար է անհրաժեշտ մղել կանանց հասցեագրված ատելության խոսքի դեմ](#)», Մարդու իրավունքների հանձնակատարի մեկնաբանությունները մարդու իրավունքների վերաբերյալ, 6-ը մարտի, 2014թ.:

դերակատարում ունենան և լիովին ներգրավված լինեն ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ խտրականության դեմ պայքարին ուղղված ջանքերին:

EMBARGO UNTIL 10 MARCH 2015 AT 11 AM (PARIS TIME)